

208.1
U-15
1895


1053

ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՄԵՆԻԱՑ



0010



208.1
U-15

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կ

ՆՈՐ-ՌԻՒՏԻ

Տարունակութիւն եւ վերջ

Բարիքանագոշ

Հիմ. մ. յ. թ. թիւց

Ա. յ. թ. մատուցուցիչ

«Գնացէք այսուհետև աշա-
«կերտեցէք զամենայն հե-
«թանոսս... Ռւսուցէք նոյտ
«պահել զամենայն որ ինչ
«պատուիթեցի ձեզ»
Մտթ. թ. 19, 20.

ԳՈՐԾՔ ԱԹԱԳԵԼՈՅ

36295 1003
34/52

ՀԱՏՈՒՔ.

Աշխատասիրեց

ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆՏ


Սրա նիւթի մշակութիւնը կտպագրուի առանձին գրքով



ՏՓԽԻՄ

Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի եւ ՀԱԿ.
Միքայելեան փող. տուն № 81.

1895



11398
18-10-1

Дозволено цензурою. Тифлисъ, 30-го Ноября 1895 г.

Հստ հրամանի Սրբազնագոյն Քահանայապետի
ազդիս՝ ՏԵԱՌԻՆ ՏԵԱՌԻՆ ՄԿՐՑ2Ի Ա. գձեռազիրս Սրբ-
րազան պատմութիւն Նոր-ուլստի Գործք-առաքելոց
յակնարկեալ՝ նշինչ գտի ՚ի սմա հակառակ բնագրին
և ուղղամիտ վարդապետութեան Հայաստանեայցս
սուրբ եկեղեցւոյ:

ՍՈՒԳԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՁԵԱՆՑ
՚ի 20 նոյեմբերի 1895 ամի
՚ի սուրբ էջմիածին:

2001



Ա Վ Պ

Զմոռացուած խոստում կատարում եմ այսօր՝ հրա-
տարակելով Սրբազն պատմութեան երրորդ հատորը—
«Գործք առաքելոց»-ը, բայց առ այժմ աշակերտական մասը
միայն։ Այն սկզբունքները, որոնք ես ընդունել եմ նախ-
կին երկու հատորները հրատարակելիս, նոյնը և սրա մա-
սին է—որ ամենաընտափը գասագիրքը հէնց բնագիրն է,
Սուրբ գիրքն է։ Այն արգելքները, որոնք չին և նոր ուստի
վերաբերմամբ յիշուած են անցեալում, թէ ինչու բնագիրը
չէ տրում սաների ձեռը, անփոփոխ է և այստեղ՝ սակաւ
բացառութեամբ։

Մեր մէջ լոյս տեսած սրբազն պատմութիւնները
սովորաբար երկու հատորի մէջ են ամփոփուած—չին և
նոր ուստի։ Նորը պարունակում է իւր մէջ աւետարանները,
իսկ Գործք առաքելոցը հարևանցի կերպով՝ իրքն մի յա-
մլուած, աւելցրած են գասագիրերի վերջը։

Ես այդ նիւթը՝ «Գործք առաքելոց»-ը առանձին հա-
տոր եմ կազմել, որովհետեւ անհրաժեշտ եմ համարել նրան
ի մասնաւորի ուսանելը—հեթանոսների առաքեալ Պաւ-
լոսին պէտք է լաւ ճանաչել։ Նա՝ որ այնքան զգուշու-
թեամբ, հոգատարութեամբ է վարուել մանուկ քրիստո-
նէութեան հետ։ Նա՝ որ տքնել է Քրիստոսի վարդապետու-
թեան էութիւնը պարզաբանելու աշխարհին։ Նա՝ որ այն-
քան պատերազմեր է մղել քրիստոնէութիւնը սխալ ըմ-


բռնող հակառակորդների դէմ. նա՝ որ աստուածային ու-
սումն այն աստիճան պարզաբանել է թէ տեսականապէս
և թէ գործնականապէս, որ մարդկային ըմբռնողութեան
հասկանալի է կացուցել. կարճ՝ նա՝ որ ուսուցել է մեզ
թէ ինչ է քրիստոնեայ ասածդ, ինչ է օրէնք, աւետա-
րան, յանցանք, պատիժ, շնորհք, հաւատ, արդարութիւն,
Քրիստոս, Աստուած, բարի գործ, սէր, յոյս, խաչ
այս նիւթը մասնաւոր ուշադրութեան պիտի արժանանայ
քրիստոնեայ գալոցներում—ե՞ս առաւել այն ուսումնա-
րաններում, ուր հոգեսը հովիւներ են պատրաստում: Պը-
կայուած կարծիք է, որ եթէ Պօղոս չէր եղել, քրիստո-
նէութիւնը հրէութեան մէջ կուլ կդնար—քրիստոնէութիւ-
նը մի տեսակ հրէութիւն էր ըմբռնուում: Պօղոսն էր միայն
որ ճիշտ էր հասկացել Փրկչի երկնային վարդապետութիւ-
նը. Պօղոսն էր, որ քրիստոնէութիւնը հրէութեան սահ-
մանափակ՝ նեղ շրջանից հանեց և նրան համաշխարհային
կրօնի կերպարանքը առուաւ: Այս պատճառով էլ քրիստո-
նեայ սաները պէտք է ի մօտոյ տեղեկանան պօղոսնան
ըմբռնողութեան եղանակի հետ: Մեր դասադրերն ըստ
մեծի մասին Պօղոսի կենսագրութիւնն են աւանդում, շատ
քիչ անդամ հետամուտ լինելով տասնեերեքերորդ առա-
քեալի քրիստոնէական հայեացքներին: Անա այս թերին
լրացնելու դիտաւորութեամբ ես անջատեցի նիւթը և ա-
ռանձին հատոր կազմեցի, որպէսզի սաներին հնար լինի
ծանօթացնել այն առաքեալի գործերի հետ, որ իբաւամբ
պարծենում էր միւսների առաջ՝ թէ ինքը միայնակ ամե-
նից աւելի է գործել:

րակելու: Գործք առաքելոցը կարելի է աւանդել համա-
ռօտ կերպով երկդասեան դպրոցների հինգերորդ բա-
ժանմունքում բատ «կանոնը»-ի, իսկ թեմական դպրոցնե-
րում չեն սխալուի, եթէ երրորդ դասարանի առանձին
նիւթ որոշեն: Յիշատակուած իմաստների իրական ըմբռո-
նումը, մանաւանդ զլուկի 12. ուղեցոյցը հրատարակելուց
յիտոյ միայն հասկանալի կլինի:

Վերջացնելով իմ խօսքը՝ կցանկայի, որ այս զըքոյկը
ևս նոր բարեկամներ շահէ, իսկ հներին իրենց հաւատոյ
մէջ ամուր պահպանէ:

ՍԱՀԱԿ ՔՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

ՏՓԽԹ
30 հոկտ. 1895 թ.



Նիւթի ընտրութիւնը և ստորաբաժանումներն աւելի
պարզ կլինին, երբ միջոց կլինի սորտ ուղեցոյցը հրատա-
պարզ կլինին,

I.

1

ՀԱԳԵԳԱԼՈՒՑ

Ա.

Դորձք առաքելոց*) գլ. թ. 1—13:

Երբ Յիսուս երկինք համբարձաւ Զիթենեաց
լերան վրայից, առաքեալները երուսաղէմ վերադար-
ձան և ամենքն էլ միաբան՝ միասին սպասում էին
Սուրբ Հոգոյ գալստեանը: Համբարձումից տասն
օր անց, որ Պենտէկոստէ էր կոչում, այսինքն Զատ-
կից յիշուն օր յետոյ, առաւտեան դէմ յանկարծ
երկինքը գոռաց, սաստիկ քամի բարձրացաւ, եկաւ
լցուեց այն տունը, ուր առաքեալները ժողոված՝
սպասում էին և ամեն մինի գլխի վրայ կրակի բո-
ցի պէս՝ լեզուի ձեռվ լոյս երևաց: Առաքեալներն
իսկոյն Սուրբ Հոգով լցուեցան և նրա շնորհընվ
սկսեցին զանազան օտար լեզուներով խօսել: Ուրիշ
երկրներից շատ երկիւզած հրէաներ Երուսաղէմ ուխտ

*) Հետեւեալ հատուածներում կյիշուին միայն գլուխն
ու տունը՝ առանց կրկնելու «Դորձք առաքելոց» բառերը:

Էին եկել: Երբ երկնքից իջնող ձայնը լսեցին, վագեցին, այնտեղ եկան և տեսան, որ ամենքն էլ զանազան լեզուներով էին խօսում—մէկը պարսկերէն, միւսը պարթերէն. երբորդը հռովմայեցոց լեզուով, չորրորդը արապերէն...: Այս բանի վրայ ժողովուրդը շատ զարմացաւ և իրար ասում էին. «Զէ որ սոքա բոլորն էլ գալիլիացիներ են, տեսէք ի՞նչպէս մեր լեզուներով խօսում և պատմում են Աստուծումեծամեծ գործերը, այս ի՞նչ պիտի լինի»: Ումանք էլ ծաղր անելով ասում էին. «Մրանք հարբել են»:

Բ.

(թ. 14—36)

Այն ժամանակ Պետրոսը միւս առաքեալների հետ մի բերան դարձած՝ պատասխան տուաւ նրանց և ասաց. «Ով հրէաստանցիներ և Երտսաղէմում բընակողներ, լաւ լսեցէք ասածներիս, մենք հարբած չենք, որովհետեւ գեռ ես առաւտեան ժամի երեքն է, (մեր ժամի ի՞ննը) այս ժամին մարդ զինի չի խմի, մենք չոգուվ Սրբով լցուած ենք, ի՞նչպէս որ Աստուծ Յովելիա մարդարէի բերանովն ասել է. «Հեղից հոգւոյ իմմէ՛ ՚ի վերայ ամենայն մարմնոյ եւ մարդարէասցին ուստերը ձեր եւ դստերը ձեր...»: Յետոյ խօսքը Յիսուսի վրայ դարձնելով՝ ասաց. «Լսեցէք, նով խրայէլացիներ, Յիսուս նազովրեցուն, որին Աստուծ ուզարկեց և որը ձեր մէջ շատ հրաշըներ գործեց և ապացուցեց, որ ինքը Մեսսիան է. դուք

առաք, վայտի վրայ խաչեցիք: Աստուծած նրա մահուան կապանները քանդեց, յարովթիւն տուաւ, որովհետեւ հնարաւոր չէր, որ նա մահուանից յաղթուէր: Այդ Յիսուսը մարդարէների գուշակովթեան համաձայն յարովթիւն առաւ, երկինք համբարձաւ, այնտեղից մեզ համար Սուրբ Հոգին ուզարկեց, որի նշանն արդէն գուք տեսնում էք մեզ վրայ: Քաջ գիտացէք, ովլ խրայէլացիներ, որ ձեր սպասած օծեալ Տէրը, ճշմարիտ Մեսսիան՝ հենց այն Քրիստոսն էր, որին գույ խաչեցիք»:

Յ.

(թ. 37—41)

Ժողովուրդը, երբ այս քարոզը լսեց, զղաց: Նրանցից շատերը գալիս էին Պետրոսի և միւս առաքեալների մօտ ու ասում էին. «Ի՞նչ անենք»: Պետրոսն էլ ասում էր նրանց. «Ապաշխարեցէք և մկրտուեցէք Յիսուս Քրիստոսի անունով, ով կմկրտուի, Սուրբ Հոգւոյ պարգևը կընդունի»: Սրա նման ուրիշ շատ խօսքերով յորդորում էր նրանց և ասում. «Հեռացէք, ազատեցէք ձեզ այդ չար, անարժան ազգիցը»: Պիտրոսի քարոզից յետոյ՝ երեք հազար հոգի մկրտուեց:

Յ.

(թ. 42—47)

Երեք հազար հաւատացեալները չէին հեռանում տաճարից, այլ միշտ և հանապազ լսում էին առա-

քեալների քարոզները։ Բոլոր հաւատացեալները միասին էին հաց ուտում և միասին աղօթում—իմ և քո ասած բանը նրանց մէջ չկար, ամեն բան հասարակաց էր։ Հարուստները ծախում էին իրանց կայքը և նրանով էին հոգում աղքատների կարիքները։ Աղօթքի ժամանակ ամեն օր տաճարում միասին էին լինում և հացը միասին էին ուտում—աղքատ և հարուստ օրհնում, փառարանում էին Ստեղծողին։ Աստուած առաքեալների ձեռքով շատ հրաշքներ էր գործում. ժողովուրդը քաշում էր նրանցից. հաւատացեալները օրէց օր աւելանում էին։

Հաւատամք եւ ՚ի Սուրբ Հոգին յանեղն եւ ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ՚ի մարգարէս, որ էջն ՚ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալն եւ բնակեցաւ ՚ի սուրբսն։

Հաւատում՝ ենք Սուրբ Հոգուն, որ անեղ եւ կատարեալ Աստուած է, որ խօսեց օրինաց եւ մարգարէների եւ աւետարանների միջոցով։ Որ Յորդանան գետն իջաւ՝ Առաքուածին (Քրիստոսին՝ Աստուածանից ուղարկուածին) քարոզեց եւ սրբերի մէջ ընակուեցաւ։

2

Ա Ն Ա Ն Ի Ա Ե Ի Ս Ա Փ Ի Ր Ա

(Դ. 32—37. Ա. 1—11.)

Քրիստոսի նոր հաւատացեալները՝ մի սիրտ, մի հոգի դարձած՝ իրանց ունեցած չունեցածը բե-

րում առաքեալներին էին յանձնում, որ նրանք հաւատացեալների հոգեոր և մարմնաւոր պէտքերի համար գործ գնեն։ Նրանց մէջ ոչ ոք կարօտութիւն չունէր, որովհետեւ ով աղքարակ կամ տներ ունէր, ծախում և փողը առաքեալներին էր յանձնում։ Ցովսէփի անունով մէկը, որ վերջը Բառնաբաս կոչուցաւ, մի աղքարակ ունէր, ծախոց և նրա գինը առաքեալներին տուաւ։

Բայց սրանցից մէկ մարդ՝ Անանիա անունով այդպէս շարաւ—սա իւր Սափիրայ կնկայ հետ միաբանա՞ իրանց աղքարակը ծախեցին, փողի մի մասը մօտները պահեցին, իսկ միւս մասը տարան և առաքեալներին յանձնեցին։ Պետրոսն իմացաւ այս մարդու խարերայութիւնը, գնաց նրա մօտ և յանդիմաներով ասաց. «Անանիա, ինչնւ դու սատանային լսեցիր, Սուրբ Հոգուն խարեցիր և փողը թագցրիր, իմացիր որ դու սրանով ոչ թէ մարդ, այլ Աստուծուն ես խաբում»։ Անանիան հենց որ այս խօսքը լսեց, տեղնուռտեղը Աստուծու պատիժը կրեց—վայր ընկաւ և հոգին աւանդեց։ Ծառաները սկատանեցին նրան և տարան թագեցին։ Սափիրան ոչինչ չգիտէր, թէ իւր մարդուն ինչ է պատահել։ Երեք ժամից յետոյ, երբ սա ես Պետրոսի մօտ եկաւ, առաքեալը հարցրեց նրան. «Ճշմարիտ է, Սափիրա, որ այնքանով ծախեցիր աղքարակը»։ Կինը պատասխանեց. «Այս, այնպէս է»։ Պետրոսը սրան ես յանդիմանեց ու ասաց. «Թուր երկուագ էլ խօսք էր կա-

պել, որ Սուրբ Հոգին փորձէք, ահա այն անձինքը,
որոնք քո մարդուն դրան առաջ թաղիցին, քեզ էլ
այնտեղ կտանեն և կժաղղեն»։ Սավիրան վայր ըն-
կաւ, յանկարծամահ եղաւ, նրան էլ տարան և թա-
ղեցին իւր մարդու մօտ։ Այս պատիժը մեծ ահ ու
երկիւղ ձգեց ամենի վրայ։ Հաւատացեալների թիւր
աւելի և աւելի էր բազմանում։

«Զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն
է»։ I. Տաթ. Զ. 10։

«Ոչ թէ դու Աստուած կամիս զանօրէնութիւն եւ ոչ
բնակին առ քեզ չարք, մի անօրէնք բնակեցին առաջի
աշաց քոց»։ Սղմ. ե. 4։

«Անօրէնք եղին յամեր յանկարծակի. սատակեցան,
պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»։
Սղմ. հր. 19։

«Աստուած հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս
իւրեանց»։ Թ. ա. Հոմ. բ. 6։

«Մի խարիք, Աստուած ոչ արհամարհի, զի զոր ինչ
սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեսցէ»։ Թ. ա. Գաղ. Զ. 7—8։

«Մի զանձէք ձեզ զանձս յերկրի, ուր ցեց եւ ուտիճ
ապականեն...»։ Մաթ. Զ. 19—21։

«Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ . . .»։
Մաթ. Զ. 33։

«Արդ խնդիր է ի մէջ հազարապետաց, եթէ ոք հա-
ւատարիմ գացի»։ I. Թ. ա. Կորնթ. դ. 2։

«Յամենայն ժամ աղքատս ընդ ձեզ ունիք...» Մըկ.
Ժդ. 7։

«Սիրեսցես զընկեր քո . . .»։ Մաթ. իր. 39։
«Որ ոչն կամիցի գործել՝ եւ կերիցէ մի»։ Թ. ա.
Թաղ. դ. 10։

3

ԱՐԵՎԱԿԵՑԼՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՃԵՆԻ ԱԹԵՇ Ա.

(գ. 1—26)

Պետքոս եւ Յովհաննէս բարձ. ատենի առաջ:

Մի անգամ Պետքոսը և Յովհաննէսը երեկոյեան
իննը ժամին տաճար զնացին աղօթելու։ Տաճարի
այն դրան առաջ, որ գեղեցիկ էր կոշտում՝ ՚ի ծնէ մի
կաղ էր նստած և անցուզարձ անողներից ողորմու-
թիւն էր խնդրում։ Կաղը տեսաւ առաքեալներին,
աղաշեց և ողորմութիւն խնդրեց նրանցից։ Պետքո-
սը Յովհաննէսի հետ միասին նրան նայեցին և ա-
սացին։ «Մեզ նայիր»։ Կաղը նրանց նայեց և յոյս
ունէր մի բան ստանալու։ Այն ժամանակ Պետքոս
պռաքեալն առաց. «Ես արծաթ և ոսկի չունիմ, ինչ
որ ունեմ, այն կտամ քեզ—նազովրեցի Յիառոս Քրիս-
տոսի անունով վերկաց և գնա»։ Այս ասաց, հիւան-
դի ձեռից բռնեց և բարձրացրեց։ Կաղը բժշկուե-
ցաւ, սա ևս նրանց հետ տաճար դնաց, որ չնոր-
հակալութիւն անէ և փառք տայ Աստուծուն։ Ժո-
զովուրդը տեսաւ կաղին մանգալիս և Աստուծուն

օրհնելիս. ամենքը ճանաչում էին նրան, որ սովորաբար նստում էր տաճարի գեղեցիկ կոչուած դրան մօտ և անշուղարձ անողներից ողորմութիւն էր խնդրում։ Ազօթքից յետոյ կաղը չէր հեռանում Պետրոսից և Յովհաննէսից՝ մինչև որ գուրս եկան արտաքին գաւիթը՝ որ կոչում էր Սոլոմոնի սրահ։ Ժողովուրդը խռնուեց նորա շուրջը և զարմանում էր։

Երբ այս բանը տեսաւ Պետրոսը, ասաց. «Ո՞վ իսրայէլացիներ, ինչու էք զարմանում, ինչու էք մեզ վրայ կասկածանքով նայում, կարծէք թէ մենք մեր զօրութիւնով և քաջութիւնով լինիք արած, որ դա ման է գալիք։ Մեր պապերի՝ Աբրահամի հսանկի և Յակովի Աստուածը փառաւորեց իւր որդի Յիսուս Քրիստոսին, որին դուք մատնեցիք և ուրացաք Պիղատոսի առաջ։ Պիղատոսը դատեց՝ արդար գտաւ նրան և կամեցաւ արձակել, բայց դուք այն Սուլրին, Արդարին ուրացաք և նրա փոխանակ խնդրեցիք, որ մի մահապարտ չնորհեն ձեզ։ Դուք սպանեցիք կեանքի առաջնորդին, որին Աստուած մեռելներից յարութիւն տուաւ և որին մենք վկայ ենք։ Ան հաւատը, որ դուք ունէիք գէպի Յիսուս, թէ նա Խորայէլի փրկիչն է, այսօր՝ այս ձեր ճանաչած կտղի բժշկութեամբը, հաստատեց։ Եւ այն հաւատը, որ այս հիւանդի մէջ ծագել էր գէպի Քրիստոս, իրան բժշկութիւն տուաւ ձեր աշքի առաջ։ Գիտեմ Յիսուսին հասցրած ձեր շարութիւններն անդիտութեամբ են կատարուել, ինչպէս և ձեր

իշխաններն արին, բայց Աստուած, ինչ որ առաջուց մարգարէնների բերանով յայտնել էր, թէ Յիսուս պիտի չարչարուի, բոլորն էլ կատարեց։ Ուրեմբն զղացէք և դարձի եկէք, որ ձեր գործած մեղքերը ջնջուին։

Մովսէսը ձեր հայրերին ասել է, թէ Աստուած ձեր եղբայրների միջից ինձ նման մարգարէ կյարուցանէ ձեզ համար, նրան լսեցէք ամեն բանում— ինչ որ ձեզ կասէ կատարեցէք։ Նա՝ որ վստահութիւն կունենայ չմել այն մարգարէին, ժողովուրդը նրան կմահացնէ։ Բոլոր մարգարէները՝ Սամուէլիցն սկսած մինչև մեր օրերը, մարգարէացան և յայտնեցին այս ամենը։ Դուք էք այդ մարգարէների և այդ ուխտի որդիքը, որն Աստուած մեր հայրերի հետ հաստատեց և Աբրահամին ասաց—ըստ զաւակի ձեռքով պիտի օրհնուեն երկրիս բոլոր ազգերը։ Աստուած նախ ձեզ համար ուղարկեց իւր որդի Յիսուսին, որ ձեզ օրհնէ, որ ձեզանից ամեն մինը յետ գառնայ իւր չարութիւնից»։

(η. 1—31)

Առաքեալները գեռ այս քարոզը չէին վերջացրել, որ սրտնեղեղով վրայ հասան քահանայապետները, տաճարի իշխանները և սաղուգեցինները՝ երկուսին էլ բռնեցին ու բանտարկեցին մինչև առաւօտ, որովհետեւ արդէն երեկոյ էր։ Այս քարոզութեան հետևանքն այն եղաւ, որ այդ օրը հինգ հազար հոգի

Հաւատացեալ դարձան։ Առաւօտեան Աննա և Կայիշ-
փա քահանայապետների առաջ ժողով արին, սբանց
էլ այնտեղ բերեցին և սկսան հարցնել, թէ ում զօ-
րութիւնով կամ անունով գուք կաղին ոտք տուիք։
Այն ժամանակ Պետրոսը Սուրբ Հոգուով լցուած՝ ա-
սաց. «Ով ժողովրդի իշխաններ և խրայէլի երեց-
ներ, այս ինչ զարմանալու բան է, մենք այսօր
հարցաքննուում ենք լոկ այն պատճառով, որ մի հի
ւանդ մարդու բարութիւն ենք արել—բժշկել ենք
Յիսուս Քրիստոսի անունով, որին գուք խաչեցիք,
որին Աստուած յարութիւն տուաւ և բոլոր ստեղ-
ծուածների զլուխ դրաւ, այնպէս որ առանց նրան
մարդ փրկութեան չի կարող հասնել»։ Հրէից իշխան-
ները տեսնելով Պետրոսի և Յովհաննէսի համարձակ
և խորիմաստ խօսքերը՝ զարմանում էին, որովհետեւ
սրանց ճանաչում էին իրեւ ռամիկ, տղէտ մարդիկ,
որոնք Յիսուսի հետ շրջում էին։ Միւս կողմիցն էլ
տեսնելով բժշկուած կաղին իրանց մօտ կանգնած՝
պատպանուած մնացին։ Ուստի հրամայեցին նրանց
ատենից գուրս գնալ, իսկ իրանք խորհուրդ արին
իրար հետ և ասացին. «Ի՞նչ անենք այս մարդկան-
ցը, Երուսաղէմի մէջ ընակուողներին բոլորին էլ
յայտնի է, թէ սրանք ինչպիսի հրաշք գործեցին,
այդ մենք չենք կարսղ ուրանալ։ Որպէսզի ժողովրդի
մէջ շտարածուի, կանչենք դրանց, պատուէր տանք,
սաստենք, որ Յիսուսի մասին այլ ևս ոչինչ չխօ-
սեն։ Կանչեցին և պատուիրեցին, որ Յիսուս Քրիս-


տոսի անունով ամենելին չխօսեն։ Իսկ Պետրոս և
Յովհաննէսը պատասխան տուին և ասացին. «Միթէ
կարելի բան է, որ Աստուծու հրամանը թողնենք և
ձեզ լսենք, մենք չենք կարող մեր տեսածը և լսածը
չըարողելք։ Ճարահատած սպառնացին և արձակե-
ցին. չհամարձակեցան ոչինչ պատիժ տալ նրանց,
որովհետեւ վախենում էին ժողովրդից, որ իւր աշքով
տեսել էր, թէ ինչպէս քառասուն տարեկան կաղը
բժշկուեց և գրա համար էլ Աստուծու անունը վա-
ռաբանում էր։ Պետրոսը և Յովհաննէսը եկան և
պատմեցին այս ամենը միւս առաքեալներին և հա-
ւատացեալներին։ Ամենքը փառք տուեցին Աստու-
ծուն։ Վերջը միասին աղօթք արին և խնդրեցին
Աստուծուց, որ իրանց ոյժ և կարողութիւն տայ
Քրիստոսի աւետարանը համարձակութեամբ քարո-
զելու և նոյնը հրաշքներով հաստատելու։ Իբրև նշան՝
թէ նոցա աղօթքը լսելի է եղել, շարժուեցաւ այն
տեղը, ուր ժողովաված էին։ Ամենքը Սուրբ Հոգով
լցուեցան և Աստուծու խօսքը համարձակութեամբ
էին քարոզում։

6.

Տասներկու առաքեայները բարձ. ատենի առաջ

(b. 12-41)

Առաքեալները բազմաթիւ նշաններ և հրաշքներ
էին գործում Ժամանակը. մը հաւատացեալներն ա-



մենքը միասին Սովորոնի սրահումն էին, իսկ նոքա՝ որոնք դեռ ևս չէին պատկանում հաւատացեալների խմբին, չէին վստահանում խառնուել նրանց հետ։ Փողովուրդը մեծ համարումն ունէր այս համայնքի մասին՝ որպէս սուրբ միաբանութեան։ Այր և կին հաւատացեալների թիւը քանի գնում բազմանում էր։ Շատերը հիւանդներին պատզարակներով բերում և գնում էին այն ճանապարհի վրայ, որտեղից Պետրոսը պիտի անցնէր, որպէսզի նրա շուաքը հիւանդի վրան ընկնի և բժշկուի։ Ոչ թէ միայն Երուսաղէմից, այլև շրջակայ քաղաքներից հիւանդներ էին բերում առաքեալների մօտ, որոնք ձեռք էին գնում նրանց զլսին և բժշկում էին։ Այս հրաշքները տեսնողներից շատերը հաւատում էին Քրիստոսին. մի տեսակ յարգանք էին զգում գէպի առաքեալները և չէին վստահանում վնասել նրանց։ Բայց քահանայացեալը և սադուգեցիները սաստիկ նախանձից դրդած՝ այլ ևս չկարողացան համբերել, առաքեալներին բըռնել տուին և բանտ դրին։

Աստուծու հրեշտակը զիշերով բանտի դռները բաց արաւ, դուրս հանեց նրանց և ասաց. «Գնացէք տաճարը և քարողեցէք, ինչպէս առաջ։ Առաքեալները տաճար գնացին և քարոզում էին։ Քահանայապետն առաւտեան վաղ բանտը մարդ ուղարկեց, որ առաքեալներին հանեն այն տեղից և բերեն։ Մրանք գնացին և բանտում մարդ չգտնելով, դարձան և ասացին. «Գնացինք և տեսանք, որ բան-

տը կողպուած է ամենայն զգուշութեամբ, պահպանները գրան մօտ հսկում էին, բանտի դուռը բաց արինք և ոչ ոք չդտանք ներսը»։ Երբ քահանայապետը և տաճարի իշխաններն այս խօսքերը լսեցին, զարմացան և ասում էին, թէ սա ի՞նչ պիտի լինի»։ Մի մարդ եկաւ և ասաց. «Զեր բանտարկած մարդիկն այժմ տաճարում քարոզում են»։ Իշխանը սպասաւորների հետ միասին տաճար գնաց և առաքեալներին՝ առանց բունութեան յետ բերաւ, որովհետև երկիւզ էին կրում ժողովրդից, որ չքարկոծէ իրանց։ Երբ նրանց ատեան բերին, քահանայապետն ասաց. «Ճէ որ ձեզ պատուիրելով պատուիրեցինք՝ Յիսուսի Քրիստոսի անունով այլ ևս շքարոզել. ամբողջ Երուսաղէմը ձեր աղանդով լցրիք. դուք ուզում էք մեզ յանիրավի յանցաւոր դուրս բերել, որպէսզի այն մարդու (Յիսուսի) արիւնը մեզ վրայ ձգէք»։ Պետրոսը միւս առաքեալների հետ պատասխան տուաւ և ասաց. «Աստուծուն աւելի պէտք է հնազանդել քան թէ մարդոց»։ Այսպիսի համարձակ խօսքերով վկայեցին Յիսուսի Քրիստոսի մասին և նրանց անօրէն վարմունքները երեսներին տուին, այնպէս որ այս բաները լսելով՝ աւելի խիստ կատաղեցին և որոշեցին սպանել առաքեալներին։

Մի փարիսեցի, որի անունն էր Գամաղիէլ, հրամայեց առաքեալներին փոքր ժամանակով հեռանալ, դարձաւ ժողովականներին և ասաց. «Այս մարդկանցը արձակեցէք, ոչինչ մի անէք զրանց, եթէ սրանց

գործը մարդկային է, ինքն իրան կոչնշանայ: Օրի-
նակի համար՝ փոքր առաջ Թեզաս անունով մէկը,
նրանից յետոյ Յուղա գալիլիացին մի քանի մարդ-
կանց զլսից հանեցին, բայց վերջը ցիր ու ցան
եղան, կորան, դնացին, իսկ եթէ Աստուածանից է,
իմացած լինիք, որ ոչինչ չէք կարող անել—գուցէ
աստուածամարտ էլ համարուէք»: Գամազիէլի խօսքին
թէկ ամենքն էլ հաւանութիւն տուին, բայց և
այնպէս առաքեալներին կանչեցին, ծեծեցին, նորից
պատուիրեցին, որ Յիսուսի անունով չքարոզեն և
ապա արձակեցին: Առաքեալները ուրախ սրտով հե-
ռացան ատենիցը. Նրանք ցնծում էին, որ արժանի
եղան Յիսուսի պատճառով անարգանք կրելու. չէին
դադարում թէ տաճարում և թէ տներում ուսուցա-
նելու և աւետարանելու նրա մասին, որի համար
հալածանք էին կրում:

Թ. ա. Գաղ. ե. 22. «Իսկ պտուղ հոգույն այս է,
սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղց-
րութիւն, բարութիւն, հաւատք, հեղութիւն, ժուժկալու-
թիւն»

Հոգու պտուղները սրանք են—սէր, ուրախու-
թիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրու-
թիւն, բարութիւն, հաւատք, հեղութիւն եւ ժուժկա-
լութիւն:

4

Ե Թ Ո Վ Պ Ա Յ Ի Ն Ե Բ Ք Ի Ն Ի Ն

(Ա. 5—8. 26—40.)

Փիլիպպոս սարկաւազը եկաւ Սամարիայի քա-
ղաքներից մինը և քարոզում էր Քրիստոսի աւետա-
րանը: Ժողովուրդը սիրով էր լսում սրա քարոզնե-
րը և աչքով տեսնում էր Յիսուս-Քրիստոսի անու-
նով ցոյց տուած նշանները—շատ անդամալոյժներ
և կաղեր բժշկում էին:

Սրանից յետոյ Աստուծու հրեշտակը հրամայեց
Փիլիպպոսին, որ գնայ Երուսաղէմ և Գազա քաղաք-
ների ճանապարհի վրայ, ուր անապատէ: Փիլիպ-
պսը, երր այնտեղ հասաւ, տեսաւ, որ մի ներքինի
կառքով գնում էր: Այս ներքինին Եթովպացւոց թա-
գուհու գանձապետն էր, Երուսաղէմ ուխտ էր գնա-
ցել, վերադառնում էր: Փիլիպպոսը Սուլբ Հոգւոյ
ազգմամբ մօտեցաւ սրան և տեսաւ, որ Եսայիա
մարգարէի գիրքն է կարգում: Փիլիպպոսն ասաց.
«Արդեօք կարդացած հասկանում ես»: Նա պատաս-
խանեց և ասաց. «Ինչպէս կարող եմ հասկանալ՝
մինչեւ որ մէկն ինձ չմեկնէ» և Փիլիպպոսին աղա-
շեց, որ կառքը բարձրանայ և նստէ իւր մօտ: Ներ-
քինու կարդացածը Եսայի մարգարէի այն խօսքե-
րըն էին, որ Քրիստոսի մասին ասում է. «Ոչխարի
պէս մորթելու տարան, գառան նման բուրդը խու-
զողի առաջ բերանը բաց չարաւ, ձայն չհանեց»:

Ներքինին Փիլիպպոսին հարցրեց. «Մարգարէն այս խօսքերը մւմ համար է ասել, իւր՝ թէ ուրիշի համար»: Փիլիպպոսն այն ժամանակն սկսաւ տեղն ու տեղը Քրիստոսի մասին քարոզել և քրիստոնէական հաւատը սովորցնել նրան: Ճանապարհը շարունակում էին: Երբ հասան մերձագայ ջրի ափին, ներքինին ասաց. «Ահա զուր, ինչն է արգելում ինձ, որ ես մկրտուեմ»: Փիլիպպոսն ասաց. «Եթէ ամբողջ սրտովդ հաւատում ես, կարելի է»: Ներքինին պատասխանեց և ասաց. «Հաւատում եմ, որ Յիսուս Քրիստոսն Աստուծու որդին է»: Հրամայեց որ կառքը կանգնէ, երկուսն էլ իջան ջրի ափը և Փիլիպպոսը մկրտեց ներքինուն: Երբ ջրից գուրս եկան, Աստուծու հոգին յափշտակեց Փիլիպպոսին և այլ ևս շտեսաւ նրան—ներքինին ուրախ-ուրախ շարունակում էր ճանապարհը: Աստուծ Փիլիպպոսին Ազովոս քաղաքը տարաւ: Մինչև Կեսարիա գալը Փիլիպպոսը շրջում էր քաղաքներում և տւետարանում էր:

Մտթ. եւ Յ. «Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից»:

Թ. ա. Հոմ. Ժ. 17. «Հաւատք ՚ի լսելոյ են, լուր ՚ի բանէն Քրիստոսի»:

Հաւատքը յառաջանում է լսելուց, իսկ լսելը՝ Քրիստոսի խօսքից:

ԿՈՒՆԵԼԻՈՍ ՀԵՐԻԿԻՐԱՊԵՏԻ ԴԱՐՁԵ

(Ժ. 1—48)

Պաղեստինացւոց Կեսարիայում իտալացի կոչուած զնդից մի հարկւրապետ կար՝ անունը Կոռնելիոս: Սա թէ հրէայ չէր, այլազգի էր, բայց բարեպաշտ և աստուածավախ մարդ լինելով՝ ամեն ժամանակ ողորմութիւն էր տալիս աղքատներին—նրա աղօթքն առ Աստուած անսկական էր: Մի անգամ իններորդ ժամին, երբ սա աղօթում էր, Աստուծու հրեշտակը երկեցաւ նրան և ասաց. «Կոռնելիոս»: Սա նայեց նրան, զարհուրեց և ասաց. «Ի՞նչ է, Տէր»: Տէրն ասաց. «Քո աղօթքը և տուած ողորմութիւնը Աստուծուն ընդունելի եղան. մարդ ուղարկիր Յոպալէ քաղաքը և կանչել տուր Պետրոս կոչուած Սիմօնին, նա հիւր է կաշէզործ Սիմօնի մօտ. նրա տունը ծովից հեռի չէ. նա կգայ և կսովորցնէ քեզ, թէ ինչ պիտի անես, որ փրկուես»: Երբ հրեշտակը հեռացաւ նրանից, Կոռնելիոսը կանչեց իւր ծառաներից երեք հոգու. պատմեց նրանց այս ամենը և Յոպալէ ուղարկեց Պետրոսի ետեից: Սպասաւորները, երբ քաղաքին մօտեցան, հենց այդ ժամանակ Պետրոսը տանիքն էր բարձրացել աղօթելու: Ճաշի ժամանակ էր. առաքեալը սովեց և կամենում էր ուտել: Յանկարծ տեսաւ, որ երկինքը բացուեցաւ և այնտեղից՝ չորս ծայրից բըռ-

նած մի կտաւ իւր առաջն իջաւ։ Այս կտաւի մէջ կար ամեն տեսակ չորբոտանի կենդանի, սողուն և թռչուններ։ Պետրոսն այս բանի վրայ զարմացած՝ նայում էր։ Երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Վեր կաց, Պետրոս, մորթիր և կեր»։ Պետրոսն ասաց. «Քան լիցի, ես գեռ իմ բերանը պիղծ բան չեմ գրել»։ Երկրորդ անգամ ձայն եկաւ երկնքից, որ ասում էր. «Աստուծու սրբած բանը դու պիղծ մի համարիր»։ Այս խօսքերը երեք անգամ կրկնուելուց յետոյ՝ անօթը երկինք վերացաւ։ Պետրոսը զարմացած մտածում էր, թէ ի՞նչ է նշանակում այս տեսիլը։ Ահա, հենց այդ բոպէին Կոռնելիոսի ուղարկած մարդիկը կաշէգործ Սիմօնի տունը որոնելով՝ գրանը կանգնեցին և հարցնում էին. «Սիմօն կոչուած Պետրոսն այստեղ է հիւր»։ Պետրոսը դեռ ևս մտածում էր այն տեսիլը նշանակութեան մասին, որ Սուրբ Հոգին ասաց նրան. «Ահա երեք մարդ քեզ որոնում են, նրանց ես եմ ուղարկել, ոչնչի վրայ մի կատկածիր»։ Պետրոսը տանիքից վայր իջաւ և Կոռնելիոսից ուղարկած մարդկանցն ասաց. «Ես եմ, որին որոնում էր, ի՞նչ էր կամենում»։ Նրանք ասացին. «Աստուծավախ Կոռնելիոս հարիւրապետը, որ բոլոր հրէաներից, իբրև բարի մարդ ճանաչուած է, հրեշտակից հրաման ստացաւ քեզ իւր մօտ կանչելու և դռւ պէտք է տաես նրան, թէ նա ի՞նչ պիտի անէ»։ Պետրոսը ներս կանչեց և հիւր ընդունեց նրանց։

Միւս օր Պետրոսը Յոսկէում եղած մի քանի եղբայրների հետ գնացին Կեսարիա։ Կոռնելիոսը կանչել էր իւր ազգականներին և բարեկամներին ու սպասում էր Պետրոսին։ Երբ առաքեալը տուն մտաւ, Կոռնելիոսն առաջ գնաց և ոտներն ընկնելով՝ երկրպագութիւն էր տալիս։ Պետրոսը ձեռքից բռնեց, կանգնացրեց և ասաց. «Վեր կաց, ես ևս քեզ նման մի մարդ եմ։ Կոռնելիոսի հետ խօսելով ներս մտաւ և գտաւ այնտեղ շատ մարդիկ ժողովուած։ Պետրոսն ասաց. «Դու ևս գիտես, որ հրէաների օրէնքին գէմ է այլազգիների մօտ գնալը և նրանց հետ խառնուիլը, բայց Աստուծած ինձ տեսիլքով յայտնեց, որ այսուհետեւ այս խտրակներըն այլ ևս չպիտի լինին, դրա համար էլ եկայ քեզ մօտ, այժմ ասա, ինչնու ես կանչել ինձ»։ Կոռնելիոսը պատմեց. «Զորս օր սրանից առաջ՝ իններորդ ժամին աղօթքը էի անում. մի մարդ սպիտակ հանգերձ հազած՝ կանգնեց առաջս և ասաց—Կոռնելիոս, քո աղօթքը լսելի եղաւ և քո տուած ողորմութիւնները յիշուեցան Աստուծու առաջ, մարդ ուղարկիր Յոսկէի և կանչել տնեւր Սիմօն կոչուած Պետրոսին, նա կաշէգործ Սիմօնի տանը հիւր է, որի տունը ծովից հեռի չէ. նա կգայ և քեզ կսովորցնէ, թէ ինչ պիտի անես։ Ես իսկոյն քեզ մօտ մարդ ուղարկեցի և դու լաւ ես արել, որ եկել ես։ Ահա մենք ամենքս քո առաջը ժողոված ենք՝ քեզնից Աստուծու պատուէրները լսելու։ Այն ժամանակ Պետ-

բոսը բերանը բաց արտւ և ասաց. «Աստուած մարդոց անձնաւորութեան չի նայում, ով երկիւղած է և արդարութիւն է գործում՝ Աստուծու առաջ ընդունելի է։ Դուք զիտէք, որ Աստուած խաղաղութիւնը Յիսուս Քրիստոսի ձեռքով քարոզեց. դուք զիտէք, թէ ինչ պատահեց Հրէաստանում՝ Գալիլիայից սկսած, Յովհաննէսի քարոզած մկրտութիւնից յետոյ. թէ ինչպէս Աստուած նազարէթցի Յիսուսին օծեց Հոգւով Սրբով, որ շրջեց երկրի մէջ՝ ամենին բարիք անելով, որ սատանայից բռնուածներին բըժկեց, որովհետև Աստուած նրա հետն էր։ Մենք վկայ ենք այն ամենին, որ Հրէաստանում և երուսաղէմում գործեց, որին դուք փայտից կախեցիք և այնպէս սպանեցիք։ Աստուած նրան յարութիւն տուաւ երրորդ օրը և յայտնի արաւ՝ ոչ թէ միայն բոլոր ժողովրդին, այլև մեզ՝ Աստուածանից առաջուց ընտրուած վկաներիս. նրա հետ կերանք և խըմեցինք՝ նրա մեռելներից յարութիւն առնելուց յետոյ։ Նա պատուիրեց մեզ ժողովրդին քարոզելու և վկայելու, որ նա Աստուածանից սահմանուած կենդանեաց և մեռելոց դատաւորն է։ Բացի դրանից բոլոր մարդարէները վկայում են, որ նրան հաւատացողը մեղքերին թողութիւն կստանայ»։

Պետրոսը զեռ ևս չէր վերջացրել իւր խօսքը, որ Սուրբ Հոգին իջաւ այնտեղի բոլոր ունկնդիրների վրայ։ Պետրոսի հետ եկող վեց հաւատացեալները զարմացան, որ հեթանոսներին ևս Սուրբ Հոգը

պարզել չնորհուում էր, որով նրանք իրանց աշքով տեսնում էին, թէ ինչպէս Կոռնելիոսը և նրա մօտ ժողովուած այլազգիները իրանց բերանով զոհանում և փառաբանում էին Աստուծուն։ Այն ժամանակ Պետրոսը պատասխան տուաւ և ասաց. «Ո՛վ կարող է զուրն արգելիլ, որ սրանք չմկրտուեն, որոնք Սուրբ Հոգին ընդունեցին, ինչպէս և մենք»։ Եւ նրանց հրամայեց, որ Յիսուս Քրիստոսի անունով մկրտուեն։ Պետրոսին խնդրեցին, որ մի քանի օր իրանց մօտ մնայ։

I. թ. Տմթ. բ. 4. «Աստուած գամենայն մարդիկ կամի զի կեցցեն եւ ՚ի զիտութիւն ճշմարտութեան եկեսցեն»;

Մաթ. ե. 3. «Երանէ աղքատաց Հոգւով, զի նոցա է աղքայութիւն երկնից»;

Մրկ. ժդ. 16. «Որ հաւատայ եւ մկրտեսցի, կեցցէ եւ որ ոչն հաւատայ, դատապարտեսցի».

6

**Ե Օ Թ Ն Ս Ս Բ Ի Ա Գ Ն Ե Բ Ի Լ Ւ Տ Բ Ա Ի Թ Ի Ի Ն Է Ե Ի
Փ Ա Ղ Ա Վ Ա Ղ Ք Ա Տ Ա Ց Հ Ա Գ Ե Բ Ա Ր Զ Ա Ի Թ Ե Ա Ն**

(զ. 1—8)

Հաւատացեալները մի սիրտ և մի հոգի էին, նրանց մէջ իմ և րո ասածը չկար, այլ ամեն բան հասարակաց էր—ով ինչ ունէր, բերում առաքեալներին էր յանձնում և սրանք էլ հոգում էին աղքատների նիւթական կարիքները։ Այդ օրերում, երբ հաւատացեալների թիւը շատացաւ, առաքեալներն

այլ ևս չէին կարողանաւմ նրանց վրայ կանոնաւոր հոգս տանել, ուստի տրտունջներ եղան, որ Պաղեստինում բնակուող հրէայ աղքատների վրայ աւելի ուշադրութիւն է դարձնուում՝ քան թէ դրսից եկող հելենախօս հրէայ աղքատների վրայ:

Այս պատճառով առաքեալներն աշակերտներին ժողովի կանչեցին և ասացին. «Վայել չէ մեզ, որ Աստուծու խօսքը թողած՝ սեղանին ծառայենք: Ուրիմն, եղայրներ, ձեր միջից ընտրեցէք եօթն վըկայուած մարդիկ, որոնք Սուրբ Հոգւոյ իմաստութիւնով լցուած լինին, դրանք աղքատների սեղանի հոգսը կտանեն, իսկ մենք կազօթենք և կքարողենք»: Այս առաջարկութիւնը ժողովականներին հաճոյ թուեցաւ և ընտրեցին եօթը վկայուած անձինք: Ընտրուած անձինքը սրանք են—1. Ստեփաննոս, որ Սուրբ Հոգւով լցուած մի անձն էր, 2. Փիլիպոս, 3. Պրոքորոն, 4. Նիկանովրա, 5. Տիմովնա, 6. Պարմենա և 7. Նիկոլայոս: Սրանց կանգնացրին առաքեալների առաջ, որոնք ազօթեցին նրանց համար և ձեռները դլմներին դնելով՝ իրաւունք տուին նորընտիրներին՝ հոգ տանելու հաւատացեալներին: Այս բանից յետոյ Յիսուսին հետեղող աշակերտների թիւը խիստ բազմանում էր Երուսաղէմում, մինչև անգամ քահանաներից շատերը, որ դեռ պատահած չէր, հաւատացին, որ Քրիստոսը խոստացեալ Մեսիան է եղել:

«Հաւատամբ եւ ՚ի միմիայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի»:

Հաւատում ենք նաև միմիայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի:

«Եթէ բաժինք պաշտամանց են, այլ տէր նոյն է»:
I. թ. ա. Կրնթ. ժր. 5:

Պաշտօննաները զանազան են, բայց Տէրը նոյնն է:

Աստուծոյ գործակիցք եմք»: I. թ. ա. Կրնթ. դ. 9:
Մենք Աստուծու գործակիցներն ենք:

Մանանխոյ հատի առակը

Մի անգամ Յիսուս իւր ունկնդիրներին այս առակը պատմեց. «Երկնքի թագաւորութիւնը նման է մանանեխի հատիկի, որ մի մարդ իւր արտի մէջ ցանեց: Թէ և սա բոլոր սերմերից փոքրն է, բայց երբ աճում է, բոլոր բանջարներից մեծ է—ծառ է դառնում, այնպէս որ երկնքի թոշունները գալիս են և նրա ճիւղերի վրայ հանգստանում են»:

7

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՄԱՀ

(զ. 8—15. է. 1... ը. 1—4.)

Այս եօթն ընտրուածների մէջ, որ սարկաւագ կոչուեցան, գլխաւորը սուրբ Ստեփաննոսն էր՝ մի բարի և Սուրբ Հոգւոյ շնորհքով լցուած մարդ: Աստուած սրա ձեռքով շատ հրաշքներ գործել տուաւ

ժողովրդի մէջ: Սուրբ Ստեփաննոսը իւր շնորհալիք քարոզութիւններով և վիճաբանութիւններով պապանձեցնում էր հրէաներին, որոնք չկարողանալով պատասխանել նրա ասածներին, սկսեցին զրապարտել, թէ լսեցինք, որ նա հայրոյանք էր խօսում Աստուծու և Մովսէսի դէմ: Զգապարտողները Ստեփաննոսին ատեան տարան քահանայապետի առաջ, երկու սուստ վկայ գտան, որ ասում էին. «Մենք լսեցինք, որ այս մարդը քարոզում էր, թէ Յիսուս նազովրեցին այս տեղը պիտի կործանէ և Մովսէսի տուած օրէնքները փոխէ»: Ատենում նստողները նայեցին Ստեփաննոսին և տեսան, որ նրա երեսը հրեշտակի երեսի նման փայլում է:

Քահանայապետը հարցրեց. «Արդեօք այդ բաները ճիշտ են»: Այն ժամանակ սուրբ Ստեփաննոսը շնորհալի խօսքերով ցոյց տուաւ, որ իւր քարոզածները Յիսուս Քրիստոսի մասին ճշմարիտ են և հրէից ազգի խստաբարութիւնը երեսներին տալով՝ ասաց. «Խստապարանոցներ, սրտով և ականջով շը թլիքատուածներ, դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակում էք ձեր նախնեաց նման: Ձեր հայրերը որ մարդարէին չհալածեցին և չսպանեցին. Նրանք առաջուց պատմեցին Արդարի մասին, որին դուք հիմա մտանեցիք և սպանեցիք»:

Այս խօսքերը լսելով՝ զայրանում էին իրանց մէջ և ատամները կրծտացնում: Իսկ Ստեփաննոսը Սուրբ Հոգուով լցուած՝ նայեց դէպի երկինք, Աստու-

ծու փառքը տեսաւ և Յիսուսին նրա աջ կողմում կանգնած»: Նա ասաց. «Ահա տեսնում եմ երկինքը բացուած և Մարդոյ Որդին Աստուծու աջ կողմում կանգնած: Երբ այս խօսքերը լսեցին, բարձրաձայն աղաղակեցին, ականջները խցեցին և կատաղած ձևով յարձակուեցան Ստեփաննոսի վրայ, բաղարկից դուրս տարան և սկսեցին քարկոծել: Այդ քարկոծմանը ներկայ էր Սաւուզ անունով մի հրէայ, որ վերջը առաքեալ դարձաւ Պօղոս անունով: Սա այն աստիճան թշնամի էր հաւատացեալներին, որ Ստեփաննոսին նահատակողների վերարկուներն ինքն էր պահպանում, որպէսզի նոքա ազատ կերպով քարկոծեն: Այս գործողութեան ժամանակը Ստեփաննոսն ազօթում էր և ասում. «Տէ՛ր Յիսուս, առ իմ հոգին»: Իսկ հոգին աւանդելու ժամանակը ծունկ չոքեց և բարձր ձայնով աղաղակեց. «Աստուծ, սլրանց գործածը մեղք մի համարիր»: Այս ասաց և հոգին աւանդեց: Ստեփաննոսի սպանմանը կամակից էր Սաւուզը:

Կատաղած ամբոխը երբ քաղաք վերադարձաւ, երուսաղէմում մեծ հալածանք բարձրացաւ հաւատացեալների դէմ—մտնում էին ազօթատները և ուժով ցրւում էին նրանց: Երուսաղէմի հաւատացեալները բացի առաքեալներից՝ երկիւզից փախան չըէառտանի և Սամարիայի գլուզերը, համաձայն Փըրկչի ասածին, եթէ մի քաղաքում կը հալածեն ձեզ, փախէք միւսը: Ամբոխի գայրոյթն այն աստիճանի էր,

որ հաւատացեալները չվստահացան Ստեփաննոսի մարմինը թաղել, այլ այդ պարտը կատարեցին Երուսաղէմում բնակուող բարեպաշտ հրէաները, որոնք՝ ճանաշելով նահատակուողի անմեղութիւնը, մեծ սուզ արին:

Թ. ա. Գաղ. դ. 18. «Հաւ է նախանձաւոր լինել 'ի բարիս յամենայն ժամ»:

Մտթ. իբ. 39. «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո»:

Մրկ. ը. 34. «Եթէ ոք կամի գալ զկնի իմ, ուրասցի զանձն իւր, եւ բարձցէ զիսաշ իւր եւ եկեսցէ զկնի իմ»:

Յայտ. Յովհ. ժդ. 13. «Երանի մեռելոց, որք 'ի Տէր հանգեան»:

II.

Պ Օ Զ Ո Ս Ա Թ Ա Ք Ե Ա Լ

8

Ս Ա Ի Ա Դ Ի Գ Ա Ր Շ Է Լ

(թ. 1—19)

Սուրբ Ստեփաննոսի նահատակութեան ժամանակ Սաւուղը ներկայ էր: Սա որքան ջատագով էր Մովսիսական օրէնքին, նոյնքան ատում էր Քրիստոսի աշակերտներին և հետամուտ էր նրանց հալածելու: Սաւուղն իշխանութեան սպասաւորների հետ մտնում էր ամեն ուրեղ և որտեղ հաւատացեալ

էր գտնում, բանտարկել էր տալիս: Նա սրանով չը բաւականացաւ, այլ երբ իմացաւ, որ հաւատացեալները Դամասկոս են փախել, գնաց քահանայապետի մօտ, հրաման առաւ նրանից, որ գնայ և այնտեղի հաւատացեալներին կապած Երուսաղէմ բերէ:

Երբ Դամասկոսին մօտեցաւ, երկնքից յանկարծ լոյս փայլատակեց: Սաւուղը գետնի վրայ ընկաւ և երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Սաւակ, Սաւակ, ինչո՞ւ ևս ինձ հալածում»: Սաւուղը գողալով հարցրեց. «Տէր ով ևս գուռ: Նորից ձայն եկաւ և ասաց. «Ես Յիսուս նազովիցին եմ, որին գու հալածում ես»: Սաւուղը նորից հարցրեց. «Տէր, ինչ կլամենաս, որ անեմ»: Նա էլ պատասխանեց. «Վեր կաց և գնա քալար, այնտեղ կիմանաս, թէ ինչ պիտի անես»: Սաւուղի հետ եղող մարդիկը ապշած, կանդնած էին, ձայնը լսում էին, բայց չէին տեսնում, թէ ով է խօսողը: Սաւուղը տեղից վեր կացաւ, նրա աչքերը կուրացել էին, ոչինչ չէր տեսնում, ուստի իւր հետ եղող մարդիկը ձեռիցը բըռնած՝ Դամասկոս տարան: Սաւուղը յուզուած էր— երեք օր ոչ ուտում և ոչ խմում էր:

Դամասկոսում կենում էր Յիսուսի աշակերտներից մինը, որի անունն էր Անանիա: Աստուած տեսմիլը ասաց նրան. «Անանիա»: Նա պատասխանեց. «Այստեղ եմ, Տէր»: Աստուած շարունակեց. «Վեր կաց և գնա այն փողոցը, որ ուղիղ է կոչւում, այնտեղ Յուզայի տանը Տարսոնացի Սաւուղին հար-

ցրու՝ նա զեռ ևս աղօթում է»։ Անանիան սկզբում վախեց, չուզեց գնալ—նա ասաց. «Են մարդու հահար ևս շատերիցը լսել եմ, թէ Երուսաղէմում ի՞նչ պիսի չարիք է հասցըել հաւատացեալներին։ Նա քահանայապետից իրաւունք է ստացել, որ Գամասկոս գայ և քո անուան հաւատացեալներին կալանաւորէ և Երուսաղէմ ուզարկէ»։ Աստուած ասաց նրան. «Գնա, մի վախենար, ես այն մարդուն ընտրել եմ, որ իմ անունը ամբողջ աշխարհի մէջ քարոզէ. նա ինձ համար շատ չարշարանքներ պիտի կրէ»։ Անանիան գնաց և գտաւ այն տունը, ուր Սաւուղն էր կենում. ձեռը նրա վլխին դրաւ և ասաց. «Սաւուղ եղբայր, վերև նայիր, այն տէր Յիսուսը, որ ճանապարհին քեզ երկաց, ուզարկեց ինձ քո աշքերը բրձշկելու, որպէսզի գու չոգւով Մրբավ լցուես»։ Այս խօսքերից յետոյ Սաւուղի աշքերից կեզեի պէս մի բան վայր ընկաւ, որից յետոյ խսկոյն տեսաւ. Սաւուղը վեր կացաւ, մկրտուեցաւ և մի քանի օր Գամասկոսում եղող աշակերտների մօտ մնաց։

Թ. ա. Եփս. թ. 8. «Զի շնորհօք նորա էք փրկեալ ՚ի ձեռն հաւատոցն»։

Որուինետեւ նրա (Յիսուսի Քրիստոսի) շնորհովն էք փրկուած հաւատոյ ձեռքով (միջնորդութեամբ)։

Մտթ. դ. 10. «Եղիցին կամք քո»։

❾
ՍԵՒՈՒՂԸ ԴԵՄԸՍԿՈՍՈՒԽ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ
(թ. 19—31)

Մկրտութիւնից յետոյ Սաւուղը հաւատացեալների մէջ մտաւ և սկսաւ քարոզել Քրիստոսի մասին, թէ նա է ճշմարիտ Մեսսիան՝ այնպէս որ՝ ով տեսնում և լսում էր, զարմանում էր և ասում. «Սա նա չէ, որ Երուսաղէմում հալածում էր Քրիստոսի խոստովանողներին և հենց զրա համար էլ հրաման ստացաւ քահանայապետից, որ հաւատացեալներին կապէ և Երուսաղէմ ուզարկէ»։ Սաւուղն աւելի և աւելի էր զօրանում այն հաւատով, թէ Քրիստոսն է խոստացեալ Մեսսիան և նոյնը քարոզում էր Գտմասկոսի հրէաներին։ Այս բանի համար հրէաները սաստիկ կատաղեցան Սաւուղի դէմ, զիշեր ցերեկ գուների մօտ պահապաններ էին նշանակել և ուզում էին նրան բռնել։ Այս նենգութիւնն իմացան աշակերտները. զիշերը զամբիւզով քաղաքի պարսպից կախ արեցին և Գամասկոսից Երուսաղէմ վախցրին։

Սաւուղը Երուսաղէմ դարձաւ. ցանկացաւ մըտնել այնտեղի հաւատացեալների մէջ, բայց սոքա առաջին անգամ երկիւղ կրեցին և չէին հաւատում, թէ Սաւուղը Յիսուսի աշակերտ է դաւել՝ մինչեւ որ Բառնաբասը առաքեալների մօտ քերաւ և ամենայն ինչ մանրամասնօրէն պատմեց—թէ ինչպէս Յիսուս Սաւուղին երկացել է, հետը խօսել է և Գամասկո-

սումը համարձակ կերպով քարոզել է Քրիստոսի մասին։ Սաւուղը Երուսաղէմում ևս սկսեց քարոզել հրէաներին և վիճաբանել նրանց հետ։ Այստեղ ևս նոյնը պատահեց, ինչ որ Դամասկոսում—հրէաները մտադրուեցան սպանել Սաւուղին, բայց, երբ հաւատացեալներն այս բանն իմացան, Կեսարիայի վրայով Տարսոն քտղաքը փախցրին։ Սաւուղի գարձով քրիստոնէական եկեղեցին խաղաղութիւն էր վայելում ամբողջ չրէաստանում, Սամարիայում և Գալիլիայում։ Հաւատացեալներն իրանց վարմունքով բարի օրինակ էին ներկայացնում՝ ի շինութիւն ամենի։ Հետեւում էին Սստուծու երկիւղին և Սուրբ Հոգույ մխիթարութեամբ էին լցուած։

Մաթ. ե. 10, 11. «Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից։ Երանի՛ է ձեզ յողժամ նախատիցեն զձեզ և հալածեցեն»։

Սդմ. ճիմ. 20. «Պահէ տէր զամեննեսեան.....»

10

ՍԵՒՈՒՂԻ ԸԹԵՔԵԼՅԱՆՆ ԸԹԵԶԻՆ ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆՆ

(ԺԳ. 1—12)

Ստեփաննոսի հալածանրի ժամանակ հաւատացեալները երկիւղից այս և այն կողմը ցրուեցին։ Դրանցից ոմանք էլ Անտիոք քաղաքն եկան և այստեղ հետզհետէ հաւատացեալների մի նոր խումբ

կազմեցին։ Բառնաբասը ևս այստեղ եկաւ, որտեղից Տարսոն գնաց և Սաւուղին հետն առած՝ վերադարձաւ Անտիոք, ուր մի տարու չափ քարոզելով՝ շատ հեթանոսների ևս հաւատացեալ դարձրեց։ Քրիստոնեայ անունն առաջին անգամ այստեղ տրուեց հաւատացեալներին։ Անա այդ ժամանակ Անտիոքի հաւատացեալների մէջ կային մի քանի մարգարէներ և վարդապետներ, այսինքն այնպիսի առաջնորդներ, որպիսիք էին Բառնաբասը, Նիւգէր կոչուած Միմէոնը, Զուկիոս Կիւրենացին, Հերովդէս չորրորդապետի սննդակից Մանայէնը և Սաւուղը։ Մի օր, երբ աշակերտները միասին աղօթում էին, Սուրբ Հոգին յայտնեց և ասաց. «Բառնաբասին և Սաւուղին որոշեցէք այն գործի համար՝ ինչի համար որ ես կանչել եմ, այն է կռապաշտների երկիրը քարոզութեան գնալ»։ Ամենքն աղօթք արին, ձեռը դրին նրանց վրայ և արձակեցին։ Սուրբ Հոգու ուլարկածները իջան Սելիկիա քաղաքը, իսկ այնտեղից էլ նաւեցին Կիպրոս և եկան կզու գլխաւոր քաղաքը՝ Սաղամինա։ Այստեղ հրէից ժողովրդանոցումը քարոզեցին խաչեալ Յիսուսի մասին։ Սոցա հետն էր իբրև Ժարգման և Հռովմայեցւոց լեզուին բաշ տեղեակ Յովհաննէսը՝ Մարկոս մականուանեալ։ Ճրջեցին ամբողջ կղզին և եկան Պափոս կոչուած քաղաքը, ուր կենում էր մի կախարձ՝ սուտ մարգարէ, Բարեյեսու անունով։ Սակար խաբերայութեամբը հետամուտ էր բգեշխի փոխանորդ Մերգի Պաւղոսին հաւատափոխ անելու,

որին Սաւուղը քրիստոնեայ էր զարձրել։ Սաւուղը սրա անունովն էլ փոխում է իւր անունը և այնուհետո փոխանակ Սաւուղի՝ կոչում է Պաւլոս կամ Պօղոս։ Պօղոս տռաքեալն այս բանի համար յանդիմանեց կախարդին և ասաց. «Ո՞վ խարեայ և սատանայի որդի, գու շարունակ հետամուտ ես Աստուծու ուղիղ ճանապարհը ծռելու, ուստի և Աստուծու պատժից չես կարող խուսափել—գու կոյր կլինես, արեի լոյսը մի առ ժամանակ չես տեսնի»։ Այլպէս էլ եղաւ—նա այլ ևս չէր տեսնում, ձեռը բռնող մարդ էր որոնում, որ առաջնորդէ իրան։ Սերդի իշխանն այս հրաշքը որ տեսաւ, աւելի ևս հաստատուեցաւ իւր հաւատի մէջ և խիստ զարմանում էր Տիրոջ վարդապետութեան վրայ։

(ԺԳ. 13—32. 37—52.)

Պօղոսը իւր խմբով Պափոսից հեռացաւ և եկաւ Պամփիլիայի Պերգէ քաղաքը։ Այստեղ Յովհաննէսը քաժանուեց նրանցից և դարձաւ Երուսաղէմ, իսկ նրանք Պերգէից եկան Պիսիդիայի Անտիոք քաղաքը։ Պօղոսը հրէից սինագոգը մտաւ քարոզելու։ Բստ սովորութեան, երբ օրէնքից և մարգարէութիւնից կարեռ հատուածները կարդաց, ժողովրդապետները մարդ ուղարկեցին նրանց մօտ և ասացին. «Եթէ ժողովրդին խրատելու և միսիթարելու համար է, խօսեցէք»։ Այն ժամանակ Պօղոսը տեղից վերկացաւ, ամբիոն բարձրացաւ, ձեռով նշան տրեց, որ ուն-

կընդիրները չհեռանան և այսպէս սկսաւ խօսել. «Ո՞վ խրայէլացիներ և դուք, որ Աստուծանից վախենում էք, լսեցէք իմ քարոզը։ Աստուծած բոլոր ազգերի միջից խրայէլին ընտրեց իրեն սեպհական ժողովուրդ. Եգիպտոսում, ուր նա որպէս պանդտիստ ապրում էր, բազմացրեց նրան, պաշտպանեց և իւր հզօր բազկովն այնտեղից գուրս բերաւ։ Քառասուն տարի շարունակ կերակրեց նրանց անապատումը։ Յեսուի ձեռով Քանանի եօթին ազգերին խորտակեց և նուաճած երկիրը նրանց տուաւ՝ որպէս ժառանգութիւն։ Յեսուից յետոյ չորս հարիւր յիսսուն տարու չափ դատաւորների ձեռով կառավարեց նրանց մինչև Սամուէլ մարգարէն. որանից յետոյ թագաւոր խնդրեցին՝ Աստուծած տուաւ նրանց Բենիամինի ցեղից Կիսի որդի Սաւուղին՝ որ ազգը 40 տարի շարունակ կառավարեց. Աստուծած Սաւուղին փոխեց, նրա տեղը Յեսուի որդի Դաւթին նշանակեց. սա նրա սրտի սիրած մարդն էր—նրա բոլոր կամքը պիտի կատարէր։ Դաւթի սերնդից՝ զաւակից Աստուծած, ինչպէս խոստացել էր, խրայէլացիների համար Յիսուս Փրկչին աշխարհ ուղարկեց։ Այս Յիսուս Քրիստոսի յայտնուելուց առաջ, այսինքն նախ քան նրա քարոզելը, Յովհաննէսը Յորդանանի ափերում խրայէլի ժողովրդին ապաշխարութեան մըկրտութիւն էր քարոզում։ Երբ Յովհաննէսը իւր ընթացքը կատարեց, ասաց—ես այն չեմ, որի տեղինձ ընդունում էք, բայց ահա զալիս է նա, որի

կօշիկների թեկերն արձակելու արժանի չեմ ես:
Դուք եղբայրներ, Աբրահամի զաւակներ, Աստուած
մեղ ձեզ մօտ է ուղարկել՝ փրկութեան այդ խօսքը
ձեղ քարոզելու: Երուսաղէմում բնակուողները և նրանց
իշխանները շնանաշեցին նրան. մարգարէների խօս-
քը, որ ամեն շաբաթ օրեր կարգացում էր,
հաստատեցին իրանց դատավճռով: Թէ ոչ մի պատ-
ճառ չդժան մահուան դատապարտելու, այնուամե-
նայնիւ Պիղատոսին խնդրեցին, որ մահու պատիժ
նշանակէ: Երբ որ նրա մասին բոլոր գրուածները
կատարեցին, խաչափայտից վար բերին և գերեզմա-
նի մէջ զրին: Բայց Աստուած նրան յարութիւն
տուաւ մեռեներից. այնուհետև շատերին երկեցաւ,
որոնք իւր հետ Գալիլիայից Երուսաղէմ էին եկել և
որոնք այսօր իւր վկաներն են ժողովրդի առաջ: Արդ՝
ով եղբարը, մեր քարոզութեամբ մեղաց թողութիւն
է աւետարանուում ձեզ և ուրեմն այն բաներից, որ
Մովսէսի օրէնքով, որպէս Աբրահամի որդիք, չկարո-
ղացաք արդարանալ, այժմ կարող էք, եթէ միայն
հաւատաք Յիսուս Քրիստոսին: Զգսյշ կացէք Երու-
սաղէմացիների և քահանայապետների նման մի վա-
րուէք, որ մարգարէի գրուածը ձեզ համար կատա-
րուած լինի, որ ասում է—տեսէք, անարդողներ և
զարմացէք, ես ձեր օրերում մի գործ եմ գործում,
եթէ որ մէկը պատմէ ձեզ՝ չէք հաւատայ»:

Ժողովարանից գուրա եկան. ունկնդիրները խըն-
դրում էին, որ միւս շաբաթ էլ նոյն բանը քարո-

գեն իրանց: Հրէաններից և նորահաւատ աստուա-
ծապաշտներից շատերը գնում էին Պօղոսի և Բառ-
նաբասի ետևից. սոքա էլ նրանց հետ խօսելով՝ հա-
համոզում էին «կալ մնալ՝ ի չնորհս Աստուածոյ»:

Միւս շաբաթ համարեա թէ ամբողջ քաղաքը
հաւաքուեցաւ Աստուածու խօսքը լսելու: Հրէանները,
երբ այս բազմութիւնը տեսան, նախանձով լցուե-
ցան, սկսեցին Պօղոսին հակածառել և հայհոյել: Եյն
ժամանակ Պօղոսը և Բառնաբասը համարձակ կեր-
պով՝ առանց երկիւզի մլատասխանեցին նրանց և
ասացին. «Աստուածու խօսքն առաջ ձեզ պիտի քա-
րոզուէր, բայց որովհետև զուք մերժեցիք և անար-
ժան դարձրիք ձեզ յաւիտենական կեանքի համար,
այս պատճառով էլ հեթանոսներին ենք բարոզում:
Աստուած մեղ այսպէս է պատուիրել և ասել. «Քեզ
հեթանոսների համար լոյս եմ նշանակել. դու պէտք
է նրանց համար փրկութիւն լինես մինչև երկրիս
ծայրերը»: Հեթանոսներն այս բանը լսելով՝ ուրա-
խանում էին և փառք էին տալիս Աստուածուն: Աս-
տուածու խօսքը տարածում էր ամբողջ գաւառի մէջ:
Բայց հրէանները զրզուեցին մի քանի աստուածապաշտ
և պարկեշտ կանանց և քաղաքի զիսաւորներին, հա-
լածանք յարուցին Պօղոսի և Բառնաբասի դէմ և
իրանց սահմաններից արտաքսեցին: Սոքա էլ իրանց
ոտքի փոշին թոթափելով՝ եկան իկոնիոն: Աշակերտ-
ները լցուած էին ուրախութեամբ և չոգուզ Մբրու:

1. Տմթ. բ. 2. «Աստուած զամենայն մարդիկ կամի
դի կեցցեն եւ ՚ի գլխութեան ճշմարառութեան եկեսցեն»:

Մաթ. իլ. 19. «Գնացէք եւ աշակերտեցէք...»:

Մաթ. ե. 6. «Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն
վասն արդարութեան, զի նորա յագեցին»:

11

ՅԵՐՈՒՆԾԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐՋ ԱՐՅՈՒԵԼԾԿԱՆ ԸՆԾԽԻՆ ՈՒՂԵՒՐՈՒԹԵԱՆ

(ԺԴ. 1—27)

Պօղոսը և Բառնաբասը վնացին Իկոնիայի ժո-
ղովարանը և այնտեղ ևս սկսեցին քարոզել: Քարո-
զութեան հետևանկըն այն եղաւ, որ բազմաթիւ հրէա-
ներ և յոյներ հաւատացեալ դարձան: Զհաւատացող
հրէաները զրգուեցին հեթանոսներին առաքեալների
գէմ: Կազմուեցաւ կուսակցութիւն—ոմանք առա-
քեալների կողմն էին, իսկ ոմանք հրէաների: Բանն
այն տևլլ հասաւ, որ չհաւատացող հրէաները և հե-
թանոսները իրանց իշխանների հետ միասին յար-
ձակուեցան Քրիստոսի աշակերտների վրայ և կա-
մենում էին քարկոծել: Իսկ սոքա խմանալով այս
բանը՝ փախան Լիւտրա և Դերբէ քաղաքները և
այնտեղ էին քարոզում:

Լիւտրայում ի ծնէ մի կաղ կար. սա սիրով
էր լսում Պօղոսի քարոզութիւնները: Առաքեալը, երբ
նկատեց, որ նրա մէջ հաւատ կայ, այն կռապաշտ

ժողովրդի առաջ բարձր ձայնով ասաց. «Քնզ եմ
ասում, Յիսոս Քրիստոսի անունով վեր կաց և ման
արի»: Կազմ բժշկուեցաւ, վեր կացաւ, ման էր զա-
լիս և վազում էր: Կռապաշտ ժողովուրդն այս հրաշ-
քը որ տեսաւ, այնպէս կարծեց թէ Պօղոսը և Բառ-
նաբասը իրանց կուռքերն են, ուստի զարմանալով
կանչեցին և ասացին. «Աստուածները մարդու կերպա-
րանք առած՝ երկնքից մեղ մօտ են իջել»: Բառնա-
բասին Դիսոի տեղ էին դնում, իսկ Պօղոսին չեր-
մէս էին անուանում: Դիսոի քուրմը վաղեց, որ կո-
վեր բերէ և առաքեալների առաջը զոհէ: Երբ այս
բանն իմացան Պօղոսը և Բառնաբասը, հանդերձնե-
րը պատառեցին և ասում էին. «Մարդիկ, այդ ինչ
էք անում, մենք ևս ձեզ նման մահկանացուներ ենք,
մենք եկել ենք ձեզ քարոզելու, որ այդպիսի ունայն
բանները թողնէք և գառնաք զէսի կենդանի Աս-
տուածը, որ ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովը
և ամեն ինչ, որ նրանց մէջն է: Այս ասելով հազիւ
թէ դադարեցրին ժողովրդին, որ զոհ չմատուցանէ:

Անտիոքի և Իկոնիայի հրէաները, երբ իմացան,
թէ առաքեալները շատերին քրիստոնեայ են դար-
ձրել, վեր կացան, եկան և ժողովրդին համոզեցին,
որ հեռացնեն քաղաքից: Քիչ էր մենում Պօղոսին
քարկոծ անեն և սպանեն: Աշակերտները շրջապա-
տեցին. այդ միջոցին Պօղոսը քաղաք մտաւ, իսկ
հետեւալ օրը Բառնաբասի հետ գնաց Դերբէ:

Այս քաղաքում շատերին աւետարանելուց յե-

տոյ՝ դարձան Լիւստրա, իկոնիոն և Անտիոք, յորդորեցին հաւատացեալներին չժուլանալ իրանց հաւատի մէջ՝ յայտնելով նրանց, որ շատ նեղութիւններ կրելով՝ պէտք է մտնել Աստուծու արքայութիւնը։ Ամեն մի քրիստոնէական համայնքի համար երեցներ՝ առաջնորդներ ձեռնապրեցին, ազօթք արեցին, ծոմ պահեցին և յանձնեցին նրանց այն Աստուծուն, որին իրանք հաւատում էին։ Մրանից յետոյ շրջեցին Պիսիդիայի միջով և ապա եկան Պամփիլիայի Գերգէ քաղաքը, ուր քարոզելով՝ դարձան Աստալիա։ Այստեղից նաւ նստեցին՝ հասան Անտիոք, որտեղից չնորհիւն Աստուծոյ հեռացել էին՝ կատարելու այն գործը, որ յանձնուած էր նրանց։ Երբ տեղ հասան, պատմեցին հաւատացեալներին այն ամենը, ինչ որ Աստուծ կատարել էր. ուրախ էին, որ հեթանոսների համար հաւատոյ գուռն էր բացուել։ Այստեղ բաւական ժամանակ մնացին աշակերտների մօտ։

I. Թ. ա. Կրնթ. դ. 9. «Զի Աստուծոյ գործակից եմք»։

Երեմիա Ժ. 3. 10. Զի ամենայն կուռք հեթանոսաց մնուակ են։ Այլ տէր Աստուծ մեր ճշմարիտ»։

I. Մովս. Ժ. 1. «Ես եմ Աստուծ քո, հաճոյ լեր առաջի իմ, եւ լեր անարատ»։

ՊՕՂՈՍ ԵՒ ՆԸՆԿԻՆ ԱՌԵՔԵԱԼՆԵՐԸ

(ԺԵ. 1—31)

Հաւատացեալների մէջ մի խնդիր վիճարանութեան նիւթ դարձաւ—հրէայ քրիստոնեայ դարձածներից ոմանը առում էին հեթանոս քրիստոնեայ դարձածներին. «Մինչև որ Մովսիսի օրէնքին համաձայն չժլփատուիր, չէք կարող փրկուել»։ Պօղոսը և Բառնաբասը շատ աշխատեցին այս վիճարանութեան վերջ դնելու, բայց ի զուր։ Վերջը որոշուեց Պօղոսի և Բառնաբասի հետ մի քանիսն էլ Երուսաղէմ գնան առաքեալների մօտ՝ այս խնդիր համար։ Քրիստոնեայ համայնքը ճանապարհ ձգեց սրանց։ Դորա անցան Փիւնիկէի և Սամարիայի միջով և այնտեղի քրիստոնեաներին պատմեցին, որ հեթանոսները ևս դարձել են—ամենքին էլ մեծ ուրախութիւն պատճառեց այս լուրը։ Երբ Երուսաղէմ հասան, առաքեալները սիրով ընդունեցին նրանց։ Այս խնդիրի մասին առաքեալներից և երեցներից ժողով կազմուեց 50 թուականին։ Փարիսեցի հաւատացեալներից ոմանք պնդում էին, թէ հեթանոսութիւնից քրիստոնէութեան դարձածներին անպատճառ պէտք է թլփատել և պատուիրել, որ Մովսիսի օրէնքը պահեն։ Երկար վիճարանութիւն եղաւ—ամեն կողմ իւր կարծիքն էր պաշտպանում։ Այն

ժամանակ Պետրոսը ոտի կանգնեց և սկսաւ խօսել. «Եղբայրներ, ձեզ քաջ յայտնի է, որ սրանից մօտաւորապէս 8 տարի առաջ, Աստուած որոշեց իմ ըերանով յայտնել հեթանոսներին աւետարանի խօսքը: Մրտագէտ Աստուածուածն ինքը վկայեց, որ նրանք արժանի են և դրա համար էլ Սուրբ Հոգին ուղարկեց նրանց համար, ինչպէս և մեզ: Ոչինչ խարութիւն չարաւ մեր և նրանց մէջ—այն հաւատը, որ հեթանոսներն ունեին, նրանով էլ մաքրեցին իրանց սրտերը: Ինչու էք Աստուծուն փորձում, թէ նա թոյլ կտայ մի այլ սրոշում անելու՝ քան թէ ինքն արել է. օրէնքի ծանր լուծը գնում էք հեթանոս քրիստոնեաների ուսին, մի լուծ, որ ոչ մեր հայրերը և ոչ մենք կարողացանք տանել. մենք՝ թլփատութիւնից քրիստոնեայ դարձածներս, ինչպէս և հեթանոսները, հաւատարապէս հաւատում ենք, որ Յիսուս Քրիստոսի շնորհովը երջանիկ պիտի դառնանք՝ փրկուենք»: Լոեց բազմութիւնը: Այնուհետեւ Յառնաբասը և Պօղոսը պատմում էին, թէ Աստուած ինչպիսի նշաններ և հրաշքներ է գործել իրանց ձեռովը հեթանոսների մէջ:

(13—19)

Երբ Յառնաբասը և Պօղոսը վերջացրին, ժողովի նախագահը՝ Յակովոս առաքեալը, յարուցած խնդրին մի որոշում տալու համար՝ ասաց. «Ե՛ղբարք, ինձ լսեցէք, Սիմոնը (Պետրոս) պատմեց թէ Աս-

տուած ինչպէս առաջուց այց արաւ հեթանոսներին՝ նոցանից իւր համար ժողովուրդ կազմելու: Այս բանը հաստատում է մարդարէի խօսքը, որ ասում է— սրանից յետոյ կդառնամ և Դաւթի կործանուած տունը կշինեմ, նրա աւերակները կնորոգեմ. «Որպէսդի խնդրեսցին մնացորդը մարդկան զտէր, եւ ամենայն հեթանոսք, յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ տէր, որ առնէ զայս ամենայն, յայտնի է՝ ՚ի յաւիտեանցն»: Ուստի ես ևս յարմար եմ համարում չնեղացնել հեթանոսութիւնից քրիստոնէութեան դարձածներին և դժուարութիւններ չներկայացնել, այլ թուղթ գրել նրանց և պատուիրել կարեորը»:

(22—31)

Այս որոշումը ամենքն էլ հաւանեցին և վճռեցին իրանցից ընտրուած մարդիկ ուղարկեն Անտիոք՝ Բառնաբասի և Պօղոսի հետ: Ուղարկուած մարդկանցից մինը Բարսաբա, որ և Յուղա էր կոշտում, իսկ միւսը Զիղան էր, Երուսաղէմի քրիստոնեաներից յարդուած մի անձն: Թուղթը գրեցին յունաց լեզուով, որովհետեւ Անտիոքումն այդ լեզուն էր ամենին հասկանալի: Նախագահ Յակովոսն ըստորագրեց: Ահա թղթի պատճէնը.—«Առաքեալնե» րիցս և երէցներիցս ողջոյն Անտիոքի՝ հեթանոսութիւնից գէպի քրիստոնէութիւն դարձած քրիստոնեայ եղբայրներին: Մենք լսեցինք, որ Հրէաստա-

Նից եկած մի քանի մարդիկ՝ առանց մեղ, ինքնանազլուխ ձեղ մօտ են եկել և խռովել են ձեր մըտքերը՝ որպէս թէ հեթանոսութիւնից քրիստոնէութիւն գարձողները պէտք է թլիփատուեն և Մովսիսի օրէնքները պահեն։ Դուք այդ խնդիրը պարզելու համար ուղարկել էիր Բառնաբասին և Պօղոսին մեղ մօտ որպէս պատգամաւորներ։ Ժողով եղաւ այդ մասին և որոշուեցաւ ժողովի վճիռը զրով յայտնելու ձեղ, այլ և նոյնը բերանացի աւանդելու համար, որոշեցինք Բառնաբասի և Պօղոսի հետ ուղարկել առանձին ընտրուած մարդիկ, այն է Յուղային և Շիղային, որոնք իրանց անձը նուիրած են Յիսուս Քրիստոսի անուանը։ Սուրբ Հոգուն և մեղ ես հաճոյ թուեցաւ, որ աւելորդ բեռը չդնենք ձեր ուսերին, բացի կարենը բաներից»։ Սորա գնացին Անտիոք, հաւատացեալներին ժողովեցին, թուղթը կարգացին—ամենքն էլ ուրախացան այս միտթարութեան համար։

Թ. ա. Գաղ. թ. 16. «Զայս գիտեմք եթէ ոչ արդարանայ մարդ ՚ի գործոց օրինաց, եթէ ոչ ՚ի հաւատոցն Յիսուսի Քրիստոսի, եւ մեք ՚ի Յիսուս Քրիստոս հաւատացաք, զի արդարացուք ՚ի հաւատոցն Քրիստոսի եւ ոչ ՚ի գործոց օրինաց, զի ՚ի գործոց օրինաց ոչ արդարացի ամենայն մարմին»։

Մենք գիտենք, որ մարդս չի արդարանում օրէնքի պատուիրածը կատարելով այլ (Մատթէոս ժք. 4) Յիսուս

Քրիստոսին հաւատալով։ Եւ մենք հաւատացինք Յիսուս Քրիստոսին, որպէսզի արդարանանք նրան հաւատալով և ոչ թէ օրէնքի պատուիրածը կատարելով, որովհետեւ (մարդըս որպէս սխալական, անկարող է ամենայն ճշտութեամբ կատարել օրէնքը) ոչ ոք չի կարող օրէնքի պատուիրածը կատարելով՝ արդարանալ։

Թ. ա. Եփս. թ. 8. «Զի շնորհօք նորա (Յիսուսի) էք փրկեալք ՚ի ձեռն հաւատոցն, եւ այս ոչ ՚ի ձէնջ, այլ Աստուծոյ պարզեւ է»։

Որովհետեւ նրա (Յիսուս Քրիստոսի) շնորհովն էք փրկուած՝ հաւատոյ միջնորդութեամբ և դա (որ դուք հաւատացել էք, ուստի և արդարացել) ձեզանից չէ, այլ Աստուծու պարզեւ է։

Թ. ա. Գաղ. թ. 21. «Ես ոչ անարգեմ զշնորհսն Աստուծոյ, զի եթէ յօրինաց անտի էք արդարութիւն, ապա Քրիստոս զուր մեռաւ»։

Աստուծու շնորհը ես չեմ անարգում, (նոցա նման, որոնք Աստուծու շնորհաց ձեռով փրկուելուց յետոյ՝ Մովսէսի օրէնքը փրկութեան համար անհրաժեշտ են կամենում մտածել) եթէ օրէնքի պատուիրածը կատարելով պիտի արդարանայինք, ուրեմն Յիսուս ի զուր տեղն է մեռել։

Թ. ա. Գաղ. թ. 10—12. «Զի որ միանգամ ՚ի գործոց օրինացն են, ընդ անիծիւք են, քանզի զրեալ է, թէ անիծեալ է ամենայն մարդ, որ ոչ կացցէ յամենայն զրեալն ՚ի զիրս օրինաց՝ առնել զամենայն։ Զի օրինօքն ոչ ոք արդարանայ առաջի Աստուծոյ, այն յայտնի իսկ է, զի արդարն, ասէ, ՚ի հաւատոց կեցցէ, բայց օրէնքն չեն ՚ի հաւատոց, այլ որ արացցէ զայն՝ կեցցէ ՚ի նոսին։

Նորա, որոնք օրէնքը չեն կատարում, ենթարկում

ևն օրէնքի նզովքին, որովհետև գրած է (Վ. Մովս. իէ. 26.)—նզովեալ է ամենայն ոք, որ չէ կատարում ամեն ինչ օրինաց գըքի մէջ գրածին համաձայն: Թէ միայն օրէնքը գիտենալով ոչ ոք չի կարող արդարանալ Աստուծու առաջ, այդ յայտնի է, որովհետև արդարը իւր հաւատովն է ապրում (իւր ունեցած հաւատի գորութեամբն է հասնում արդարութեան, երջանկութեան): օրէնքը հաւատքից չէ, այլ նրանց կատարողը միայն կարող է ապրել նրանով:

Թ. ա. Հոմ. թ. 12—15. «Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան, արտաքոյ օինացն եւ կորնչին, եւ որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն դատեսցին: Զի ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալը են առաջի Սստուծոյ, այլ առնելիք օրինացն արդարացցին: Այլ յորժամ հեթանոսք, որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ օրինացն գործեցին, նոքա որ զօրէնս ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք, որ ցուցանեն զգործո օրինացն՝ զըեալ՝ ի սիրտս իւրեանց, վկայութեամբ մտաց իւրեանց, եւ յանդիմանել զմիմեանս՝ ի խորհրդոց իւրեանց:

Այն ազգերը (որոնք Մովսէսի տուած օրէնքների նման օրէնքներ չունին) և մեղանչել են, զորօրինակ հեթանոսները, ուրեմն նրանք էլ՝ առանց իսիստ պահանջներ (որպիսիք օրէնքում դրած է) լինելու իրանց սրտումը գրուած օրէնքների համաձայն էլ կդատուեն և իրեն սոյնալիսի օրէնքների զանցառուք՝ կկորնչին, իսկ նոքա, որոնք Մովսէսի օրէնքը գիտէին (զոր. հրէաները) և այնպէս են մեղանչել, նոքա էլ կդատուեն ըստ այնո՞ւ նայելով թէ նոյն օրէնքը ինչ իրաւունք և ինչ արգելք է պատուիթում: Ոչ թէ օրէնքը լսողներն են Աստուծու առաջ արդար, այլ օրէնքի կատարողները: Հեթանոսները, որ Մովսէսի նման գրած օրէնքներ չունին, այլ իրանց բնու-

թեան մէջ դրուած իրաւացի և անիրաւացի զգացման համաձայն նոյն են գործել, ինչ որ տասն պատուիրանների օրէնքն է պահանջել, նոքա (հեթանոսները) որ 'ի վերուստ «յայտնեալ» օրէնք չունին, այլ իրանք իրանց համար օրէնք են, սրանք ցոյց են տալիս, թէ օրէնքը գործերը նրանց սրտում գրուած է՝ իրանց խղճմտանքի վկայութեամբը, որ նրանց մտքերը յանդիմանում է, եթէ չար է գտնուած:

Թ. ա. Հոմ. թ. 17—23. «Ապա թէ դու հրէայ անուանեալ ես, եւ յեցեալ ես յօրէնսն, եւ պարծիս յԱստուած, եւ զիտես զկամս նորա, եւ ընտրես զլաւն, եւ խրատեալ ես յօրինացն. վստահ ես յանձն քո առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիշ անզգամաց, վարդապետ տղայոց, ունել զկերպարանս զիտութեան եւ ճշմարտութեան օրինացն: Իսկ արդ որ ուսուցանես զընկերն՝ զանձն քո ոչ ուսուցանես, որ քարոզես չզողանալ՝ զողանաս, որ ասես չչնալ՝ չնաս, որ քարշիս՝ ի մեհենաց՝ զսեղանս կողոսլտես, որ օրինօքն պարծես՝ յանցանել ըստ օրէնսն զԱստուած անարգես»:

Եթէ դու քեզ հրէա ես անուանում և օրէնքի վրայ ես յենած(որպէս մի հաստատ գաւազանի, որ քեզ կառաջնորդէ գէպի կեանքի ճշմարիտ ուղին) և պարծենում ես Աստուածանով, (որ նա բացառապէս քո Աստուածն է). զիտես նրա կամքը և որովհետև դու օրէնքիցը խրատուած ես, ուստի և լաւն ես ընտրում (զանազանում ես իրաւացին անիրաւից): Քո անձի վրայ վստահութիւն ունես, որ կարող ես կոյրերին առաջնորդ լինել, խաւարում նստողների (հեթանոս) համար՝ լոյս՝ անմիտներին՝ խրատող, տղաներին՝ (տհաս) ուսուցանող—դոււ ունիս օրէնքումն այն ձեւը, որով կարող ես զիտենալ, թէ որն է

հշմարիտը: Ուրեմն՝ դու որ ընկերին (ուրիշին) ուսուցանում ես, քեզ միթէ չես ուսուցանի (եթէ այդպէս չանես, սխալ կլինի, քո բոլոր արդարութիւնն ունայն է). դու որ քարողում ես չգողանալ, միթէ ինքդ գողանում ես. դու՝ որ ասում ես չնութիւն չանել, միթէ ինքդ չընութիւն ես գործում. դու՝ որ մեհեաններից գարշում ես, միթէ սեղանները (տաճարը) կողոպտում ես: (Այս, այդ ամենը անում ես) դու պարծենում ես օրէնքով, բայց օրէնքի հակառակ գործելով՝ Աստուծուն անարդում ես:

Թ. ա. Հոմ. գ. 9—20. «Եւ արդ իւ իւիք առաւել իցեմք, ապաքին եւ ոչ իւիք, քանզի յառաջազոյն իսկ մեղադիր եղէաք հրէից եւ հեթանոսաց. ամեննեցուն ընդ մեղօք լինելոյ, որպէս եւ զրեալ է. ոչ ոք է արդար՝ եւ ոչ մի, եւ ոչ գոյ որ իմանայ, եւ ոչ ոք է որ խնդրէ զԱստուած. ամեներեան խոտորեցան 'ի միասին եւ անպիտանացան. ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն. ոչ ոք է մինչեւ 'ի մի: Գերեզման բաց է կոկորդ նոցա, լեզուք իւրեանց նենդաւոր եղեն. թոյնք իմից 'ի ներքոյ շրթանց նոցա, որոց բերանք անիծիւք եւ դառնութեամբ լի են: Երագ են ոտք նոցա հեղուկ զարիւն. բեկումն եւ թշուառութիւն 'ի ճանապարհն նոցա. եւ զճանապարհս խաղաղութեան ոչ ծանեան, ոչ է երկիւղ Աստուծոյ առաջի աշաց նոցա: Բայց զիտեմք, որ ինչ միանդամ օրէնքն ասեն, այնոցիկ որ ընդ օրինօքն են՝ ասեն, զի ամենայն բերան խցցի եւ դատապարտ լիցի ամենայն աշխարհ Աստուծոյ: Զի 'ի գործոց օրինաց ոչ արդարացի ամենայն մարմին առաջի նորա, քանզի օրինօքն է զիտութիւն մեղաց:

Այժմ մենք (հրէայքա) ինչո՞վ ենք աւելի (հեթանոսներից)—ոչնչով: Մենք առաջ էլ ցոյց տուինք, որ հրէա-

ները և հեթանոսները ամենքն էլ մեղաց (իշխանութեան՝ ուստի և պատժի) ներքոյ են, ինչպէս և զրած է (Հինութիւնութիւն մէջ) ոչ ոք արդար չէ. ոչ մի իմացող (խօսքը գործին համապատասխանող) չկայ, Աստուծուն խնդրող չկայ—ամենքն էլ (Աստուծու և նրա ճանապարհից) հեռացան և բոլորն էլ անպէտք գարձան. չկայ մէկն անգամ, որ Աստուծուն հաճելի գործ գործէ: Նոցա կոկորդը (որաեղից խօսքը գուրս է գալիս) նման է բաց գերեզմանի (որտեղից մահու ապականութիւն է բուրում). իրանց լեզուներովը նենդութիւն են անում (կեղծիք կայ նոցա խօսքի մէջ. չնայելով որ ազնիւ արտայայտութիւն ունին). իժի թոյն կայ նրանց շրթունքների տակ. ամեն անգամ, երբ խօսում են, բերանները լիքն են անէծքով և դաւնութիւնով: (Նոցա գործերը ևս նոյնն են): Դոցա ոտները արագընթաց են՝ արիւն թափելու համար. նըրանց անցած ճանապարհների վրայ կործանումն և թշուառութիւնն է (ամենուրեք, ուր զնում են, թշուառութեան հետքեր են թողնում): Խաղաղութեան ճանապարհն անյայտ է դրանց. Աստուծածային երկիւղ չկայ նրանց աչքի առաջ: Բայց մենք զիտենք—ինչ որ օրէնքը (Հին-ութիւնը) պատուիրում է, վերաբերում նոցա, որոնք օրէնքի տակն են (հրէից), որպէսզի ոչ թէ միայն հեթանոսների, այլև ամենքի (այլ և հրէից) բերանն էլ լոէ (հրէան չնախադասէ իրան հեթանոսից) և ուրեմն ամբողջ աշխարհն էլ (և հրէան և հեթանոսը) նրա դատասատանին ենթակայ է: Ուստի ոչ ոք օրէնքը տառացի կատարելով չէ կարող արդարանալ. օրէնքը մեզ յայտնում է միայն թէ մի բան արգելուած է կամ թույլատրուած (մենք զիտենք միայն), բայց ոյժ և զօրութիւն չէ տալիս մեզ օրէնքի ցոյց տուած յանցանքը հեռացնելու:

13

ՊՈՂՈՍԻ ԸԹԸՔԵԼԾԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՈՒՂԵԿՈՌՈՒԹՅԻՒՆԸ

Ա.

(ԺԵ. 35—41)

Պօղոսը և Բառնաբասը մի ամբողջ տարի Անտիոքումն էին և այդ ժամանակամիջոցում շարունակ քարոզում էին աւետարանը։ Յիսուն և մէկ թուականին Պօղոսն ասաց Բառնաբասին. «Գնանք այցելենք այն քաղաքները, ուր քարոզել ենք, տեսնենք ինչպէս են քրիստոնեաները»։ Բառնաբասը կամենում էր իւր ազգական Յովհաննէսին (Մարկոս մականուանեալ) ևս հետն առնել, բայց Պօղոսը հակառակում էր՝ տաելով—երբ նա մի անգամ Պամփիլիայում բաժանուեց մեղանից, այլ ևս չպիտի զայ։ Անհամաձայնութիւն յառաջացաւ և իրարից բաժանուեցան—Բառնաբասը Մարկոսին հետն առաւ, անցաւ Կիպրոս, իսկ Պօղոսը Զիվայի հետ քաղաք քաղաք բարողելով՝ այցելեց քրիստոնէական եկեղեցիները և նրանց աւելի հաստատեց իրանց հաւատոյ մէջ։

Պօղոսը եկաւ Գերբէ և Լիւտրա։ Այստեղ մի հաւատացեալ կար՝ անունը Տիմոթէոս, որի մայրը քրիստոնեայ էր, իսկ հայրը հեթանոս։ Սա քարի համբաւ ունէր թէ Լիւտրայի և թէ Խկոնիայի քրիստոնեաների մօտ։ Պօղոսը որան իւր հետն ա-

ռաւ։ Որ քաղաքիցն էլ անցնում էին, աւանդում էին այնտեղի քրիստոնեաներին պահելու այն բոլոր որոշումները, որ եղած էին Երուսաղէմում առաքեալների և երեցների ձեռով։ Քրիստոնեաները զօրանում էին իրանց հաւատի մէջ և նոցա թիւը օր ըստ օրէ աւելանում էր։ Այստեղից անցան Փոլիգիա, մտան Գաղատացւոց երկիրը, բայց ոչ մի տեղ չքարողեցին, որովհետև Սուրբ Հոգին արգելել էր նոցա Աստուծու խօսքը Ասիայի մէջ քարողելու։ Երբ եկան Միւսիայի կողմերը, փորձ արին գնալ Բիւթանիա, բայց այստեղ ևս իրաւունք չեղաւ քարողելու։

Բ.

1. (ԺԳ. 1—2)

Միւսիայից եկան Տրովագա։ Այստեղ Պօղոսին տեսիլքում մի մակեդոնացի երեաց, որ ասում էր. «Անցիր Մակեդոնիա և օգնիր մեղ՝ փրկելու մեր ողիները»։ Պօղոսը պատմեց այս տեսիլը իւր ուղեկցին. Նրանք այնպէս հասկացան, որ Աստուծած հրաւիրում է նրանց Մակեդոնիա անցնել և քարողել աւետարանը, ուստի Տրովագայից ուղղակի Սամոթրակէ անցան, իսկ հետեւեալ օրը՝ նոր-քաղաք, այնտեղիցն էլ գնացին Մակեդոնիայի պլատոր քաղաքը՝ Փիլիպպէ։

2. (13—15)

Այստեղ մի բանի օր մնալուց յետոյ՝ շաբաթ օրը քաղաքից զուրս գնացին դէպի զետափը, ուր

սովոր էին տեղացիները աղօթելու: Այստեղ նատած խօսում էին ժողովուած կանանց հետ: Եւ ահա մի աստուածավախ կին՝ Լիդիա անունով՝ ծիրանավաճառ, Թիւատիր քաղաքից, ցանկութիւն յայտնեց լսելու Պօղոսի խօսքերը: Լիդիան և իւր տունը քրիստոնեայ դարձան և մկրտուեցան: Սա աղաչում էր Պօղոսին, որ իւր տուն գնան և այնքան խնդրեց՝ մինչև որ տարաւ նրանց:

3. (16—24)

Մի օր, երբ աղօթքի էին գնում, մի դիւահար աղախին պատահեց նրանց: Սա գուշակութիւններ էր անում և զբա համար էլ վարձ էր ստանում ուրիշներից: Այդ վարձից օգտում էին իւր տէրերը: Դիւահար աղախինը ճանապարհին Պօղոսին իւր աշակերտների հետ որ տեսաւ, աղաղակեց և ասաց. «Այս մարդիկն Աստուծու ծառաներն են, եկել են ձեզ փրկութեան ճանապարհը քարոզելու»: Այս բանը մի քանի անգամ կրկնեց: Պօղոսը զայրացաւ, դարձաւ և ասաց չար ոգոն. «Ճիսուս Քրիստոսի անունով պատուիրում եմ քեզ հեռանալ դրանից»: Դեն իսկոյն հեռացաւ: Աղախնի տէրերը, երբ տեսան, որ իրանց եկամտի աղքիւրը կպակասի, զըրգուուեցան, Պօղոսին և Շիզային տարան քաղաքի դատաւորների մօտ և ասացին. «Այս մարդիկը շփոթութիւն են ձգում մեր քաղաքում, մեզ նոր հաւատ են քարոզում: Նրանք հրէաներ են, մեզ՝ հոռվմայե-

ցիններիս այնպիսի բանիր էին քարոզում, որ արժան չէ ոչ ընդունել և ոչ կատարել»: Ամրոխը խռովուեցաւ: Գլխաւորները պատառեցին իրանց հանդերձները, հրամայեցին ծեծել և բանտարկել: Բանտապետին պատուիրեցին, որ զգուշութեամբ պահէ: Սա էլ հրամանի համաձայն՝ նեղդին բանտը ձգել տուաւ առաքեալին և պատուիրեց ոտները կոճղի մէջ ամբացնել:

4. (25—34)

Կէս գիշերին Պօղոսը և Շիզան աղօթում և օրհնում էին Աստուծուն. բանտարկեալները ուշադրութեամբ լսում էին նրանց: Յանկարծ մեծ շարժեղաւ բանտի մէջ, բոլոր կողպած գոները բացուեցան և ամենքի շղթաներն էլ արձակուեցան: Յանտապետը շարժի ձայնից զարթեց, տեսաւ որ բանտի գոները բաց են և կտրծելով որ բանտարկեալները փախել են, յուսահատութիւնից սուրը քաշեց, որ անձնասողան լինի: Պօղոսն այս բանը տեսնելով բարձր ձայնով կանչեց և ասաց. «Մի վախենար, մենք ամենքս էլ այստեղ ենք»: Ճրագ վեր առաւ, վագելով ներս գնաց, տեսաւ որ ամենքն էլ այնտեղ են. ընկաւ Պօղոսի և Շիզայի ոտները, դուրս հանեց նրանց և ասաց. «Ասացէք, ինչ անեմ, որ ես փրկուիմ»: Նրանք էլ ասացին. «Հաւատա Ճիսուս Քրիստոսին և կփրկուս դու և քո տունը»: Այն ժամանակ Աստուծու աւետարանը քարոզեցին նրա տանը եղողներին: Յետոյ լուաց նրանց մարմնի վէր-

քերը և ամբողջ ընտանիքով մկրտուեց։ Ապա տուն հրաւիրեց, սեղան դրաւ առաջները և իւր ընտանիքի հետ միասին ուրախանում էին, որ քրիստոնեայ են դառել։

5. (35—40)

Առաւօտեան վաղ՝ դատաւորները մարդ ուզարկեցին բանտը պատուիրելով, որ առաքեալներին աղատեն։ Բանտապետը Պօղոսին յայտնեց դատաւորների կամքը, թէ իշխանութիւնը այժմ արձակում է ձեզ, ելք և գնացէք խաղաղութեամբ։ Պօղոսը պատասխան տուաւ և ասաց. «Մեզ նման ազատ հռովմայեցի գրուած մարդկանց հրապարակաւ ծեծել տուին։ Հիմա թաքնն են արձակում, ոչ, թնդիրանք գան և արձակեն մեղ։ Եկող մարդիկն այս բանը պատմեցին դատաւորներին։ Սրանք, երբ լսեցին, որ բանտարկեալները հռովմայեցի են, վախեցան։ Եկան, աղաչում էին, որ ներեն իրանց։ Երբ բանտից գուրս եկան, դատաւորները խնդրեցին, որ քաղաքից հեռանան։ Առաքեալները բանտից գուրս եկան, գնացին Լիդիայի տունը, հաւատացեալներին այցելեցին, միսիթարեցին նրանց և ապա հեռացան։

Մտթ. ե. 3. «Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից»։

Մտթ. է. 21. «Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ տէր, տէր, մացէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս հօրինոյ, որ յերկնոս է»։

Ղոկ. ժէ. 20. 21. «Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խարանօք եւ չասիցեն թէ ահաւասիկ ասա է կամ անդ, զի ահա արքայութիւն Աստուծոյ ՚ի ներքս ՚ի ձեզ է»։

I. թ. ա. Կրնթ. դ. 20. «Զի ոչ եթէ բանիւք է արքայութիւն Աստուծոյ, այլ զօրութեամբ»։

Գործք ասք. ժգ. 31. Հաւատայ ՚ի աէր Յիսուս Քրիստոս եւ ապրեսցես զու եւ ամենայն տուն քո»։

Մրկ. ժգ. 16. «Որ հաւատայ եւ մկրտիցի՝ կեցցէ, եւ որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի»։

14

ՊՈՂԱՍԸ ԹԵՍԱԼՈՆԻԱՅՈՒՄ ԵՒ ԲԵՐՈՅԱՒՄ

1. (Ժէ. 1—4)

Փիլիպպէից դուրս գալով՝ շրջեցին Ամփիպօլիս, Ապողոնիա քաղաքները և վերջն եկան Թեսաղոնիլէ, որ հրէից ժողովարան կար։ Պօղոսն ըստ իւր սովորութեան աղօթարան գնաց և երեք անքամ շաբաթ օրերը քարող խօսեց նրանց։ Դիրքը բաց էր անում, նրանց տուածն էր գնում և ցոյց էր տալիս, որ Քրիստոս պէտք է չարչարուէր և մեռելներից յարութիւն առնէր և թէ Քրիստոսն այն Յիսուսն է, որի մասին ես քարոզում եմ ձեզ։ Քարոզի հետեանքն այն եղաւ, որ ոմանք հաւատացին Յիսուս Քրիստոսին, ՚ի թիւս որոց էին շատ հեթանոս պաշտօնեաներ և անուանի կանանցից ոչ սակաւ։

2. (5—9)

Հհաւատացող հրէաները նախանձեցին այս բանին. մի քանի փողոցային մարդկանց հետ ազմուկ արին. քաղաքի մէջ շփոթութիւն ձգեցին. հաւարուեցին քրիստոնեայ Յասովնի տան առաջ, ուր Պօղոսը և Շիղան իջևանել էին և կամենում էին առաքեալներին հրապարակ տանել, որ հասարակ ժողովուրդը դատէ նրանց: Երբ շգտան նրանց, Յասովնին և նրա մօտ եղող հաւատացեալներին քաշ տալով տարան քաղաքապետի մօտ, ազմուկ էին բարձրացնում և բողոքում ասելով. «Այս աշխարհ շփոթեցնողներն այստեղ՝ մեր քաղաքն էլ են եկել և Յասովնը նրանց իւր տուն է ընդունել: Դոքա ամենքն էլ կայսեր հակառակ մարդիկ են—Յիսուս անունով մէկին թագաւոր են անուանում»: Խռովարարները յաջողեցին շփոթելու քաղաքացւոց և քաղաքապետի մաքերը, այնպէս որ վերջինս Յասովնից երաշխաւորութիւն առնելով, արձակեցին առաքեալներին:

3. (10—15)

Թեսաղոնիկէի քրիստոնեաները գիշերով Պօղոսին և Շիղային ճանապարհ ձգեցին դէպի Բերիա: Երբ տեղ հասան, Պօղոսը շաբաթ օրը ժողովարան գնաց քարոզելու: Այստեղ ժողովուրդն աւելի խելացի վարուեց՝ քան թէ Թեսաղոնիկէինը, որովհետև առաքեալի քարոզը սիրով ընդունեցին, ուշագրութեամբ քննում էին, թէ Պօղոսի քարոզած մեռել-

ներից յարուցեալ Քրիստոսն այն է, որի մասին Սուրբ Գրքում գրած է, թէ նա պիտի չարչարուի և յարութիւն առնէ: Ժողովականներից շատերը, նոյնպէս ոչ սակաւ պարկեցտ յոյն կանայք քրիստոնեայ դարձան: Երբ Թեսաղոնիկէի հրէաներն իմացան, որ Պօղոսը Բերիայումն էլ քարոզում է, վերկացան, եկան և սկսեցին այստեղ էլ խռովել ժողովրդին: Հաւատացեալներն իսկոյն Պօղոսին նաւ նստացրին և Աթէնք ուղարկեցին, իսկ Շիղան և Տիմոթէոսը մնացին այնտեղ քրիստոնեաներին իրանց հաւատի մէջ զօրացնելու: Կալճ ժամանակից յետոյ պատուէր ստացան Աթէնք գնալու Պօղոսի մօտ:

Մաթ. ե. 3. «Երանի աղքատաց հոգւով, զի նոցաէ արքայութիւն երկնից»:

Մաթ. ե. 6. «Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին»:

Մաթ. ե. 20. «Զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդապացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից»:

Մաթ. ե. 10. 11. «Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցաէ արքայութիւն երկնից: Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեղ եւ հալածեցեն, եւ ասիցեն զամենայն բան չար զձնջ սուտ վասն իմ»:

Յովհ. ժը. 37. «Պատասխանի ետ Յիսուս, զու ասես թէ թագաւոր իցեմ, բայց ես յայդ իսկ ծնեալ եմ եւ 'ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեամբ քննում էին, թէ Պօղոսի քարոզած մեռել-

թեանն, ամենայն որ ՚ի ճշմարտութենէ է, լոէ բարբառոյ իմոյ»:

Թ. ա. Հոմ. Ժ. 17. «Ապա ուրեմն հաւատք ՚ի լսելոյ են, եւ լուր ՚ի բանէն Քրիստոսի»:

I. թ. ա. Թսղ. Ե. 21. «Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալաբուք»:

Յովհ. Ե. 39. «Քննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունել գիւանսն յաւիտենականս, եւ նոքին իսկ են, որ վկայեն վասն իմ»:

15

Պ Օ Ղ Ա Ս Ն Ա Թ Է Կ Ւ Փ Ո Ւ Մ

1. (Ժէ. 16—21)

Պօղոսն Աթէնքում սպասում էր Ճիզային և Տիմոթէոսին: Մինչև նրանց գալը, ծանօթացաւ քաղաքի հետ: Երբ տեսաւ, որ կուռքերով լի է քաղաքը, սաստիկ զայրացաւ իրա մէջ: Պօղոսն ըստ իւր սովորութեան, շարաթ օրերը ժողովարան էր զնում և քարոզում էր հրէաներին և տատուածապաշտներին. փողոցումն էլ ով պատահում էր, նոցա ևս քարոզում էր: Եպիկուրեան և ստիլիկեան փիլիսոփաներից մի քանիսը վիճաբանում էին նրա հետ, իսկ ոմանք էլ տասում էին. «Այս դատարկաշրջկիը ինչ է ուզում ասել»: Մի քանիսն էլ ասում էին. «Երկի մի նոր աստուծու մասին է աւետարանում»: Այս պատճառով Պօղոսին վեր առան, տարան Արիսպագոս և ասացին.

«Արդեօք կարող ենք իմանալ, թէ այդ ինչ նոր վարդապետութիւն է, որի մասին զու խօսում ես: Քո քարոզածը նորութիւն է մեզ համար, կամենում ենք իմանալ, թէ այդ ինչ բան է»: Որովհետեւ Աթենացիները և այնտեղ ընակուող օտարականները պարապում էին ոչ այլ ինչով, եթէ ոչ նոր բաներ պատմելով կամ նոր բան լսելով:

2. (22—31)

Պօղոսը կանգնեց Արիսպագոսի մէջ և ասաց. «Ո՛վ Աթենացիներ, ես տեսնում եմ, որ դուք կրօնասէր մարդ էք. ես շրջեցի ամենուքէք. տեսայ ձեր ազօթատեղիրը և գտայ մի սեղան, որի վրայ գրած էր՝ անձանօթ Աստուծուն: Ես քարոզում եմ հենց այդ Աստուծու մասին, որին դուք առանց ճանաչելու պաշտում էք: Այդ Աստուծը, որ ստեղծել է երկինքն ու երկիրը, ձեռապրծ տաճարներում չէ ընակուում, մարդոց ձեռքով պաշտուելու կարիք չունի, ոչնչի կարօտ չէ, ընդհակառակին նա է ամենիքին կեանք և ամենայն ինչ տուողը: Ինչպէս ինքը միակ Աստուծն է, այսպէս էլ ցանկացաւ, երկրագնդիս վրայ ընակուող մարդկային բոլոր ազգերը մի արխմից ստեղծուեն. նա որոշեց, թէ որ ազգը ուր պիտի ընակուի. որքան ժամանակ այն որոշած երկիրը պէտք է տիրապետէ և թէ երբ պիտի տեղափոխուէ: Այս ամենը նրա համար արաւ, որպէսզի որոնեն և գտնեն իրան և նա հեռի չէ մեր ամեն մինից. մենք նրանով ենք ապ-

րում և շարժւում, ինչպէս և ձեր բանաստեղծներից ոմանք ասացին, թէ նրա ազգիցն ենք: Արդ՝ որովհետև Աստուծու ազգիցն ենք, չպիտի կարծենք, թէ աստուածութիւնը նման է, ոսկու, արծաթի կամ քարէ արձանների, որոնց մարդկային միտքն է ստեղծել և մարդկային ձեռքը քանդակել: Աստուած տղիտութեան ժամանակներն անտես անելով այժմ մարդոց ամենուրեք պատուիրում է ապաշխարել: Նա որոշել է մի օր, երբ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ այն մարդու ձեռով, որին մեռելներից յարութիւն տուաւ»:

3. (32—34)

Երբ մեռելների յարութեան մասին լսեցին եպիկուրեանք և սափուգեցիք, սկսեցին ծագրել, իսկ նորութիւնն սիրողներն էլ ասում էին. «Այդ բանի մասին սպասում ենք դարձեալ լսել քեզանից»: Սրանից յետոյ Պօղոսը վեր կացաւ և գնաց: Քարտզի հետեւանքն այն եղաւ, որ Արխապագոսի անդամ Դիոնէսիոսը (Արխապագացի), մի կին՝ Դամարիս անունով և մի քանիսը քրիստոնեայ դարձան:

Մաթ. ե. 6. «Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին»:

Մաթ. ե. 6. «Երանի՛ աղքատաց հոգւով . . .»:

I. Մովս. ա. 27. «Եւ արար Աստուած զմարդն ՚ի

պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա»:

Յովհ. դ. 16. «Հոգի է Աստուած, եւ երկիրապարուացըն նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտէ երկրապահներ»:

I. թ. Յովհ. դ. 16. «Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք զույն Աստուծոյ՝ զոր ունի առ մեղ»:

16

Պ Օ Ղ Ա Ս Լ Կ Ո Ւ Ն Թ Ո Ս Ո Վ Ո Ւ Ի Ր

1. (Ժ. 1—11)

Պօղոսն աթենացիներից բաժանուեց և եկաւ Կորինթոս քաղաքը: Այստեղ պատահեց Պոնտացի Ակիւզոս անունով մի հրէի, որը իւր կին Պրիսկիլիացի հետ Խտալիալից նոր էին եկել, որովհետև Կլատուա կայսրը հրամայել էր հրէաներին չոռվմից հեռանալ: Պօղոսը զնաց սրանց մօտ: Եւ որովհետև Պրիսկիլիան և Պօղոսը համարուեստ էին՝ այծի մազից վրաններ պատրաստել զիտէին, մնաց նրանց մօտ և աշխատում էր նրանց հետ: Ամենայն շաբաթօր քարոզում էր ժողովրդանոցում հրէաներին և յուներին: Երբ վերջապէս Ճիզան և Տիմոթէոսը եկան, Պօղոսն աւելի սիրտ առաւ քարոզելու հրէաներին, որ Յիսուս խրայէլի Մեսսիան է կամ իրանց հայրերի սպասած Փրկիչը: Ունինսիրները շընդունեցին և հայնոյում էին: Այն ժամանակ Պօղոսը իւր հանդերձները թօթափելով առաց: «Երբ չէր հաւատում, ձեր արխ-

Նը ձեր զլուխը լինի, ես անպարտ եմ, այսուհետեւ
ես հեթանոսներին կրառողեմ, որոց համար էլ առա-
քեալ եմ նշանակուել»: Պօղոսը դուրս եկաւ ժողովրդանոցից և գնաց Յուստոս անունով մի առտուա-
ծապաշտ մարդու մօտ, որ 'ի ծնէ հեթանոս էր ե-
ղել և որի տունը հնեց կից էր ժողովրդանոցին:
Պօղոսի վճռական վարմունքը ազգեց ժողովրդապետի
վրայ—հաւատաց Յիսուսին և իւր տնով մկրտուեց.
որա օրինակին հետեւեցին կորնթացիներից շատերը
և մկրտուեցան: Աստուած գիշերը երկաց տեսիլքում
Պօղոսին և ասաց. «Մի վախենար, մի լոիր, խօ-
սիր, ես քեզ հետ եմ, ոչ որ չի համարձակուի այլ
ես քեզ վնասելու, այս քաղաքում ես շատ ժողովուրդ
ունիմ»: Պօղոսն այստեղ տարի և կէս մնաց և քա-
րոզում էր նրանց Աստուծու խօսքը:

2. (12—17)

Երբ Փալիովնը բգեշխի փոխտնորդ էր Աքայիա-
յում, հրէաները՝ բոլորը միասին Պօղոսի գէմ վեր-
կացան և նրան ատեան տարան: Նրանք ասում էին.
«Սա Մովսէսի օրէնքին հակառակ՝ ժողովրդին ուսու-
ցանում է ուրիշ Աստուած պաշտել»: Երբ Պօղոս առա-
քեալն ուզում էր խօսել իրան պաշտպանելու
համար, Գալիովն ասաց հրէաներին. «Եթէ սա մի
անիրաւութիւն կամ չարութիւն գործած լինէր, ես
սիրով կլոէի ձեզ, բայց որովհետեւ ինովիրը կրօնի,
ձեր Մեսսիայի և Մովսէսի օրէնքի մասին է, այդ ձեր

գործն է, թէ վէճը ինչպէս կիմուէք, ես այդ տեսակ
գործերի համար զատաւոր չեմ եկած»: Խնդրին վերջ
տալու համար՝ զատարանից հեռացրեց նրանց: Այն
ժամանակ յոյները, որոնք լոկ հանդիսատեսի դեր
էին կատարում, երբ տեսան այս բանը, խիստ բար-
կացան Կրիստոսի տեղ ընտրուած նոր ժողովրդա-
պետ Սոսթենէսի վրայ, որ հրէից ամբոխին առաջ-
նորդում էր և ծեծեցին նրան: Գալիովնը, որ ներ-
կայ էր այս տեսարանին, ոչինչ չասաց, լուռ մնաց:

3. (18—22)

Պօղոսը երկար ժամանակ մնաց Եփեսոսում,
հրէաներին այլ ևս չին համարձակուում ձեռը միսել
նրան: Որովհետեւ Պօղոսը ցանկանում էր չոգեգալլու-
տեան տօնին Երուսաղէմում լինել, ուստի հրաժարա-
կան տուաւ տեղացի քրատոնեաներին և նաւեց գէպի
Ասորիք: Պրիսկիլլան և Ակիւզան նրա հետ եկան մին-
չև Կենքրէս քաղաքը: Այստեղ Ակիւզասը գեռ նաւից
շիջած, մազերը խուզեց, որովհետեւ ուխտ ունէր ա-
րած: Երբ Եփեսոս քաղաքը հասաւ, նրանց այնտեղ
թողեց, խսկ լինքը ժողովրդանոց մտաւ և քարոզում
էր հրէաներին: Եփեսացիներին գուր եկաւ առաքեա-
լի քարոզը, ուստի խնդրեցին նրան, որ երկար ժա-
մանակ մնայ իրանց մօտ և քարոզէ: Պօղոսը չկարո-
ղացաւ մնալ, հրաժարական տուաւ ասելով. «Առա-
ջիկայ չոգեգալլուտեան տօնին անպատճառ Երուսաղէ-
մում պիտի լինեմ, Աստուծով նորից կգառնամ ձեզ

մօտ»: Եփեսոսից զնաց Կեսարիա, այցելեց այնակղի քրիստոնեաներին և տպա իջաւ Անտիոք:

Ա. թ. ա. Կըթ. ժր. 9. «Զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի»:

Թ. ա. Փլտ. դ. 13. «Յամենայնի կարող եմ այնու, որ զօրացոյցն զիս»:

Դործը առք. ժդ. 31. «Հաւատա ՚ի տէր Յիսուս Քրիստոս եւ ամենայն տուն քո»:

Մըկ. ժդ. 16. «Որ հաւատայ եւ մկրտիցի՝ կեցցէ, եւ որ ոչն հաւատայ դատապարտեցի»:

Մտթ. իր. 21. «Երթայք տուք զկայսեր՝ կայսեր եւ զԱստուծոյ, Աստուծոյ»:

17

Պ Օ Գ Ա Ս Լ Ե Փ Ե Ս Ա Ս Ա Ւ Պ

1. (ԺՌ. 23—28)

Ասորական Անտիոքում մի առժամանակ մնալուց յետոյ, զուրս եկաւ, որ կարգով շրջէ Գաղատիան, Փոխւղիան և նախակին ճանապարհորդութեան ժամանակ շահած հաւատացեալներին ամրապնդէ իրանց հաւատի մէջ: Այդ ժամանակ Եփեսոս եկաւ Աղէքսանդրացի մի հրէայ՝ Ապօղոս անունով, որ մի ճարտարախօս մարդ էր և խիստ հմտւ Հին-ուխտի պատմութեանը: Սա արդէն Աղէքսանդրիայում ծա-

նօթացել էր Յիսուսի վարդապետութեան հետ. ոգեւորուած քարոզում էր Փրկչի մասին, որքան զօրում էր նրա գիտեցածը—տեղեկութիւն ունէր միայն Յովիաննէսի մկրտութեան մասին: Սա ժողովրդանոց զնաց և սկսաւ համարձակ կերպով քարոզել: Ակիւղան և Պրիսկիլան, երբ իմացան այդ մասին, իրանց մօտ կանչեցին և Աստուծու ճանապարհներն աւելի որոշ բացատրեցին նրան: Իսկ երբ կամեցաւ Աքայիա գնալ, յանձնալարական թուղթ զրեցին այնեղի քրիստոնեաներին, որ ընդունեն: Երբ տեղ հասաւ, չոգւոյն Սլրոյ չնորհովը շատ օգնեց հաւատացեալներին՝ զօրացնելով նրանց հաւատը, այնպէս որ Պօղոսի յետոյ զրուածն արդարանում է, թէ «Ես ցանեցի, Ապօղոսը ջուր տուաւ, իսկ Աստուծ աճեցրեց»: Սա հրապարակով խիստ յանդիմանում էր հրէաներին և Սուրբ զրբի վկայութեամբ ցոյց էր տալիս նրանց, որ Յիսուսը խոստացեալ Քրիստոսն է:

(ԺՌ. 1—8)

Պօղոսը շրջեց Գաղատիան, Փոխւղիան, ծովափնեայ երկիրները և Ապօղոսի Կորնթոս եղած ժամանակն եկաւ Եփեսոս, որտեղ դտաւ մի քանի հաւատացեալներ և հարցրեց նրանց. «Արդեօք Սուրբ չողին ընդունեցիք, երբ քրիստոնեայ դարձար»: Նըրանք պատասխանեցին. «Մենք չենք էլ լսել, թէ Սուրբ չողի կայ»: Պօղոսը հարցրեց. «Հապա ինչով մկրտուեցար»: Նրանք պատասխանեցին. «Յովիաննէ-

սի մկրտութիւնով»: Պօղոսն ասաց. «Յովհաննէսը ապաշխարութեան մկրտութիւնով էր մկրտում և ասում էր ժողովրդին—որ նրանք իրանից յետոյ եկողին պիտի հաւատան, այսինքն Յիսուս Քրիստոսին»: Երբ այս բանը լսեցին, Յիսուս Քրիստոսի անունով մկրտուեցան: Պօղոսը ձեռը դրաւ նրանց գլխին, խակոյն Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ և սկսեցին դանաղան լեզուներ խօսել և մարդարէանալ: Մկրտուողները տանի և երկու հոգի էին: Սրանից յետոյ երեք ամիս շարունակ ազատ կերպով ժողովրդանոց էր գնում և քարոզում էր Աստուծու արքայութեան մասին—հակառակող այլ ևս չկար:

(9—10)

Երեք ամսից յետոյ մի քանիսը դիտմամբ սկսեցին բամբասել Պօղոսին ժողովրդի առաջ՝ որպէս թէ որա ցոյց տուած փրկութեան ճանապարհը սխալ է, ուստի Պօղոսը հեռացաւ այդ ժողովրդանոցից, հեռացրեց իւր հաւատացեալ ունկնդիրներին, իսկ այնուհետեւ քարոզում էր նրանց ամենայն օր Տիւրան անունով մի մարդու ժողովարանումը, որը յայտնի անձնն էր Եփեսոսում և հեթանոսութիւնից դէպի քրիստոնէութիւն էր դարձել: Երկու ամբողջ տարի Պօղոսը քարոզում էր Տիւրանի ժողովարանումը՝ մինչև որ Ասիայի բոլոր քնակիշները՝ հրէաները և յոյները Աստուծու խօսքը լսեցին:

(18—22)

Հաւատացեալներից շատերը գալիս էին Պօղոսի մօտ, խոստովանում էին իրանց սխալակիները և պատմում էին, թէ ինչեր են գործել: Չատ կախարդներ բերում էին իրանց վրերը և հրապարակով այրում էին, որոց զինը երբեմն յիսուն հազար արծաթ արժէր: Այսպէս Տիւրոջ խօսքը աճում և զօրանում էր: Սրանից յետոյ Պօղոսը մտադրուեցաւ շրջել Մակեդոնիան և Աքայիան և ապա գնալ Երուսաղէմ, որից յետոյ ցանկութիւն էր յայտնում և չոռվմ դնալ: Բայց այնտեղի հաւատացեալներին զօրացնելու համար՝ ուղարկեց Տիմոթէոսին և Երաստոսին, իսկ ինքը մի առ ժամանակ մնաց Ասիայում:

2. (23—40)

Տիմոթէոսի և Երաստոսի հեռանալուց յետոյ՝ մեծ աղմուկ բարձրացաւ Եփեսոսում: Դիմետրիս անունով մի արծաթագործ՝ Եփեսոսում եղած Արտեմիս կորի մեծ տաճարի ձեռվ արծաթից փոքրիկ տաճարներ էր շինում և վաճառում էր: Սա մեծ շահուածութեան էր այդ գործից և դրա համար էլ լաւ վարձատրում էր իւր մօտ աշխատողներին: Սա ժողովեց իւր արուեստի մարդկանց, մեծ աղմուկ արաւ և տապաց. «Գուք գիտէր որ այս գործիցն է մեր շահը. գուք տհմնում և լսում էք, որ այս Պօղոսը եփեսացիներին և բոլոր ասիացիներին քարոզում է, թէ ձեռով շինածները աստուածներ չեն: Ոչ միայն մեր

շահն է վտանգւում, այլև մեծ Արտեմիսի տաճարի նշանակութիւնն էլ վայր է ընկնում, որին Ասիան և ամբողջ աշխարհը պաշտում է»: Այս լսելով՝ քարկութեամբ լցուեցան, աղաղակում էին և ասում. «Մեծ է եփեսացւոց Արտեմիսը»: Ամբողջ քաղաքը ստի կանգնեց, ամբոխը դիմեց դէսի թատրոն, ուր երբեմն նաև ժողովներ էին տեղի ունենում. յարձակուեցան Գայիսուի և Արխատարքոս մակեդոնացու վըրայ, որոնք Պօղոսի ճանապարհորդակիցներն էին: Պօղոսը կամեցաւ ինքը մտնել թատրոն, որ ազատէ իւր պատճառով բռնուածներին և իրան նոցա փոխանակ խռովարաների ձեռք մատնէ, բայց եփեսոսի քրիստոնեաները չթողին: Պօղոսի բարեկամները մարդ ուղարկեցին նրա մօտ և խնդրում էին թատրոն չմտնել: Ամբոխը խռնուած էր—ամեն մինը մի բան էր ասում, շատերը չգիտէին թէ ինչն համար են հաւաքուած: Աղէքսանդրոս անունով մէկին առաջ քաշեցին, որ նա բացատրէ ժողովրդին, թէ բանն ինչումն է: Սա ձեռքը բարձրացրեց, նշան՝ թէ կամենում է խօսել, բայց երբ իմացան Աղէքսանդրոսի հրէայ լինելը, ամենքն էլ միաբերան՝ երկու ժամի չափ աղաղակում էին և ասում. «Մեծ է եփեսացւոց Արտեմիսը»: Ատենապիրը ամբոխին հանդարտացնելուց յետոյ՝ ասաց. «Ո՞վ եփեսացիք, ով է այն մարդը, որ չգիտէ, թէ եփեսոս քաղաքը մեծ Արտեմիս աստուածուն և Պիօպետ աստուածամօր տաճարների հողաբարձուն՝ պաշտօնեան է, ուրեմն

պէտք է խաղաղ, հանգիստ լինէք և յանդկնութեամբ ոչինչ չգործէք: Այս մարդիկը՝ Գայիսուը և Արխատարքոսը, որոց բերել էք այստեղ, ոչ կռատներ կողոպտողներ են և ոչ ձեր աստուածուն հայհոյել են: Ուրեմն, եթէ Գիմետրիսուը և նրա արուեստի մարդիկը մէկի հետ զործ ունեն, այստեղ ատեան կայ, թնդ զնան դատաւորների մօտ և իրանց գանգատն այնտեղ յայտնեն և խնդրիրը ժողովում օրինաւոր կերպով կվճռուի: Մենք ևս պատասխանատու ենք այսօրուայ խոռովութեան համար: Ի՞նչ ասենք, եթէ մեզ հարցնեն, թէ այս մարդոցն ինչն էք բռնել»: Այս խօսքերից յետոյ ժողովուրդը ցրուեց:

Աղմուկը դադարելուց յետոյ, Պօղոսն աշակերտներին կանչեց, հրաժարական ողջոյն տուաւ նրանց և գնաց Մակեդոնիա:

Մաթ. 3. 6. «Երանի՛ աղքատաց հոգւով...: «Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի...»:

Եսայի խ. 3. «Պատրաստ արարէք զճանապարհս տեառն եւ ուղիղ արարէք զշափիզ Աստուածոյ մերոյ»:

Ա. թ. ա. կընթ. է. 11. «Զի որ ըստ Աստուածոյն արտամութիւնն է, ապաշխարութիւն ՚ի վրկութիւն առանց զզջանալոյ գործէ, իսկ աշխարհի արտամութիւն մահ գործէ»:

Լ. թ. ա. տմթ. դ. 10. «Զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է»:

Յովհ. դ. 16. 20. «Զի լոյս եկան յաշխարհ եւ սիրե-

ցին մարդիկ զիստապ առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց շարութեան»:

Գործք առք. թ. 15. «Ասէ ցնա տէր, երթ դու, զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց եւ թագաւորաց եւ որդուոցն իսրայելի»:

ՀՄԴԻՐԻ Առակը

«Նման է արքայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թագոյց ՚ի զրիւ երիս ալիւր՝ մինչև ամենայն խրմորեցաւ»: (Մաթ. ժգ. 33.):

18

ՊՈՂՈՍԸ ՀՅԵՒՅԵՐԵԿԵՆ Ի ՏԵԼԻՍ ԵՓԵՍՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵԲԵՑՆԵՐԻՑ

(թ. 16—38)

Պօղոսը Մակեդոնիայում շրջելուց յետոյ, որոշեց Եփեսոսի մօտով ծովային ճանապարհով դառնալ Երուսաղէմ, որպէսզի Պենտէկոստէի տօնին կարողանայ այնտեղ լինել: Ուստի Միլետ նաւեց, որտեղից մարդ ուղարկեց Եփեսոս և հրաւիրեց եկեղեցւոյ երեցներին, որ միանգամ ևս խօսէ, յորդորէ և յուսազրէ նրանց: Երբ երեցները եկան, Պօղոսն ՚ի խորոց սրտէ խօսեց նրանց հետ և ասաց. «Ձեզ յայտնի է, որ Ասիա եկած օրիցս շարունակ ձեզ հետ եմ եղել. Աստուծուն ծառայել եմ ամենայն խոնարհութեամբ. քանիցս արտասուել եմ և որպիսի նենդութիւններ պատահեցան հրէաների կողմից: Բայց

չնայելով այս ամենին, ես չեմ յապագել ուսուցանելու ձեզ բարին և օգտակարը՝ թէ հրէից ժողովարաններում բացարձակ կերպով և թէ հացը կտրելիս՝ մասնաւոր տներում: Հրէաներին, ինչպէս և հեթանոսներին, երկուսին էլ ցոյց եմ տուել, թէ ինչպէս պիտի ապաշխարել առ Աստուծոծ դառնալու համար. ցոյց եմ տուել նմանապէս, թէ որպիսի հաւատ պիտի ունենաւն առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որպէսզի իրանց մեղքերին թողութիւն լինի և յաւիտենական կեանքի արժանանան: Մի ներքին ձայն մզում է ինձ գէպի Երուսաղէմ—թէ այնտեղ ինչ կը պատահի ինձ, չպիտեմ: Իմ ճանապարհորդութեան ժամանակ որպիսի նեղութիւններ ե հալածանիքներ եմ կրել: Կապանքներ, նեղութիւններ զիտեմ սպասում են ինձ Երուսաղէմում, բայց գրանցից և ոչ մէկը կարող են արգելք լինել ինձ այնտեղ գնալու: Ես իմ անձն անդամ չեմ խնայի, այլ սիրով զոհ կրերեմ, եթէ այդ պէտք լինի, որպէսզի ուրախութեամբ կատարեմ իմ ընթացքը—այն պաշտօնը, որ Յիսուս Քրիստոսիցն եմ ստացել՝ վկայելու, որ Աւետարանը Քրիստոսի մէջ յայտնուած Աստուծու նորհն է: Այժմ հեռանում եմ ձեզանից և գուցէ այլ ես միմեանց շտեսնենք, այս խորհրդաւոր օրը թաղ վըկայ լինի, որ ես ձեր ամենի արիմնիցն էլ անմեղ եմ, ես ոչ մի տեղ երկիւզ չեմ կրել քարոզելու ձեզ Աստուծու կամքը: Որովհետեւ պատասխանաւուութիւնն այսուհետեւ ձեզ վրայ է մնում, ուստի զգոյն եղէք՝

թէ ձեր անձի և թէ ձեր հօտի վերաբերութեամբ,
որի համար Սուրբ Հոգին ձեղ տեսուչ է նշանակել
այն պայմանով, որ դուք, որպէս ուսուցիչ և հօվիւ,
նրա հօտն արածացնէք, այն հօտը, որ իւր արիւ-
նովն է ձեռք բերել: Ես զիտեմ՝ որ իմ հեռանալուց
յետոյ յափշտակող գայլեր կգան ձեր մէջ և չեն խը-
նայի հօտը, հենց ձեր միջից մարդիկ կվերկենան և
կգայթակղեցնեն ոմանց և իրանց հետեղ կդարձնեն:
Ուստի արթուն կացէք այնպէս, ինչպէս ես երեք
տարի շարունակ չգագարեցի ամեն մինիդ արտա-
սուքով խրառելու: Այժմ յահճնում եմ ձեղ Աստու-
ծու չնորհաց խօսքին, որ ընդունակ է շինել և բո-
լոր սրբուածների հետ ձեղ ևս մասն և ժառանգու-
թիւն տալ: Չեր ոչ մինի արծաթը, ոսկին կամ
հանդերձ չեմ ցանկացել: Դուք զիտէք, թէ իմ և
թէ ինձ հետ եղողների պարէնը այս ձեռներովն եմ
վաստակել: Ամեն քան ցոյց տուեցի ձեղ իմ անձ-
նական օրինակովը, թէ ինչպէս պիտի աշխատէք,
տկարներին հոգ տանէք և յիշէք Աստուծու խօսքը,
որ ասում է—տալի առնելուցը լաւ է: Երբ այս ա-
սաց, ծունդ դրաւ ամենի հետ և աղօթք արաւ: Ա-
մենքն էլ լաց եղան, Պօղոսի վգովն էին ընկնում և
համբուքում էին: Ցաւում էին մանաւանդ այն խօսքի
համար, որ ասում էր, թէ այլ ևս չեն տեսնելու ի-
րան: Այսպէս ճանապարհ դրին նրան մինչև նաւը:

Դմլ. Ժ. Յ. «Եւ իմաստունք ծագեսցին իրբեւ զլու-
սաւորութիւն...»:

Թ. ա. Երբ. Ժ. Յ. «Յիշեցէք զառաջնորդս ձեր որ
խօսեցան ձեղ զբանն Աստուծոյ»:

Յովհ. Ժ. 12. «Խոկ վարձկանն, որ ոչ է հովիւ, որոյ
ոչ իւրն են ոչխարբն, իրբեւ տեսանէ զգայլն զի գայ, թո-
ղու զոշխարբն եւ փախչի եւ գայն յափշտակէ զնոսս եւ
ցրուէ»:

19

Պ Օ Ղ Ա Ս Ի Ն Զ Գ Ա Ւ Ե Ց Ն Ո Ւ Խ Ե Ն

(իա. 1—15)

Միկետի քրիստոնեայ եղբայրներին հրաժեշտ
տալուց յետոյ՝ Պօղոսը նաւեց նախ՝ դէպի Կով, Հոռ-
ոգոն և ապա՝ Պատարա քազաքները: Այսեղ մի նաւ
գտան, որ Փիմիկէ էր գնում, նստեց և ճանապար-
հը շարունակեց Կիպրոսի հարաւային կողմից գէպի
Ասորիք և իջաւ Տիւրոս քաղաքը, որպինեան նաւն
այնտեղ պիտի թափէր բեռք: Այսեղ քրիստոնեա-
ների հանդիպեց. հօթն օր նրանց մօտ մնաց. մխի-
թարեց և զօրացրեց նրանց հաւատը: Տիւրոսի քրիս-
տոնեաները մարգարէական հոգեւով լցուած՝ զգուշաց-
նում էին Պօղոսին, որ Երուսաղէմ չվնայ: Տիւրոսից
կըկին նաւ նստեց շարունակելու ճանապարհը: Հե-
ռանալիս բոլոր քրիստոնեայքը կանանցով և որդիկե-
րանցով ծովափը զնացին ճանապարհ զնելու առա-
րեալին. այսեղ չոքեցին ամենքը, աղօթք արին և

այսպէս հրաժարուեցան իրաբից. Հաւատացեալները դարձան իրանց տեղը:

Պօղոսը Տիկոսից նաւեց գէպի Պտղոմայիդա քա-
զաքը, սղունեց այնտեղ եղող քրիստոնեաններին և
մի օր նրանց մօտ մնաց. Հետեւալ օրը Պօղոս իւր
ընկերներով եկաւ Կեսարիա և իջաւ Փիլիպպոսի տա-
նը. Այս Փիլիպպոսը եօթը սարկաւագներից մէկն էր
և իրաւոնք էր ստացել աւետարաննելու. Սա ուներ
չորս կոյս աղջիկ, որոնք մարգարէական շնորհ ու-
նէին գալոցը գուշակելու. Պօղոսն այստեղ երկար մը-
նաց. Այդ ժամանակներում Հրէաստանից մի մար-
գարէ եկաւ՝ անունը Ազարոս, վեր առաւ առարեալի
գոտին, նրանով կապեց իւր ձեռներն ու ոտները և
մարգարէանալով ասաց. «Այս գոտու ախրոջը հրէա-
ները Երուսալէմում այսպէս պիտի կապեն և հեթա-
նոսների ձեռը մատնեն»: Այս որ լսեցին այնտեղի
քրիստոնեանները, լալով սկսեցին նրան աղածել, որ
Երուսալէմ չգնայ: Բայց Պօղոսը պատասխան տուաւ
նրանց և ասաց. «Ի՞նչ էք անում. ինչու էք լաց
լինում և իմ սիրու ճմլում: Ես՝ Յիսուս Քրիստոսի
համար պատրաստ եմ չէ թէ միայն բռնուելու և
կապուելու, այլև մեռնելու՝ նոյն իսկ Երուսալէ-
մում»: Պօղոսը շմեց նրանց. ամենքը լսեցին և ապա
ասացին. «Թող Տիրոջ կամքը լինի»: Սրանից յետոյ
Պօղոսը զնաց Երուսալէմ:

Մրկ. ը. 34. «Եթէ ոք կամի գալ զկնի իմ, ուրասցի
զանձն իւր եւ բարձցէ զմաշ եւր եւ եկեսցէ զկնի իմ»:

Յովհ. ե. 4. «Եւ այս է յաղթութիւնն, ոք յաղթէ
աշխարհի, հաւատքն մեր»:

Մտթ. դ. 10. «Եղիցին կամք քո»:

20

Գ Օ Ղ Ա Ս Է Ե Ւ Ա Խ Ս Ա Լ Կ Մ Ո Ւ Մ

1. (իս. 17—20)

Պօղոսը 58 թուականին մայիսի 15-ին Երու-
սալէմ մտաւ: Քրիստոնեանները սիրով ընդունեցին
նրան: Հետեւալ օրը իւր ուղեկիցների հետ զնաց
Յակովոսի մօտ, ուր ժողովի հաւաքուեցան եկեղեց-
ւոյ բոլոր երեցները: Պօղոսը սղունեց ժողովական-
ներին և մանրամասնօրէն պատմեց՝ ինչ որ Աստուած
նրա ձեռով գործել էր հեթանոսների մէջ: Երբ այս
բանը լսեցին, բոլորն էլ միարեան փառաւորում
էին Աստուծունի:

2. (27—39)

Հոգեկալստեան տօնից եօթն օր առաջ՝ հեռի
տեղերից եկող ուխտաւորների համար հանդէսներ էին
կատարում: Այդ եօթն օրերը լրանալուց յետոյ ա-
ռաւատեան 9 ժամին արդէն կարելի էր Սրբութիւն
մտնել: Ահա այդ ժամանակ ասիացի հրէաները տե-
սան Պօղոսին տաճարում. գրգռեցին ամբոխին. յար-

ձակուեցան նրա վրայ և աղաղակում էին. «Օգնեցք, ավ խրայէլացիներ, այս այն մարդն է, որ ամեն ուրեք քարոզում է հակառակ ժողովրդի, հակառակ օրինաց և հակառակ այս տեղի՝ մինչև անգամ հեթանոսներին տաճար բերաւ և պղծեց սուրբ տեղը. Առաջուց տեսել էին, որ Տրոփիմոս եկեսացին քաղաքում շրջում էր Պօղոսի հետ, կարծում էին թէ նրան տաճար էլ մտցրած կլինի: Ամբողջ քաղաքը զղրգեցաւ. ամբոխը խոնուեցաւ. Պօղոսին բռնեցին և քաշ տուին, տարան հեթանոսների գաւիթ կոշտած տեղը, որպէսզի ծիսակատարութիւնը շնանգարեն իրանց աղմուկներով: Այստեղ կամենում էին Պօղոսին քարկոծել: Տաճարին կից հռովմէական զօրանոց կար՝ Անտօնիոսի աշտարակ անունով: Երբ լուրը հասաւ հռովմայեցի հազարապետին, թէ Երուսաղէմը խոռվել է, խկոյն զինուորներ և հարիւրապետներ առաւ և շտապեց խոռվութեան տեղը: Ամբոխը, երբ տեսաւ զինուորաւած մարդկանց՝ երկիւզից յետ կանգնեց և այլ ևս չէր ծեծում Պօղոսին: Հաղարապետը կարծելով թէ մի մարդասպանի հետ դորձունի, բռնեց Պօղոսին, հրամայեց երկու շղթայով կապել և ապա դարձաւ ամբոխին ու հարցրեց. «Ո՞վ է սա, ի՞նչ է արել»: Ամբոխի միջից ամեն մինը մի բան էր աղաղակում—ոշինչ չէր կարելի հասկանալ, ուստի հրամայեց, որ Պօղոսին տանեն Անտօնիոսի աշտարակը: Երբ տաճարի սահմանից գուրս եկան և հռովմէական զօրանոցի աստիճաններին հասան, զօ-

րականները ստիպուեցան ոյժ զործ դնել, որովհետեւ կատաղած ամբոխը հետևում էր խր զոհին և պատրաստ էր պատառել նրան: Ամբոխն աղաղակում էր և ասում. «Յարձ զգա»: Երբ Պօղոսը զօրանոց մը-պաւ, որ այլ ևս երկիւզ չունէր հրկաներից, հազարապետին զիմեց և իրա հետ խօսելու իրաւունք խնդրեց: Հաղարապետը հարցրեց. «Յունարէն դիտես արդեօք. դու այն եղիապացին չես, որ 14 ամիս առաջ խռովութիւն ձգեց և չորս հազար աւագակ մարդիկ ոտի հանեց գէպի անապատը»: Պօղոսը պատասխանեց. «Ես հրէայ եմ, Կիլիկիայի Տարսոնից, նշանաւոր քաղաքի քաղաքացի եմ, իրաւունք տներ ինձ, որ այս ժողովրդի հետ խօսեմ»:

3. (իա. 40 և իբ. 1—20)

Հաղարապետը հրաման տուաւ: Պօղոսն աստիճանների վրայ կանգնեց. Ճեռը գէպի ժողովուրդը շարժեց՝ իբրև նշան լուելու և ապա սկսաւ Եբրայեցւոց լեզուով այսպէս խօսել. «Երբ եղբար և հարք, լսեցէք իմ պատասխանը»: Երբ իմացան, որ երրայցւոց լեզուով է խօսում իրանց հետ, ևս աւելի լուեցին և ուշադրութեամբ էին լսում: Պօղոսը շարունակեց. «Ես հրէայ եմ. ծնուած եմ Կիլիկիայի Տարսոն քաղաքում. ուսել եմ Երուսաղէմում մեծ ուարքի Գամաղիէլի մօտ. հայրենի օրէնքի ողուով եմ զաստիարակուած և Աստուծու մասին նախանձաւոր, ինչպէս և գուշ ամենքդ այսօր: Այս ճանապարհով,

այս ուղղութեամբ ընթացել եմ՝ երբեմն մահուչափ ծանր հանդամանքներում. քրիստոնեայ մարդկանց և կանանց կապել էի տալիս և բանտ ուղարկում: Այդ մասին կվկայեն քահանայապետը և ծերերի ամբողջ ժողովը, որից թղթով իրաւունք ստացայ՝ Դամասկոս գնալու և այնտեղ եղած հաւատացեալներին կապած Երուսաղէմ ուղարկելու, որպէսզի պատժեն: Երբ Դամասկոսին մօտեցայ կես օրուայ դէմ, յանկարծ սաստիկ լոյս փայլեց չորս կտղմս: Ես վայր ընկայ գետին և մի ձայն լսեցի, որ ասում էր—Սաւակ, Սաւակ, ինչու ես հալածում ինձ: Ես հարցրի—Տէր, ով ես գու: Զայնը պատասխանեց ինձ—ես Յիսուս Նազովրեցին եմ, որին գու հալածում ես: Իմ ուղեկիցները երկիւզով լցուեցան, լոյսը տեսնում էին, բայց ինձ հետ խօսողի ձայնը չէին լսում: Այն ժամանակ ես հարցրի—Տէր, ինչ անեմ: Տէրը պատասխանեց—վեր կաց և գնա Դամասկոս, այնտեղ կպատմուի քեզ, թէ ինչ պիտի անես: Լուսոյ փայլատակելուց յետոյ ես այլ ևս չէի տեսնում, կոյր էի, ձեռից բռնած մտայ Դամասկոս: Այդ քաղաքում բնակւում էր ըստ օրինի, մի երկիւզած մարդ՝ Անանիա անունով, որը լաւ անուն ունէր Դամասկոսի բոլոր հրէաների մէջ: Սա ինձ մօտ եկաւ և ասաց—Սաւակ եղբայր, վիր նայիր և նայեցի: Անանիան ասաց—մեր հայրերի Աստուածը՝ ի սկզբանէ անտի ընտրել է քեզ, որ նրա կամքը ճանաչես և այն Արդարին՝ Յիսուս Քրիստոսին տեսնես և նրա քե-

րանից լսես ձայնը, ինչպէս և լսեցիր Դամասկոսի ճանապարհին: Ինչ որ տեսար և լսեցիր, այդ ամենի համար պիտի վկայես բոլոր մարդոց առաջ: Էլ ինչ ես ուշանում, վեր կաց, մկրտուիր և լուա քո սեղքերը Տիրոջ անունը կանչելով: Երեք տարուց յետոյ ես դարձալ Երուսաղէմ: Երբ տաճարումն ազօթում էի իմ ազգի որդոց դարձի համար, զարմացքը պատեց ինձ: Ես տեսայ Փրկչին, որ ինձ ասում էր—շտապիր, շուտ կուրս եկ Երուսաղէմից, իմ մասին տուած վկայութիւնդ սրանք չեն ընդունելու: Ես ասացի—Տէր, իրանք ես գիտեն, որ ես բանտարկել էի տալիս և պատժում էի քեզ հաւատացողներին: Երբ քո վկայ Ստեփաննոսին քարկոծում էին: Ես ինքս նրա մօտ կանգնած էի, նրա սպանմանը մասնակից էի և սպանողների հանդերձներն էի պահում: Փրկիչն ասաց—հեռացիր Երուսաղէմից, ես քեզ հեռու երկիրներ պիտի ուղարկեմ հեթանոսների մէջ»: Մինչև այս խօսքն ականջ էին գնում նրան, իսկ սրանից յետոյ աղմուկ բարձրացրին և ասում էին: «Այսպիսի մարդը արժանի չէ, որ աշխարհիս վրայ ապրէ, բարձ գդա»: Այս ասացին, հանդերձները հանեցին՝ կարծես ուղում էին քարկոծել և փոշին օդի մէջ ցըռել: Երբ այս նոր աղմուկը տեսաւ հաղարապետը, հրամայեց Պօղոսին զօրանոց տանել և ձաղելով մտրակելով ստիպել առաքեալին խոստովանելու իւր յանցանքը: Երբ կաշէ փոկերով պրկեցին նրան, Պօղոսն ասաց մօտը կանդ-

նող հարիւրապետին. «Արգեօք իրաւացի է, որ դուք մի հռովմայեցի և դեռ չփատալարտուած մարդու ծեծում էք»: Երբ հարիւրապետը իմացաւ, որ Պօղոսը չուովմայ քաղաքացի է, մօտեցաւ հազարապետին և ասաց. «Զգուշացիր ինչ որ կամենում ես անել, այս մարդը չուովմայ քաղաքացի է»: Հազարապետն խկոյն մօտ եկաւ և հարցրեց. «Ասա ինձ, իրաւ է, որ դու չուովմայ քաղաքացի ես»: Պօղոսը պատասխանեց. «Այս: Հազարապետն ասաց. «Ես մեծաքանակ դրամով եմ ձեռք բերել չուովմայ քաղաքացիութեան իրաւունքը, չեմ կարծում թէ դու կարող լինէիր այդ ճանապարհով նոյն իրաւունքն ստանալու»: Պօղոսը պատասխանեց. «Ընդհակառակն՝ ես ոչ թէ դրամով եմ ստացել չուովմայ քաղաքացիութեան իրաւունքը, այլ իրրե չուովմայ քաղաքացի եմ ծնուել»: Հազարապետն այլ պատուէր տուաւ և Պօղոսին մըտրակելու պատրաստուած մարդիկն խկոյն հեռացան: Հազարապետը, երբ ճշտեց Պօղոսի չուովմայ քաղաքացի լինելը, շատ վախեցաւ, որովհետև առանց նրայանցանքը հաստատելու կապել էր տուել՝ հակառակ հռովմէական օրինաց:

4. (իռ. 30. և իգ. 1—11)

Հետեւեալ օրը. այսինքն մայիսի 18-ին հազարապետը կամեցաւ ճիշտն իմանալ, թէ հրէաներն ինչու համար են զանգատուում Պօղոսից: Բանարդիկը կապանքներն արձակել տուաւ. հրամայեց քա-

հանայապետներին և ատենի բոլոր անդամներին կանչել. Պօղոսին էլ զօրանոցից հանեց, հետն առաւ և տարաւ նրանց առաջը կանգնացրեց՝ տաճարի մօտ զանուած ժողովարանում: Պօղոսն ատենից նայեց նրանց և ասաց. «Ար եղբարք, ես որպէս խրայէլացի, մանկութիւնիցս սկսած մինչև այսօր ուղիղ մտքով եմ ընթացել Աստուծու առաջ: Անանիա քահանայապետը ծառաներին հրամայեց, որ նրա բերանին զարկեն: Այն ժամանակ Պօղոսն ասաց նրան. «Բոեալ որմ, դու արտաքուստ զեղեցիկ ես երեսում, բայց ներքուստ լիքն ես տղեղութեամբ, Աստուծ էլ քեզ կհարկանէ. դու զատաւորակուն աթուու ես նստել օրէնքով դատելու, թէ հակառակ օրինաց հարկանելու ինձ»: Մօտիկ կանգնողներն ասացին. «Աստուծու քահանայապետին ես հայհոյում»: Պօղոսը պատասխանեց. «Եղբարք, ես չգիտէի, թէ նա քահանայապետ է, որովհետեւ գրուած է, թէ քը ժողովրդի իշխաններին չպիտի հայհոյես»: Եւ երբ Պօղոսն իմացաւ, որ ներկայ եղողների մի մասը սաղուցեցի է, իսկ միւս մասը փարիսեցի, ասաց. «Ար եղբարք, ես փարիսեցի եմ և փարիսեցոյ որդի, ես դատում եմ նրա համար, որ հանգերձեալ կեանկը և յարութիւն մեռելոց եմ քարոզել»: Մրանից յետոյ սաղուկեցիների և փարիսեցիների մէջ երկպառակութիւն ընկաւ, որովհետեւ սաղուկեցիներն ասում էին, թէ ոչ յարութիւն կայ, ոչ հրեշտակ և ոչ հողի, իսկ փարիսեցիք՝ երկուան էլ զաւանուս

Էին։ Մեծ աղմուկ բարձրացաւ—գպիրներից ոմանք՝ 'ի գիմաց փարիսեցւոց վերկացան, պաշտպանում էին Պօղոսին և ասում։ «Ոչինչ յանցանք չենք գտնում այս մարդու մէջ։ Նա հակառակ այս ժողովրդի, հակառակ օրինաց և հակառակ այս տեղի չէ քարոզել, իսկ թէ նա ճանապարհին Դամասկոս գնալիս ոգի է երեացել նրան կամ հրեշտակ և դարձել է նրան, շատ կարելի է ուղիղ է, ինչու ենք մենք Աստուծու հետ մարտնչում։ Երբ խոռվութիւնը սաստկացաւ, հազարապետը երկիւզ կրեց՝ մի գուցէ յարձակուեն և Պօղոսին սպանեն։ ուստի զինուորներին հրամայեց, որ զօրանոց տանեն նրան։ Հետեւալ գիշերը Տէրը կանգնեց նրա մօտ և ասաց. «Քաջացիր, Պօղոս, ինչպէս որ ինձ համար երուսաղէմում վկայեցիր, այդպէս էլ պէտք է չոռմում վկայես»։

Գործք առք. ե. 38, 39. «Զի եթէ 'ի մարդկանէ իցէ խորհուրդ այդ կամ գործդ՝ քակտեսցի, ապա թէ յԱստուծոյ է, ոչ կարէք քակտել գդոսա, գուցէ եւ աստուծամարտք լինիցիք»։

Յովհ. Ժդ. 35. «Յայսմ գիտացեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք իցէք»։

I. թ. Պտր. թ. 21. «Զի եւ Քըիստոս վասն ձեր մեռաւ եւ ձեզ եթող օրինակ, զի դիետ երթայցէք հետոց նորա»։

Թ. ա. Փլա. թ. 5. «Զայն խորհեցի իւրաքանչիր ոք 'ի ձէնջ, որ եւ 'ի Քըիստոս Յիսուս»։

Գ Ե Խ Ծ Ա Ն Ս Ի Թ Ւ Ի Ն Պ Օ Ղ Ա Ս Ի Դ Ե Մ

(իգ. 12—35)

Հետեւալ օրը, այսինքն մայիսի 19-ին քառասուն հոդի երգուեցին՝ չուտեն, չխմեն՝ մինչև որ Պօղոսին չսպանեն։ Դոքա եկան քահանայապետների, երէցների մօտ ու ասացին. «Նղովիւք նղովեցաք զանձինս՝ ոչինչ ճաշակել մինչեւ սպանցուք զՊաւոս»։ Միայն գուք ատենի հետ միասին՝ յայտնեցէք հազարապետին, որ Պօղոսին նորից ատեան իջեցնէ, որպէս թէ զործն ուզում էք աւելի ճիշտ քննել, իսկ մենք ճանապարհին՝ մինչև ատեան իջնելը. կսպանենք նրան, այնպէս որ գուք նրա հետ ոչինչ գործ չէք ունենայ։ Պօղոսի քրոջ որպին լսեց այս գաւաճանութիւնը. զօրանոց գնաց և եղելութիւնը պատմեց առաքեալին։ Սա էլ յայտնեց այն հարիւրապետին, որի հակողութեանը յանձնուած էր և ասաց. «Այս պատանին հազարապետի մօտ տար, պատմելու բան ունի նրան»։ Սա էլ տարաւ հազարապետի մօտ և ասաց. «Կապուած Պօղոսն ինձ կանչեց և աղաչեց այս պատանուն քեզ մօտ քերել, բան ունի յայտնելու. Հազարապետը պատանու ձեռից բռնեց, առանձին տեղ տարաւ և ասաց. «Ի՞նչ բան ունիս ինձ տաելու»։ Պատանին պատասխանեց. «Հրէաներից քառասուն հոգի ուխտել են՝ չուտել, չխմել՝

մինչև որ Պօղոսին չսպանեն: Վազն ատենի անգամները քեզ պիտի խնդրեն Պօղոսին նորից ատեան իշեցնել, որպէս թէ գործը ճշմարտութեամբ են ուզում քննել, իսկ Պօղոսն ատեան չհասած՝ քառասուն դաւաճանները ճանապարհին պիտի սպանեն նրան: Դու չսխալուես, նրանք պատրաստ քո հրամանին են սպասում»: Հաղարապետն այս պատանուն արձակեց և պատուիրեց ոչ ոքի չասէ իրան գաղտնիք յայտնելը, որպէսզի դաւաճանները օգուտ չըազգեն սրանից: Հաղարապետը հարիւրապետներից երկուսին իսկոյն կանչեց և տսաց. «Գիշերուայ ժամը 3-ին պատրաստեցէք երկու հարիւր զինուոր, եօթանառւն հեծելազօր, երկու հարիւր տիպաւոր՝ նոյնպէս գրաստներ, որպէսզի Պօղոսին հեծցնէք և Կեսարիա տանէր Փելիքս կուսակալի մօտ: Հաղարապետը կուսակալին նամակ ես գրեց, որի պարունակութիւնն այս էր. «Կտագիաս Լիւսիաս քաջ գատաւոր Փելիքսին ողջոյն: Այս մարդուն հրէաները ըլունել էին և քիչ էր մ'նացել, որ սպանէին. ես զինուորներով վրայ հասայ, աղատեցի, վերջը յայտնուեց, որ սա Հռովմայ քաղաքացի է: Ես կամեցայ իմանալ սրա յանցանքը, որի համար զանգաւում էին հրէտները, ուստի իշեցրի նրանց ատեանը: Քննութիւնից նկատեցի, որ հրէաները մեղադրում էին սրան իբանց օրէնքի դէմ մեղանչելու համար, մեռնելու կամ կապուելու արժանի ոչինչ յանցանք չունի: Ես տեղեկացայ, որ հրէաները նենպութեամբ են վերա

բերում դէպի այս մարդը և մտադիր են ծածուկ սպանել. իսկոյն քեզ մօտ ուղարկեցի և չարախոսներին էլ հրամայեցի, որ գան քո առաջ խօսեն: Ողջ կաց»: Զինուորները հրամանի հոմաձայն՝ Պօղոսին գիշերով առան և տարան Անտիպատրիս քաղաքը: Հետեւեալ օրը մայիսի 20-ին հետեւակ զօրքելը յետ դարձան Երուսաղէմ, որովհետեւ հրէաների կողմից այլ ևս վտանգ չկար, իսկ ձիաւոր զօրքը Կեսարիա զնաց, թուղթը կուսակալին յանձնեց և Պօղոսին նրա առաջ կանգնացրեց: Կուսակալը, երբ ժուղթը կարդաց, հարցրեց թէ նրտեղացի է և երբ տեղեկացաւ, որ Կիլիկիայիցն է, ասաց. «Քեզ կլսեմ, երբ քո դէմ չարախոսողներն էլ կզան»: Կուսակալը հրամայեց Պօղոսին տանեւ չերովդէսի պալատը և այն տեղ պահել.

Յովհ. ժդ. 35. «Յայսմ գիտացեն»:

Սղմ. ժխդ. 20. «Պահէ տէր գամենեսեան»:

Սղմ. խթ. 15 «Կարդացես առիս յաւոր»:

Յովհ. ժ. 12. «Զկեանս եւ զողորմութիւն եղեք 'ի վերայ իմ»:

Սղմ. հէ. 5. «Յայտնեա առաջի տեառն»:

Սղմ. իր. 4. «Թէպէտ եւ գնացից ես 'ի մէջ»:

Սղմ. ին. 2. «Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն, օգնական 'ի վերայ նեղութեանց, որ զտին զմեզ յոյժ»:

Սղմ. ճի. 1, 2. «Համբարձի զաշս իմ 'ի լերինս ուստի եկեցէ ինձ օգնութիւն»:

22

ՊՈՂՈՎՐ ՓԵԼԻՔՍԻ, ՓԵՍՏՈՎԻ ԵՒ ԱԳՐԻՊՊԱՅԻ ԱՐԱԶ

11.

1. (*h*₁, 1-24)

Հինգ օրից յետոյ, այսինքն մայիսի 26-ին Պօղոսի թշնամիները՝ Անանիա քահանայապետը խւրկուսակից ծերերի և մի ոմն ճարտար խօսով Տերտուլիոսի հետ միասին գնացին Կեսարիա և Ներկայացան կուսակալին՝ յայտնելով որ Պօղոսի դատի համար են եկած։ Առեան կազմուեց. Պօղոսին դուրս բերին. ճարտարախօս Տերտուլիոսը առաքեալին այսպէս սկսեց ամբաստանել և ասել. «Քո իշխանութեան օրօք՝ քեզ յանձնուած երկիրը խաղաղութիւն է վայելել. Տրէից ազդի համար շատ օգտաւէտ հոգատարութիւններ ես արել ամեն ուրեք. շատ շնորհակալ ենք քեզնից, ո՞վ քաջդ Փելլիս։ Բայց, որպէսզի աւելի նեղութիւն շպատճառեմ քեզ, աղաջում եմ՝ համառօտակի լսել մեզ՝ բեղ յատուկ հեղութեամբ։ Մենք գտանք, որ այս մարդը վնասակար է—մի երկրից միւսն է անցնում և խւր թունաւոր քարոզութիւններով ամենուրեք Տրէաներին խռովում է. իրան նաղովրեցու աղանդի առաջնորդ և ժողովրդի ճշմարիտ պաշտպան է համարում. նա առում է, որ Ցի-

սուս նաղովրեցին Քրիստոսն է. մեր տաճարը կամեցաւ պղծել, ուստի մենք էլ բանեցինք և մեր օրէնքով կամենում էինք դատել և եթէ այդ դատը տեղի էր ունեցել, քեզ այժմ չէինք ձանձրացնի այսպիսի վիճաբանութիւններով։ Սակայն Հիւսիս հազարապետը եկաւ, բռնութեամբ խլեց մեզնից սրան և նրա դատախազներին էլ հրամայեց քեզ մօտ դալ, որ գու վերաքննելով դատը՝ տեղեկանաս այն ամենի մասին, որ մենք զանդատուում ենք զրա դէմ։ Անանիան և իւր հետ եկած ծերերը՝ խնդրին ոյժ տուլու համար, միաբերան աղաղակեցին և վկայեցին, որ այդպէս է։ Երբ մի կողմը իւր ասելիքը վերջացրեց, կուսակալը միւս կողմին իրաւունք տուաւ խօսելու, ուստի ակնարկեց Պօլասին, որ պատասխան տայ և նա էլ այսպէս պատասխանեց. «Դու երկար տարիներ դատաւոր ես այս ազգին. ճանաչում ես նրան. ես ինձ երջանիկ եմ համարում, որ մի այդպիսի դատաւորի առաջ իմ կանգնած, ուստի և յօժարութեամբ կպատասխանեմ այն բոլոր մեղադրանքներին, որ ինձ վրայ են բարդում։ Դու հեշտութեամբ կարող ես ստուգել, որ 12 օր սրանից առաջ ես կեսարիայից գուրս եկայ և ուստ գնացի երուսաղէմ։ ինձ տաճարում շեն տեսել մէկի հետ խօսելիս, կամ ժողովրդի բազմութիւնը զլսիս հաւաքած խռովութիւն անելիս. այդ կարճ ժամանակուայ մէջ ես ոչ մի ժողովարանում շեմ եղել և ոչ քաղաքի մէջ մէկի հետ խօսել եմ. իմ հակառակորդները ոչ մի

փաստով չեն կարող հաստատել ձեր առաջ յիշած ամբատանութիւնները, դոքա լոկ խօսքեր են, որ կրկնում են, թէ մենք այս մարդուն վնասակար ենք համարում, թէ հրէաներին թունարում է ամենուրեք իւր քարոզութիւններով։ Այս ևս պիտի խոստովանիմ ձեզ, որ այն ճանապարհը, սրով ես լնթանում եմ և որին նրանք հերձուած են համարում, իմ նախահայրերի՝ Աբրահամի, Խսահակի և Յակովի ճանապարհն է, որով նրանք պաշտել են Աստուծուն և այդ բանի մասին գրուած է օրէնքի և մարդարէութեան մէջ—ճիշտ է ես այդ ամենին հաւատում եմ։ Այս հաւատով յոյս ոմնիմ առ Աստուծած, որին գրանք ես սպասում են և որոյ անունով փոքր ինչ առաջ Տերտուլիոսը խօսեց, թէ արդարների և մեղաւորների յարութիւն պիտի լինի և հենց սրան էլ ջանք եմ անում, որ ամեն ժամանակ մաքուր խիզճ ունենամ, թէ Աստուծու և թէ մարդոց առաջ։ Ինչ վերաբերում է նրան, թէ ես տաճարը պղծել եմ, պիտի ասեմ, ես երկար տարիներ օտար երկրում եմ եղել, որից յետոյ Երուսաղէմ դարձայ։ Վերապարձին հետո էլ տուրք՝ ովորմութիւն բերի իմ ազգակիցների համար, որովհետեւ հրէաներից բավկացած մի խումբ ըրիստոնեայ համայնք կար Երուսաղէմում։ Ճիշտ է տաճարում ես զոհ եմ արել և այնպէս իմ պարտը կատարել, որպէս հրէայ։ Այդ զոհի ժամանակ Ասլայից յետոյ կուսակալի մօտ եկաւ Փելիքուր իւր կին Թրուսիլայի հետ միասին։ Սա ազգով

ինձ, բայց ոչ թէ ժողովրդի բազմութիւնը զլսիս հաւաքած խոռվելիս, այլ զոհ մատուցանելիս։ Եթէ ես մի այգախսի յանցանք գործած լինէի, նրանք անշուշտ կդային քեզ մօտ և կրողոքէին ինձնից։ Իոկալան վկաներ չկան. իսկ քահանայապետը և ծերերը, որոնք նոցա փոխարինում են, ինչն համար ատենում հարցարնութեան ժամանակ՝ ի ներկայութեան Լիւսիասի ինձ շմեղագրեցին և այդ բանում։ Ընդհակառակն ատենում ժողովականների մէջ հակառակութիւն տեղի ունեցաւ։ Երկու մասնի բաժանուեցան, երբ ես ասացի, թէ հաւատում եմ մեռել ների յարութեանը, դրա համար էք ինձ գատի կանչել։ Փելիքուր լսեց Պօղոսի պատասխանը։ Սա այն համոզումը կաղմեց խնդրի վերաբերութեամբ, որ Պօղոսն արդար է, որ հրէաները նախանձից են գրգռուած սրա գէմ, բայց երեսպաշտ էր, չուզեց վիրաւորել հրէաներին և վճիռ գնել խնդրին, այլ ասաց Անանիային և նրա հետ եկողներին, թէ երբ Լիւսիասը կդայ, ես կտեղեկանամ և այնպէս որոշում կտամ։ Ուստի Փելիքուր հրէաներին դուր գալու համար, հրամայեց Պօղոսին գարձեալ զինուորական հսկողութեան տակ պահել, իսկ միւս կողմից ազատութիւն տուաւ առաքեալին, որ ոչ ոքի չարգելեն նրան ծառայելու կամ նրա մօտ գնալու։

2. (24—27)

Մի քանի օրից յետոյ կուսակալի մօտ եկաւ Փելիքուր իւր կին Թրուսիլայի հետ միասին։ Սա ազգով

հրէալ էր, ծագումով չերտպիէս Ազրիալսա Ի-ի աղջիկը։ Փելիքսը Պօղոսին իւր մօտ կանչեց և ըստ իւր ցանկութեան, քրիստոնէական հաւատոյ մասին շատ բաներ լսեց առաքեալից, որոյ մասին վայր ի վերոյ տեղեկութիւններ ունէր։ Երբ Պօղոսը խօսում էր արդարութեան, ժուժկալութեան և հանգերձեալ դատաստանի մասին, Փելիքսն այն աստիճանի երկիւդի տպաւորութեան ենթարկուեց, որ անմիջապէս պատուիրեց ընդհատել խօսքը—նա ասաց. «Դու այժմ գնա, երբ ժամանակ կունենամ, նորից կիանչեմ և կշարունակես քո խօսքը»։ Փելիքսը յոյս ունէր Պօղոսից կաշառք ստանալ, զրա համար էլ յաճախ կանչում էր իւր մօտ և հետը խօսում։ Երկու տարուց յետոյ, այն է 60 լժ. Փելիքսի տեղ եկաւ Փեստոս Պորկիոսը։ Սա թէն համոզուած էր, որ հրէաների դատը Պօղոսի գէմ կարելի էր մերժել և իրան էլ ազատութիւն շնորհել, բայց նրանց սիրով շահելու համար՝ անմեղին կապած թողեց։

Բ.

(իե. 1—12)

Պաշտօնն ստանձնելուց երեք օր յետոյ՝ Փեստոսը Կեսարիայից երուսաղէմ գնաց, որպէսպի՛ իբրև նոր մարդ, տեղական հանգամանքների հետ ծանօթանայ։ Քահանայապետը Պօղոսի հակառակորդների պարագլուխների հետ նոր կուսակալին ներկայացաւ և խնդրեց, որ առաքեալին Երուսաղէմ կանչէ և իւր

նախորդից անվճիռ թողած գործին վերջ դնէ։ Սրանց գիտաւորութիւնը նոյնն էր—վերապառնալիս՝ ճանապարհին դարան մտած մարդիկը յարձակուեն Պօղոսի վրայ և սպանեն։ Բայց Փեստոսը սկատախիանեց և ասաց. «Պօղոսը Կեսարիայում կմնայ. ես կարճ ժամանակից յետոյ պիտի գառնամ. թնդ գանգատաւորներն ինձ հետ գան, այնտեղ կդատենք և եթէ այն մարդը մի յանցանք կունենայ, ըստ այնմ էլ հատուցումն կլինի»։

Ուժը, տասն օրից յետոյ Փեստոսը դարձաւ Կեսարիա։ Էետենեալ օրն անմիջապէս ատեան կազմեց և հրամայեց Պօղոսին գուրս բերել։ Երուսաղէսից եկած դատախազները ծանր յանցանքներ բարգեցին Պօղոսի վրայ, բայց չնայելով գործ դրած ամեն մի աններելի միջոցներին և կեղծ վկաների սխալ ցուցմունքներին, այնուամենայնիւ ոչինչ չկարողացան ապացուցանել, որովհետեւ մեղադրեալը զօրաւոր կերպով հերթում էր, որ նա ոչ հրէից օրինաց, ոչ տաճարի և ոչ կայսեր դէմ որիէ յանցանք դործել է։ Փեստոսը հրէաներին հտճոյք պատճառելու մտքով շուղեց վճիռ տալ, այլ դարձաւ Պօղոսին և ասաց. «Որովհետեւ քեզ միզադրում են, որ դու հայրենի օրինաց դէմ մեղանչել ես և տաճարը պղծել, իսկ սոքա այնպիսի խնդիրներ են, որ հոռվմէական օրէնքով վերջնական որոշում չի տրւում, այս պատճառով չէիր կամենայ արդեօք Երուսաղէմ գնալ և այնտեղ դատուել իմ ներկայութեամբ»։ Պօղոսը տեսաւ,

որ Փեստոսը հաճոյանում է հրէաներին, քաջութիւն չունի իւր անմեղութիւնը պաշտպանելու, պատասխանեց և ասաց. «Ես կայսերական ատենումն եմ. այստեղ էլ պիտի դատուիմ. հրէաներին ես ոչինչ չեմ արել. այդ ինքդ էլ քաջ գիտես, ուրեմն ինչ կարիք կայ ինձ Երուսաղէմ ուղարկելու; Եթէ ես վնասակար ոմն եմ և մահու արժանի որեւէ յանցանք և՛ գործել, թնդ դատուիմ, երկիւզ շունիմ մահու պատճից, իսկ եթէ հակառակորդներիս մեղադրանքներն անհիմն են, այն ժամանակ ինձ ոչ ոք իրաւունք չունի սրանց յանձնելու—ես չոռվմայ քաղաքացի եմ, կայսեր քողոքելու իրաւունք ունիմ»: Փեստոսը Ժողով կազմեց իւր խորհրդականների հետ և այսպէս պատասխան տուաւ Պօղոսին. «Երբ կայսեր բողոքելու իրաւունք ունիս, կայսեր մօտ էլ կպնաս»:

9.

1. (իԵ. 13—26)

Մի քանի օրից յիտոյ չրէաստանի Ժագաւոր Ազրիպասը իւր Բերենիկէ կնոշ հետ Կեսարիա եկաւ ներկայանալու նորեկ կուսակալին և չնորհաւորելու նորա գալուստը: Որովհետև սոքա երկար ժամանակ մնացին այնտեղ, ուստի Փեստոսը Պօղոսի գործի մասին թագաւորին այսպէս պատմեց. «Փելլիքսի ժամանակից սկսած այստեղ մի քանտարկուած մարդ կայ, երբ ես Երուսաղէմումն էի, քահանայապետները և հրէաների զլսաւորները ինդրեցին, որ այս

մարդուն դատապարտեմ: Ես պատասխանեցի նրանց, թէ չոռվմայեցւոց օրէնքը պահանջում է ամբառանեալին իրաւունք տալ, որ նա իւր դատախազի մեղադրանքներին պատասխանէ: Երբ հրէաները այստեղ եկան, հետեւեալ օրն անմիջապէս ատեան կազմեցի: Ես կարծում էի, թէ այս բանտարկեալը կամ մարդասպան, կամ խոնվարար և կամ դրամանենով ոմն կլինի, բայց հակառակորդների ցուցմունքից այդ չերևաց: Նրանք մեղադրում էին սրան, որպէս թէ իրենց հայրենի օրէնքը չէ յարգել, տաճարը պղծել է և մի ոմն մեռած Յիսուսի մասին ասում է, թէ կենդանի է: Ես դժուարացայ այս խնդիրները քըննելու, ուստի առաջարկեցի Պօղոսին Երուսաղէմ գընալ և այնտեղ քննուել: Վերջինս ցանկացաւ, իրաւունք համարեց իրան կայսեր բողոքելու, որպէս չոռվմայ քաղաքացի, ուստի ես էլ պահեցի, որ կայսեր ուղարկեմ»: Այն ժամանակ Ազրիպատն ասաց Փեստոսին. «Ես ևս կլամենայի լսել այդ մարդուն»: Նա պատասխանեց. «Վազը կլսես: Հետեւեալ օրը, երբ Ազրիպասը և Բերենիկէն մեծ հանդիսով հազարապետների և քաղաքի պատուաւոր անձանց հետ ատեան մտան, Փեստոսը հրամայեց Պօղոսին ներս բերել: Փեստոսն ասաց. «Մ'կ Ազրիպատ Ժագաւոր և գուք՝ ներկայ հանդիսատեսներ, հրէից ժողովուրդը թէ Երուսաղէմում և թէ այստեղ բողոքեց այս մարդուց և խնդրեց ինձ դատապարտել սրան: Ես քննեցի նրանց բողոքը—երեաց, որ սա մահու պա-

տիժ ստանալու յանցանք չէ զործել։ Սա ևս իւր կողմից, որպէս Հռովմի քաղաքացի, իրաւունք համարեց իրան կայսեր բոլորելու. Ես Ժողով կազմեցի իմ խորհրդականների հետ և որոշեցինք սրան Հռովմ ուղարկել։ Ինձ ոչինչ յանցանք յայտնի չէ սրա մասին, որ ես իմ կայսեր կարստանամ դրել, ուստի ձեր առաջը բերի, մանաւանդ քո, ով Ագրիպաս թագաւոր, որ զոք վերաբնէք սրան և ինձ միջոց տաք կայսեր մի բան դրելու—ինձ անմիտ է թւում՝ կայսեր մօտ յանցաւոր ուղարկել առանց յանցանքը յիշելու»։

2. (հզ. 1—32)

Ագրիպաս թագաւորն ասաց Պօղոսին. Այժմ իրաւունք ունիս քեզ պաշտպաններու համար խօսեր։ Պօղոսը բարձրացրեց ձեռը, որից շղթան կախուած էր և յունական լեզուով այսպէս սկսաւ խօսել. «Են ամենի մասին, որոց համար հրէաները զանգաւում են ինձնից, ով Ագրիպաս թագաւոր, երջանիկ եմ համարում ինձ, որ այսօր քո առաջը պիտի պատասխան տամ, որովհետեւ դու տեղեակ ես հրէց կրօնին և սովորութիւններին, ուրեմն և աւելի ձեռնահաս՝ ուղիղ գատաստան անելու, ուստի աղաչում եմ քեզ՝ համբերութեամբ լսել ինձ։ Իմ մանկութիւնը Երուսաղէմումն եմ անցկացրել, այս իրողութիւնը ծանօթ է բոլոր հրէաներին, իմ անցեալ կիանքի մասին, եթէ կամենան, կարող են իրանք վկայութիւն տալ։ Մեր կրօնի ճշմարտագոյն կուսակցութեան հա-

մեմատ՝ փարիսեցի եմ ապրել։ Այժմ ինձ մեզազրում են, որ ես յոյս եմ յայտնում, հաւատում եմ այն աւետիքին, որ Աստուած մեր հայրերին խոստացել է, աւետիք, որ երկոտասան աղքատոհմը գիշեր ցերեկ պաշտօն մատուցանելով՝ աղօթելով սպասում էր հասնել—ահա այդ յոյսն ունենալու համար է, որ ես ամբաստանուում եմ հրէաներից, ով Ագրիպաս թագաւոր։ Ինչո՞ւ համար անհաւատալու բան է թւում ձեղ, որ Աստուած մեռկներին յարութիւն է տալիս —ինչպէս մնկը հաւատացեալներս վկայում ենք խաչեալ և թագեալ Յիսուս Քրիստոսի մասին։ Ես երբեմն հալածում էի այդ նազովրեցի Յիսուսի հաւատացեալներին։ Քանի քանիսին հալածեցի երտսաղէմում. քանի սրբերի բանտարկեցի։ Դեռ այս ամենը փոքր համարելով՝ քահանայապետիցն էլ իրաւունք ստացայ Գամասկոս գնալու, որ այնտեղի հաւատացեալներին ես հալածեմ։ Բայց, արքա Ագրիպաս, կէս օրուայ ժամանակին ինչ տեսայ—երկնքից արեգակի լուսիցն աւելի պայծառ բյուժագեց իմ և ինձ հետ գնացողների շորս կողմը։ Մենք ամենքս զետնի վրայ ընկանք, յանկարծ մի ձայն լսեցի, որ երբայեցւոց բարբառով ասում էր ինձ. «Սաւնալ, Սաւնալ զի հալածես զիս, խիստ է քեզ ընդգէմ խթանի աքացեր։ Ես հարցըրի—զու ով ես։ Զայնը պատասխանեց—ես այն Յիսուսն եմ, որին դու հալածում ես, վեր կաց և կանգնիր, ես քեզ նրա համար երենցայ, որ քեզ պաշտօնեալ և վկայ-

դարձնեմ այն բաներին, ինչ որ տեսար, ես՝ ի մեռելոց յարուցեալ, Աստուծու աջ կողմը նստող Փըրկիչն եմ, ես կամենում եմ քեզ ազատել իսրայէլացիներից և հեթանոսներից, որոց մէջ այժմ քեզ ուզարկում եմ, որպէսզի նրանց աշքերը բանաս, խաւարից դէպի լոյս և սատանայի իշխանութիւնից դէպի Աստուած առաջնորդես՝ որպէսզի ինձ հաւատաւովի իրանց մեղքերին թագութիւն և սրբերի հետ ժառանգութիւն ստանան: Ուստի, ով Ազրիպալաս թագաւոր, ես անհնազանդ չգտնուեցայ այն երկնային տեսիլքին, այլ՝ ամենից առաջ պատմեցի այս բանը Դամասկոսում, Երուսաղէմում, բոլոր Հրէտատանում և ապա հեթանոսներին, որ նրանք ապաշխարեն և դառնան դէպի Աստուածորդին՝ ապաշխարութեան արժանի գործեր կատարելով: Ահա, այս խօսակցութեանս համար հրէտաներն ինձ տաճարում բռնեցին և կամենում էին սպանել: Բայց Աստուծուց ինձ օգնութիւն եկաւ և մինչև այսօր ես կենդանի մնացած՝ վկայում եմ թէ փոքրին և թէ մեծին այն ամենը՝ ինչ որ մարդարէները և Մոլիսէսը մարդարէացել էին գալոցի մասին—այն է՝ Քրիստոս պիտի շարչարուի և նա առաջին անգամ ինքը պիտի մեռել ներից յարութիւն առնէ և լոյս քարողէ ժողովրդին և հեթանոսներին»:

Երբ Պօղոսը իւր պատասխանը վերջացեց, Փետոսը բարձր ձայնով ասաց. «Քեզ մոռանում ես Պօղոս, շատ կարգալուց մոլորեկ ես»: Պօղոսն ասաց.

«Ես չեմ մոռանում ինձ, ով աղնիւ Փետոս, այլ ձշմարտութիւն եմ խօսում. այս միենոյն բաները թագաւորն էլ գիտէ, որի հետ ես այսպէս համարձակ խօսում եմ, որովհետեւ ոտ ծածուկ տեղ, անկիւններում չէ կատարուած: Հաւատնում ես մարդարէներին, ով Ազրիպալաս թագաւոր: Գիտեմ որ հաւատում ես»: Այն ժամանակ Ազրիպալասը պատասխանեց. «Քիչ է մնում, որ ինձ ես համոզես քրիստոնեայ լինելու»: Պօղոսն ասաց. «Աստուածանից կխնդրեմ, ոչ թէ միայն զու, այլև այն ամենը, որոնք այսօր լսում են ինձ՝ այնպէս լինեն, ինչպէս ես եմ՝ բացառութեամբ այս շղթաների»: Սրանից յետոյ վերկացան տեղերից թագաւորը, բերենիկէն և նրանց հետ եղողները: Գնալիս իրար հետ խօսում էին և ասում. «Այս մարդը մեռնելու կամ կապանքի արժանի ոչինչ չէ գործել»: Իսկ Ազրիպալասը Փետոսին աւելացրեց. «Կարելի էր սրան արձակել, եթէ կայսեր բողոքած վինէր»:

V. Մովս. ա. 17. «Դատաստանն Աստուծոյ է»:

Յովհ. դ. 20. «Զի ամենայն որ զշար գործէ՝ ատեայ զլոյս և ոչ զայ առ լոյսն»:

Գործք առաք. թ. 15. «Անօթ ընարութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց եւ թագաւորաց եւ որդւոցն իսրայէլի»:

Եսայի ծհ. 8. «Զի ոչ են խորհուրդը իմ իրեւ զիսրհուրդը ձեր»:

Ժամապիլք. «Եւ զխորհուրդն զոր խորհիք խափանէ
աւէր, զի Աստուած ընդ մեղ է»:

23

ՊՈՂՈՍԻ ՈՒՂԵՒԱՐՈՒԹԻՒՆԸ ԴԻՊԱՅԻ

1. (հէ. 1—5)

Աղբիպասի խօսքերը շագգեցին Փեստոսի վրայ, նա իւր նախկին սրոշումը կամեցաւ 'ի կատար ածել—երբ դու կայսերն ես բողոքել, կայսեր մօտ էլ կդնաս: Ուստի նոր կուսակալը հրամայեց, որ Պօղոսին նաւով Խտալիս տանեն: Առաքեալին մի քանի ուրիշ կապեալների հետ յանձնեցին Յուլիս անունով հարիւրապետին, որ Մեթաստեան գնացիցն էր: 60 թուի աշնանը Աղբամենտ քաղաքը գնացող մի նաւ նստան և հեռացան Կեսարիայից: Մրոնց հետ գնաց, Արիստարքոս Մակեդոնացին, որ Պօղոսին ծառայում էր նրա Կեսարիայում քանտարկուած ամբողջ ժամանակամիջոցում: Հետևեալ օրը հասան Սիրոն: Նաւն այնտեղ մի քանի օր սպասեց: Պօղոսը զրաւել էր հարիւրապետի սէրը և հաւատարմութիւնը, ուստի աղատութիւն տուաւ առաքեալին այցելելու այնտեղի քրիստոնեաներին և խնամք գտնելու նրանցից: Սիրոնից գուրս եկան և նաւեցին գէպի հիւսիս: Կիպրոս կղզու հիւսիսային ծայրի մօտ թեքուելով՝ անցան Կիլիկիայի և Պամիլիլիայի առաջովը՝ հասան Միւռա քաղաքը, որ գտանւում է Լիլիայում:

2. (հէ. 6—20)

Հայրիւրապետն այնտեղ Աղէքսանդրիայիցն ե-կած մի նաւ գտաւ, որը Խտալիս պիտի գնար և Պօղոսին միւսների հետ այնտեղ տեղափոխեց: Այս-տեղից շատ օրեր ծանր նաւելով հաղիւ հասան Կը-նիկայի կողմերը, ուր թէն ցանկանում էին ցամաք գուրս գալ, բայց հոգմն արգելում էր, ուստի փո-խանակ ուղղակի գէպի արևմուտք նաւելու, թերուեցան հարաւ և նաւեցին Կրետէ կղզու Սաղմոն քա-զաքը, որտեղից գժուարութեամբ անցնելով հասան զեղեցիկ նաւահանգիստ կոչուած տեղը, որ մօտ էր Լասուա քաղաքին: Կեսարիայից գուրս գնալուց յե-տոյ շատ ժամանակ էր անցել. աշնանային եղա-նակներ էին. յաջող եղանակ սպասելու յօյս չկար, ուրեմն և յառաջ նաւելը վտանգաւոր էր դառնում և որովհետեւ պահոց ժամանակն էլ անցել էր, ուս-տի Պօղոսը խրատ էր տալիս նրանց և ասում էր, «Ես տեսնում եմ, որ մեր նաւարկութիւնը առանց նեղութեան չի լինելու. մենք ոչ թէ բեռների և նաւի կորստեան երկիւղ անինք, այլև մեր անձերի: Հարիւրապետը նաւի տիրոջը և նաւափարին աւելի էր հաւատում քան թէ Պօղոսին. նրանք երկուոն էլ իրանց անձնական օգուտն՝ ինկատի առնելով առա-քեափ կարծիքին հակառակ էին: Որովհետեւ Լասուա նաւահանգիստն անյարմար էր երեսում ձմեռն անց-կացնելու համար, ուստի շատերը միասին խորհուրդ արին և որոշեցին, որ գնան կրետացւոց Փիւնիկէ

նաւահանգիստը և այնտեղ ձմերեն—այդ նաւահանգիստը նայում էր գէպի հարաւ։ Եւ երբ հարաւային հողմը վշեց, կարծում էին թէ կհամնեն իրանց որոշած տեղը, ուստի Կրետէ կղզու ափերով նաւեցին։ Փոքր ժամանակից յետոյ վշեց հիւսիս արևելեան հողմը. սաստիկ փոթորիկ բարձրացրեց. նաւն այլ ես չեմ կարողանում կառավարել հողմի հակառակ—ամենայն ինչ բաղդին էր թողած։ Այսպէս նրանք հասան մի կղզու, որ Կլաւդա էր կոչում։ Այստեղ հադիւ կարողացան ազատարար մակոյկը բռնել. որ նաւից չբաժանուի, որպէսզի վտանգաւոր վայրկնին կարողանան այնտեղ անցնել և ազատուել։ Այսուհետեւ առագաստն իջեցրին, որ հիւսիս արևելեան հողմը նաւի ընթացքը չարագացնէ և յորձանքի մէջ չձգէ։ Հողմը սաստկանում էր. նաւը խաղալիք էր փոթորիկ ձեռին. ձեռք առած միջոցներն իդուր էին. ստիպուեցան նաւը թեթիայնելու համար կարասիները՝ աման, պղինձ, անկողինք. . . . բոլորն էլ ծովը նետել։ Չատ օրեր ոչ ցերեկն արև և ոչ գիշերն աստղեր էր երևում—մառախուղը պատել էր երկինքը, ձմեռը մօտենում էր, փոթորիկն աւելի և աւելի սաստկանում էր—ամենքն էլ յոյները կտրել էին, թէ կարող են ազատուել։

3. (21—38)

Երկրուղը և հողեկան տագնասին այն ասոիձան պատել էլ ամենի սիրտը, որ նրանք շատ օքք մո-

ռացել էին ուտելլ, ուստի Պօղոսը իրան յատուկ հողեկան խաղաղութեամբ՝ նրանց մէջը կանգնեց և ասաց. «Եթէ գուք ինձ լսած լինէիք և Կրետէից գուրս չէիք եկել, այս նեղութիւնիցը և վնասիցն ազատուած կլինէիք։ Այնտեղ, ճիշտ է, շատ յարմար ալպաստան չէր, բայց և այնպէս կարելի էր ձմեռը սբատսպարուել։ Անցեալն անցել է, այժմ յորդորում եմ ձեզ երկիւղ չկրել, քաջալերուեցէք, բացի նաւից՝ ոչ որի վնաս չի պատահի, որովհետև ինձ երեաց Աստուծու հրեշտակը և ասաց—մի վայսենար, Պօղոս, զու կայսեր ևս պիտի ներկայանաս. բռ կեանքին ոչինչ վտանգ չի սպառնայ. Աստուծ քեզ հետ նաւողների կեանքն էլ քեզ է բաշխել։ Քաջալերուեցէք, ես հաւատացած եմ, որ այսպէս էլ կլինի, ինչպէս որ Աստուծ ինձ հետ խօսել է, նա մեզ մի կղզու վրայ կհանէ»։

Կրետէից գուրս գալուց յետոյ տան և չորս օր անցել էր, իսկ նրանք հազիւ էին մօտեցել Անդրիական ծովին—կէս գիշերին նաւավարները կարծում էին թէ ցամաքի հասած լինին. Բայց որպէսզի ստուգեն իրանց կարծիքը, արճիճի գունտը ծովը նետեցին և տեսան, որ ծովի խորսութիւնը 120 ոտնաշափ է։ Փոքր ինչ էլ յառաջ նաւեցին. երկրորդ անգամ շափեցին ծովի խորքը, երեաց որ 90 ոտնաշափ է այժմ։ Երկիւղ կրելով թէ մի գուցէ խոլթերի են հանդիպել, թերես նաւը ջախջախուի, ետեւ կողմից չորս հատ խարիսխ ձգեցին և սպասում էին

լոյսը բացուելուն։ Նաւավարներն ուզում էին փախչել, մակոյկը ծովը իջեցրին՝ իբր թէ առաջի կողմիցն էլ կամենում են խարիսխ ձգել։ Այն ժամանակ Պօղոսը դարձաւ հարիւրապետին ու դինուորներին, որպէս իշխանութեան ներկայացնող անձանց և ասաց. «Եթէ դոքա նաւից հեռանան, դուք ամենքդ էլ կարող էք վտանգի ենթարկուել—ով պիտի վարէ նաւը»։ Զինուորներն իսկոյն մակոյկի պարանները կտրեցին և դէն ձգեցին։ Դեռ լոյսը չէր բացուել, միժան սպատճառով աշխատել չէր կարելի։ Պօղոսն օգուտ քաղելով այդ աղատ ժամանակից, ամենին էլ յորդորում էր, որ հաց ուտեն։ Նա ասում էր. «Այս տասն և չորս օրէ ինչ դուք անօթի էք և ոչինչ չէք կերել, աղաջում եմ ամենիդ, կերակուր ընդունեցէք, նոյն իսկ ձեր աղատութեան համար։ Ճեզնից մէկի գլխիցը մի մազ անգամ չի պակասի»։ Այս ասաց՝ հացն առաւ, ամենի առաջ գոհացաւ Աստուածանից և սկսաւ ուտել։ Այս օրինակից ամենին էլ քաջալերուեցան և կերան։ Նաւումն ընդամենը երկու հարիւր եօթանասուն և վեց հոգի էին։ Հացն ուտելուց յետոյ, նաւի մէջ եղած ցորենը ծովը թափեցին, որպէսզի թեթև լինի և որևէ ձեռով ափ կարողանայ հանել իրանց։

4. (39—44)

Երբոր լուսը բացուեց, տեսան ցամաքը, բայց չգիտէին թէ ինչ երկիր է, ուստի մտածեցին նաւը մի ձեռով ափ հասցնել։ Խակոյն խարիսխների պարան-

ները կտրեցին. զեկերի կապերը թուլացրեցին. առագաստը պարզեցին քամու ուղղութեամբ, որ նաւը դէպի ափը մղէ։ Այսպէս հասան մի տեղ, որ երկու կողմից էլ ծով էր, բայց խորը չէր—նաւի առաջին մասը խրուեց ծանծաղուտի մէջ, իսկ ետեի մասը խորտակուեց կատաղի ալիքներից։ Նաւը կործանման վտանգի մէջ էր. Զօրականները խորհուրդ արին կապեալներին սպանել, որ մի գուցէ լողան և փախչեն։ Հարիւրապետը Պօղոսին ազատելու համար այս շար խորհուրդը խափանեց—հրամայեց լող տուողներին ջուրն ընկնել և ցամաք դուրս գալ, իսկ լող շիմացողներն էլ, որը մի տախտակի կտոր, որը մի ուրիշ բան բռնած՝ ամենին էլ աղատուեցան և ցամաք դուրս եկան։

5. (Եջ. 1—10)

Տեղացիներից հարց ու փորձ արին և խմացան, որ այդ ցամաքը Մելիտինէ կղզին է, որ այժմ Մալտա է կոչւում։ Եղանակը ցուրտ էր և անձրևային. կղզու ընակիչները սիրով ընդունեցին մեզ. խարոյկ վառեցին, որ տաքանան։ Պօղոսը խորի էր հաւափառեցին, որ տաքանան։ Պօղոսը լուսի էր հաւաքառում և կրակի վրայ դարսում. յանկարծ մի սառած իժ տաքանալով՝ առաքեալի ճեռից կախ ընկաւ։ Երբ բնակիչներն այս բանը տեսան, իրար ասում էին. «Այս մարդն անշուշտ մարդասպան կլինի, սա թէ իսեղուելուց ազատուեց, բայց արդարադատութիւնը չի թողնում ապրելու»։ Պօղոսը թափ տուեց ձեռը, օձը կրակի մէջ ընկաւ—իրան ոչինչ վնաս չե-

զաւ: Կղզու բնակիչները կարծում էին, թէ Պօղոսի մարմինը կուշի թոյնի ազգեցութիւնից, յանկարծ վայր կընկնի և կմեռնի: Բայց երբ տեսան ոչինչ վատ հետևանք չունեցաւ, խօսքերը վոխեցին և ասացին. «Սա մի աստուած կլինի»: Կղզու տէրը, որի անունը Պօղլիոս էր, երբ լսեց Պօղոսի հետ պատահած անցքը, խղճաց նրանց, սիրով ընդունեց իւր մօտ և երեք օր հովանաւորեց ամենին էլ մինչև որ իրանց համար մի տեղ գտան: Պօղլիոսի հայրը ջերմով և թանչով պառկած՝ հիւանդ էր: Պօղոսը նրա մօտ եկաւ, աղօթեց, ձեռը վրան դրաւ և բժշկեց: Այդ եղելութիւնն իսկոյն տարածուեց կղզում. հիւանդներ էին բերում. Պօղոսը բոլորին էլ բժշկեց: Կղզու բնակիչներն առաքեալին մեծ պատիւներ էին տալիս, իսկ հեռանալիս՝ ճանապարհի պաշար տուին:

6. (11—16)

Երեք ամսից յետոյ նստեցան մի Աղէքսանդրացի նաւ, որ ձմեռն այն կղզումն էր անցկացրել: Այստեղից նաւեցին գէպի հիւսիս և եկան Սիրակուղա քաղաքը, մի լաւ նաւահանգիստ՝ Սիցիլիա կղզու արևելիան ավում: Երեք օր այստեղ մնացին, որովհետեւ նաւը բեռներ ունէր գատարկելու: Այնտեղից գնացին չոեգիոն. անցան Սիցիլիայի խութերը և մի օրից յետոյ, երբ հարաւի յաջող քամին փչեց, երկրորդ օրը հասան Պատիոլուս քաղաքը: Այստեղ քրիստոնեաների հանդիպեցին, որոնք խնդրեցին մի

շաբաթ իրանց մօտ մնալ: Յուլիոս հարիւրապետն իրաւոնք տուաւ նրանց: Եօթն օրուայ հանգստից յետոյ ճանապարհ ընկան գէպի չուովմ: Արդէն Պատիոլուսում եղած ժամանակ իմաց էին տուել չուովմի քրիստոնեաներին Պօղոսի գալստեան մասին, այս պատճառով շատերն ընդ յառաջ էին եկել, ոմանք մինչև Ապիկայի որգոստայնը, իսկ ոմանք էլ մինչև ծովագինեայ Երեք կրպակները: Երբ Պօղոսը տեսաւ նրանց, զրհացաւ Աստուածանից և քաջալերուեց, որ երեք տարի սրանից առաջ գրած թուղթը հաւատացեալներին սիրոյ և միաբանութեան ողի է ներշնչել: Երբ մօտաւորապէս 61-ի մարտին չուովմ հասաւ, հարիւրապետը կապեալներին զօրապետին յանձնեց, իսկ Պօղոսին միւսների հետ զօրանոց չուզարկեց, այլ մի մասնաւոր բնակարան՝ իւր պահապան զինուորի հսկողութեան ներբոյ: Քստ հոգվմէական սովորութեան նրա ձեռը զլթայուած էր:

Թ. ա. Հոմ. ը. 31. «Եթէ Աստուած՝ ի մեր կոյս է, ով իցէ մեր հակառակ»:

I. թ. Յովհ. ե. 4. «Եւ այս է... յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր»:

Մաթ. ե. 10. Երանի՛, որ հալածեալ իցեն վասն արդարութեան, գե նոցա է արգայութիւն երկնից»:

Պ Օ Ղ Ա Ս Է Հ Թ Ա Վ Մ Ո Ւ Թ

1. (Ծ. 17—22)

Հռովմ՝ հասնելուց երեք օր յետոյ՝ Պօղոսը իւր մօտ կանչեց հրէաների զլխաւորներին և ասաց նրանց. «Արք եղբարք, ես ժողովրդի կամ հայրենի կրօնի հակառակ ոչինչ շեմ զործալ, գուցէ այդպիսի լուրեր գիտմամբ տարածած լինեն ձեր մէջ. ճիշտ է որ ես Երուսաղէմում բռնուեցայ և մատնուեցայ Հռովմայեցիների ձեռք: Փելիքս և նրա յաջորդ Փեստոս կուսակալների առաջ հարց ու փորձ արին ինձ, բայց մահու արժանի պատիժ կրելու յանցանք շգտան իմ մէջ, ուստի կամեցան ինձ արձակել: Բայց հրէաները բողոքեցին ինձ աղատութիւն տալու դէմ և ցանկանուել էին նորոգել գատը՝ նոր հարց ու փորձ անել տալու ինձ Երուսաղէմում: Կուսակալ Փեստոսն էլ հակառակ չէր այս բանին: Ես չէի կարող լոել, ուստի ստիպուեցայ կայսեր բողոքելու, բայց ոչ թէ իմ ազգիցը շարախօսելու: Որովհետեւ կինին մարդիկ, որոնք ձեր մտքերը կարտ են պատորել և արատ գնել իմ հայրենասիրութեան վրայ, այս պատճառով էլ ես ձեզ ինձ մօտ կանչեցի, որ ձեզ հետ խօսեմ և եթէ հաւատ կընծայէք ինձ, իմ գատի մանրամասնութեան հետ կծանօթացնեմ—իսրայէլի յուսոյ համար եմ ես այս շղթան կրում: Նրանք պա-

տասխանեցին և ասացին. «Քո մասին մենք չըշատանից ոչ թուղթ ենք ստացել և ոչ եղբայրներից մինը, իմասնաւորի եկել, պատմել է մեզ որեէ չար բան: Քո բռնած դիրքը դէպի հրէութիւնը մեզ շատ է հետաքրքրում, մենք քո մասին տեղեկութիւն, ունինք, այս պատճառով ցանկալի էր քեզնից լսել, թէ ինչ նպատակներ ունիս, ինչ սկզբունքների են հետեւում: Մենք լսել ենք այն նազովրեցու աղանդի մասին, որին զու պատիքանում ես, որ հրէաները ամեն տեղ հակառակում են քեզ այս խնդրում, այս պատճառով էլ զարմանալու չի լինի, եթէ կասկածանքով վերաբերուելու լինէինք դէպի քեզ»:

2. (Ծ. 23—29)

Սրանից յետոյ մի օր որոշեցին և այն որոշած օրը շատերը եկան Պօղոսի մօտ: Նա պատմում էր նրանց Աստուծու արքայութեան մասին և քարոզում էր խաչեալ Յիսուսի մասին. առաւօտից մինչև երեկոյ մարգարէներից և Մովսէսի օրէնքներից վկայութիւններ էր բերում և համոզում էր նրանց, որ Յիսուսը սպասուած ճշմարիտ Քրիստոսն է: Ոմանք հաւատացին Պօղոսի խօսքերին, իսկ ոմանք՝ ոչ, այնպէս՝ ինչպէս Ահտիոքում, Պիսիդիայում և Թէսաղոնիկէում պատահեց: Անհամաձայնութիւն յառաջացաւ ունկնդիրների մէջ՝ այն աստիճան, որ նոյն իսկ Պօղոսի խօսքերին հաւատացողներին չյաջողուեց քրիստոնեայ դարձնել՝ մանաւանդ աւելի խանգարուեց զործը, երբ դուրս գնալիս առաքեալը հետևեալ շանդիմանական խօս-

քերն ասաց. «Սուրբ Հոգին Եսայի մարզաբէն ձեռ-
քով մեր հայրերի հետ խօսեց և ասաց—զնա ժողո-
վրդի մօտ և ասա, դուք ձեր ականջներով կլաք,
բայց չէք հասկանայ, դուք ձեր աշքերով կտեսնէք,
բայց չէք ճանաշի: Որովհետև այս ժողովրդի սիրտը
թանձրացաւ. անանջներով ծանր են բում և աշքե-
րը խփեցին, որ մի գուցէ աշքով տեսնեն, ականջ-
ներով լին և սրտով զգան, յետ դառնան և եռ բր-
ժշկեմ նրանց: Այժմ յայտնում եմ ձեզ, որ Աստո-
ծու փրկութիւնը հեթանոսների համար ուղարկուե-
ցաւ և նրանք կլսեն»:


3. (30—32)

Պօղոսի գատաստանի գործը երկարեց. նա մի
տուն վարձեց և այնտեղ երկու ամբողջ տարի վար-
ձով ապրում էր: Իւր մօտ եկողներին սիրով էր ըն-
դունում. քարոզում էր Աստուծու արքայութեան մա-
սին և ամենայն համարձակութեամբ ուսուցանում էր
Յիսուս Քրիստոսի մասին:

Յովհ. ա. 11 և 12. «Յիսուն եկն և լուբքն զնա ոչ
ընկալան, իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն
որդիս Աստուծոյ լինել:

Թ. ա. Դադ. դ. 26. «Քանդի ամեներին որդիք Աս-
տուծոյ էք հաւատովք՝ ի Յիսուս Քրիստոս: Որք միանդամ
՚ի Քրիստոս մկրտչութեամբ, զբրիստոս զգեցիալ էք»:

Թ. ա. Հոմ. ը. 14. «Զի որ . . . հոգւովն Աստուծոյ
վարին՝ նոքա և որդիք Աստուծոյ:







00

1053

002 8101

Հ

1053



